



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

925

613  
F-82

2010

2002

613

F-82

ՊՈՆՏԻ ԲՈՒԺ

# ՈՒՍՈՒՄՆ

Ա.Ա.Դ.Զ.Պ.Հ.Հ.Խ.Թ.Ե.Ա.Ն

ԹԱՐԴ-ՄԱՆՈՒԹ Ի Խ Ա-Ջ-Խ-Ե-Ե-Ց

S F I B O

Ի Տպարանի Համբ. Լնդիանեանց և ընկ.

1880

Հ. Ա. գրադարանի հայոց  
ԱՐ

610  
66-Բ0

ԴՈՒՅՕՐ ԲՈԿԻ

613

F-82

## ԱՐԴՈՒՅՈՒՆ

### ԱՐԴՈՒՅՈՒՆ

Տպագործություն Թումանյան Գրադարան

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ ՌԱԽԵՐԵՆԻՑ

101/1  
101/3

Տ Փ Ի Խ

Ի Տպարանի Համբ. Էնֆիաձեան և ընկ.

1880



ԿԵՆԱՅ ԵՒ ԱՌՈՂՉՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ.

Վաղաց (ՁԴ. դմ) ՅԱՎԵԱՂ ԳԱԽ ԾԱՌ ԿԱ Ք Ք  
ԼԻԿՆԵԼ ՏՐՈՒՐԵՐԻ ՆԱԽԱՎ ՊԵՐԵՄԵՆԵՐ (ԵՐ. 2), ՆԻՎԹԵՐԻ  
ՔՈՐԱՆԱԿՈՎԹԻՆ, ԱՆՆԴԱՌԵԹԻՒՆ, ՀԱՎԵՆԱ Վ. Ք  
Ա. Ա. Ր Ե Ա Ա Ն Ա Ռ Ո Ր Վ Ք Բ Հ Ա (ԵՐ. 6). ԿԵՐԱԿՐԱՅԻՆ ԱՎ  
ՔԵՐ, ԱՆՆԴԱՌՈՎԹԵԱՄ ՄԻՀՆՈՒՆԵՐ ԿԵՐԱԿՐԻ ԿԱՌԱՋ: ՔԱՂ  
Ա Ճ Ա Ր Ա Վ Ա Վ Ա Վ Ա Վ Ա Վ Ա Վ Ա Վ Ա Վ Ա Վ Ա Վ  
(ԵՐ. 10). ՉՈՎՐ Հ (ԵՐ. 11), ԳԱՐԵՋՈՎՐ  
Ա. Ը Ր Ե Լ Ի Ա (ԵՐ. 14). Վ Ա Ն Կ Ա Վ Ե Լ Ի Ն Հ Ա Ն Կ Ե Ր Ը  
Բ. Կ Ա Վ Ե Լ Ի Ա (ԵՐ. 14). Վ Ա Ն Կ Ա Վ Ե Լ Ի Ն Հ Ա Ն Կ Ե Ր Ը  
(ԵՐ. 14),  
Դ. Վ Ա Ն Կ Ա Վ Ե Լ Ի Ա (ԵՐ. 19). Վ Ա Ն Կ Ա Վ Ե Լ Ի Ա (ԵՐ. 21).  
Ե. Վ Ա Ն Կ Ա Վ Ե Լ Ի Ա (ԵՐ. 28).  
Զ. Վ Ա Ն Կ Ա Վ Ե Լ Ի Ա (ԵՐ. 31). Հ Ա Շ Ա Ն Ա Մ Ի Կ Ա Վ Ե Լ Ի  
Ր Ի Գ պ ա տ ր ա ս տ ա ծ տ ե լ ի ք ն ե ր, հ ա ց (ԵՐ. 36). պ ա տ ի ճ ա  
ւ ո ր ո ւ ն դ ե ղ է ն, ս ի ս ե ռ, ո ս պ, լ ո ր ի ա ն ե ր (ԵՐ. 38). գ ե մ ն ս  
խ ը ն ձ օ ր (ԵՐ. 40), բ ա ն ջ ա ր ե ղ է ն ք ա ռ հ ա ս ա ր ա կ (ԵՐ. 42).  
ս ո ւ ն կ ե ր (ԵՐ. 43), պ ա տ ո ղ ն ե ր (ԵՐ. 44). վ ա յ ա ն ե ր  
մ ա ն կ ա յ ա ն ե ր (ԵՐ. 45), ա ղ (ԵՐ. 46), ի ւ ղ (ԵՐ. 47),  
շ ա ք ա ր (ԵՐ. 48), ք ա ց ա խ (ԵՐ. 49), հ ա տ փ ւ ո ր հ ա մ ե ն ն ե ր  
(ԵՐ. 50), ո գ ե լ ի ց ը մ պ ե լ ի ք ն ե ր (ԵՐ. 50), ս ո ւ ր մ ա կ ա յ ա ն  
շ ո կ ո լ ա ղ (ԵՐ. 51). Ո ւ ր է լ ւ ա յ ա ն ե ր ի ք ն ե ր (ԵՐ. 51).  
Ո ւ տ ե լ ի ք ն ե ր ի հ ե տ ե ղ ա ծ թ ի ւ ն ա ւ ո ր ի ս ա ռ ն ո ւ ր դ ն ե ր,  
մ ա ր ս ո ղ ա կ ա ն գ ո ր ծ ա ր ա ն ն ե ր ի պ ա հ ա պ ա ն ո ւ թ ի ւ ն ը.

Բ. Շ Ա Ն Հ Ա Վ Ա Կ Ա Վ Ե Լ Կ Ա Վ Ե Լ Վ Ա Մ  
օ դ (ԵՐ. 59), օ դի մ ա ք ր ո ւ մ ը (ԵՐ. 67), Շ Ա Ն Վ Ա Դ Ա Վ Ա Ն Ե Ր Ա  
ն ո ր ա ն ց պ ա հ ա պ ա ն ո ւ թ ի ւ ն ը (ԵՐ. 67), կ ե ղ ծ մ ա հ Ա Ե Ե ղ ճ ա  
մ ա հ (ԵՐ. 70), մ ե ռ ե ա լ կ ա ր ծ ե ց ե ա լ ն ե ր ի ն կ ե ն դ ա ն ա ց ն ւ ո ւ  
կ ա ն ո ն ն ե ր (ջ ր ա ն ե ղ ն ե ր ի, կ ա խ ե ա լ ն ե ր ի, չ ե ղ ճ ա մ ա հ ն ե ր ի).

16/49

Ա. 102504

018  
05-88

# Ժ Ա Վ Ա Խ Ա Վ Ա

## Մ Ա Յ Ա Խ Ա Վ Ա Խ Ա Վ Ա Խ Ա Վ Ա Խ

Дозволено цензурою Тифлисъ 1879 г. 3-го ноября.

Վ Ա Հ Ա Վ Ա Խ Ա Վ Ա Խ Ա Վ Ա Խ Ա Վ Ա Խ

8 Ա Ն Կ

0081

Ժ Ա Վ Ա Խ Ա Վ Ա Խ Ա Վ Ա Խ Ա Վ Ա Խ

Պատմություն մասնակիութեան մասնակիութեան

Դ. Արեան մաքրուիլը (եր. 74), թռչերի,  
մորթու, երիկամունքների և լեարդի միջոցաւ.  
Դ. Մորթու հոգատարութիւնը (եր. 76):  
վանաներ, լուացմունքներ, ցրտահարութիւն,  
Արակ: Եարժիշտոքարժանին ոգատարութիւնը  
(եր. 80), կամաւոր շարժումներ, մարմամարզութիւն,  
դաշնական դեմքներ, բնողանքանը (եր. 85),  
մարմին առանձին մասերի (եր. 88),  
աղու կամքի գործարանների ոգատարութիւնը  
(եր. 90).  
(18. դաս. Գլուխութեան հոգատարութիւնը (եր. 91).

Բ. Աւուրութեան աշխատավորութիւնը (եր.  
95), աջքամանջեթիթ շաշափելիք: Համարութիւնը  
աշխատավորութիւնը (եր. 96), աշխատավորութիւնը  
թիւնը (եր. 101), կոկորդիոյ բառ ուսւյու մաքրութիւնը  
(19. Զբաղմունքներին հանդապահութեան հանդապահութեան  
առաջնական համար (եր. 102). Վառաւոր աշխատավորութիւնը (մա-  
մանակ): արթաքին զգայարանքների կամ կոկորդի լարման  
ժամանակ: անմաքուր օդի մէջ, թոյների (նետու) սպասիկ  
տաքութեանց ցրտիկ: խնամաւութեան մէջ, նստական  
կորացած կամ կանգնած դրաւթեամբ աշխատելու ժամա-  
նակ:

Ծ. Բնակութեան ուշաց համար (եր. 107), բնակարան, տեղ և լիլմա:  
Հաւաքառ մասու առ խոր հաւաքառ վրա (եր. 108): Տարդութեանը  
մարդու ճամասը (եր. 113): Յարդի նույնականական շնացա-  
ռայածամարդի միջմայսկան ծագի յանան (եր. 117): Հան-  
(յանանական ճամասը, ինչպատճառ միջմայսկան) դամումայ-

## ՈՒՍՈՒՄՆ ԱՌՈՂՋԱՊԱ- ՀՈՒԹԵԱՆ

(ՊԱՀԵՑՈՂԱՍԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՒՆԵՐ)

Անձաց եւ առողջութեան կանո-  
ներ.

Ամենայն մարդ պէտք է իմանայ թէ իւր  
մարմնի համար ինչ բանն է օգտակար կամ վնասա-  
կար: Միսայն այդ բանի զիտենալն է մարդուն կարո-  
ղութիւն տալիս հիւանդութիւններից կամ նոյն իսկ  
վաղահաս մահից փախչելու: Զափաղանց ռժուար է  
հիւանդութեանների բժշկելը, ուն ևէ նրանցից նախադգու-  
շանալը: Պարտ ու պատշաճ կերպիւ մեր մարմննը  
խնամելու համար մենք պէտք է տեղեակ լինենք. 1)  
կեանքի համար անհրաժեշտ պայմաններին (սորանց  
պատկանում են օդը, ջուրը, կերակուրը և յոյսը,

ջերմութիւնը), 2) կազմուածքի այն գործարանների և գործողութեանց, որոնք ծառայում են մննդառութեան համար (նիւթերի փոխանակութիւն) և զըլս խաւորաբար արեան, կենաց աղբխրին, են վերաբերվում, 3) այն օգտակար և վեսասկար աղղեցութեանց, որ արտաքին աշխարհը կարողէ ունենալ մեր մարմնի վրայ (կլիման, երկիրը, եղանակը, բնակարանը, հանդերձը, զբաղմունքը և այլն): Անսասակար աղղեցութեանց էլ վարժութեան կամ, ինչպէս ասում են, Եփութ նորանցում, մեր մարմնը կարողէ միայն աստիճանաբար, այն էլ երբէք ոչ բոլորին:

Բայց մարդս ինչպէս մտաւոր գոյութիւն, պէտք է հոգայ ոչ միայն ֆիդիքական, այլ և հոգեոր առողջութեան համար, իսկ դորա համար նա անհըսրաժեշտ պէտք է նշնակէս դիտենայ ինչկերպ վարուել հոգեոր կենաց գործիքների հետ: Սորան վերաբերում են, ամէնից առաջ, Գւեն ռուդու ջրդերի հետ, այնույետ պատրաստեանց Գրշենէն և նօսութ Գրշենէն: Նոքա բոլորը կանոնաւոր մննդառութիւն և պատշաճաւոր վարժութիւն են պահանջում:

**Կեանքի պիտոյքներ և նորա պայմաններ.**

Այն հիմնական օրէնքը, որին մարդ պէտք է հետևի կեանք և առողջութիւն պահպանելու համար, կարող է արտայցած լինել այսպէս.

Անդառութիւնը (նիւթերի փոխանական ա-

կութիւնը) ող է առ է կանոնաւոր կերպովընթան այ, և գորան համար անհրաժեշտ գործիքն երբ պէտք է բնական գրութեան մէջ գանուին:

Երբ դադարումէ նիւթերի փոխանակութիւնը, վայ է համնում ճակ, իսկ նիւթերի փոխանակութեան խանգարումները հիւանդաններ են բերում:

Որովհետեւ նիւթերի փոխանակութիւնը կատարվումէ արեան օգնութեամբ, ուրեմն հասկանալի է՝ որ այդ աղջիւ հեղանիւթը, կենսական աղբիրը, ամենազդուշաւոր հոգացողութիւն է պահանջում: Այդ պատճառաւ հարկաւոր է միշտ հոգաւարիւնի պարտութշաճ քանակութեան և որակութեան մասին:

Բաւականաշափ քանակութեամբ լաւ արիւն ունենալու համար անհրաժեշտ է.

1) **Այնպիսի նիւթեր հասանել արեան, որոնցից բազմած է նաև առ հասարաւ ներ մարմնը, միայն այդ դիմուածում արիւնը կարող է մարմնի իւրաքանչիւր մասին տալայն նիւթերը, որոնք անհրաժեշտ են նորա նորոգման համար: Այդ նիւթերը արիւնի մէջ են անցնում կերակրից, մարսողական գործողութեան օգնութեամբ:**

2) **Այսուհասութեան համար անդեպէս չում մինչև անգամ վասական նիւթերը, ունակ է հասարաւութեան արեան միջեց: Արեան մէջ այդ տեսակ նիւթեր բաւական շատ են պարունակում, որովհետեւ նա անդադար իւր մէջ է ընդունում: բոլոր գործարանների վչացած, անպէտք դարձած բաղադրիչ մասերը: Այդ նիւթերը**

հեռացումը, հետևաբար արեան մաքրումը, կատարվումէ թոքերի, լեարդի, երիկամնւնքների և մորթու միջոցաւ։ Այս յիշած գործիքների աշխատութիւնը կատարվում է առանց մեր մասնակցութեան, սակայն մենք կարող ենք նպաստել նորան։

Բայց բաւականաչափ քանակութեամբ լուարիւն ունենալը մեզշատ փոքր օգուտ կըբերէր, թէ որ այդ արիւնը արագաբար չհոսէր մարմնի բոլոր մասերով։ Այդ մասին ահա մի ուրիշ հիմնական պայման։

**Արեան շրջանառութիւնը**, որ այնքան կարենը կեանքի և առողջութեան համար, պէտք է կանոնաւոր կերպով ահա անուի։

Թիեւ արեան շրջանառութիւնը կատարվում է կատարելապէս ազատ մեր կամքից, բայց և այնպէս մենք կարող ենք ազդել նորա վերայ, նորան անհրաժեշտ գործիքները (մանաւանդ սիրտն) փշանաւուց պաշտպանելով և պահպանելով (շարժմամբ, ուժգին շնչառութեամբ) այդ գործիքների գործունէութիւնը։

Լաւ, անարգել շրջան առնողարիւնով մարմնի սննդառութիւնը կանոնաւոր կերպով ընթառնալու համար, հարկաւոր է դեռ ևս պարտուազատաշաճ ջերմութեան աստիճան, 30 ° ֆրանցի ջերմութեան նման, գոյանում է վառուող նիւթից և այրումը պահող գազից (թթուածնեց)։ Մարմնի ջերմութիւնը զլիսաւոր կերպով արծարծվում է արեան մէջ։ այս

ըելի նիւթը ստացվում է մասնաւորապէս կերակուրներից, մասնաւորապէս մարմնի զանազան մասերի գործածած նիւթերից։ Այդ նիւթի այրուելու համար հարկաւոր թթուածնը մենք թոքերի միջոցաւ ենք ստանում, նորանցմով մթնոլորդային լաւօդ ներս չնշելով։ Եւ այդպէս ահա կեանքի մի պայման եւս։

**Անգաղար, օր և գիշեր, շնչել լաւ, մաքուր օդ և շնչառութեան գործիքները պահանջները սոքա են։ մի կողմանէ, որպէս զի օդը անարգել մինչ շնչափողի վերջաւորութեան համնէր, հետևաբար մինչ թոքային փամփուշափներին, միւս կողմանէ, որպէս զի արիւնը արագաբար հոսէր թոքերի միջով։**

**Մարդուս իշխանութեան ներքոյ է յիշեալ բոլոր կենսական գործողութեանց և նոցա գործիքների պահպանել և խնամելը։ Նմանապէս և նորա իշխանութեան ներքոյ է գործիքների մեծամասնութեան կատարելազործելը։**

Դորան կարելի է հասնել գործեների նրէնուո՞ն և երկարագեց գործունեալեամբ, որովհետեւ այդ ժամանակ սաստկամումէ արեան գնացքը, նիւթերի փոխանակութիւնը և գործիքների մէջ ուժ զարգանալը։ Բայց սակայն խիստ հարկաւոր է յիշել, որ գործիքների գործունէութեան սաստկանալը պէտք տառիթանալու լինի, ինչպէս ուժի, նոյնպէս և աւու

զութեան վերաբերութեամբ, նա պէտք է կանոնաւ որ կատարուի և համապատասխան հանգստութիւներ ունենայ: Յանկարծահաս, խիստ ուժգին և խիստ երկարատև լարումը ոչ թէ ամրայնում, այլ թղթեցնում է, անդամալուծութիւն է պատճառում: Այդ բանը մանաւանդ հարկաւոր է ջղերի, ուղեղի և նմանապէս մկանուքների վերաբերութեամբ: Սովորաբար մեր մէջ արտայայտուող զբացումները ցոյց են տալիս թէ լարումը որքան կարելի է շարունակել: Այդ զբացումները արտայայտվում են դադրածութեամբ և տկարութեամբ, յագեցմամբ և զղուանքով: Խիստ երկարատև լարումները չափազանց լարեալ գործիքների թուլացում և անդամալուծութիւն կը պատճառեն: Այդ պատճառուած գործունեութեան և հանգստաւթեան չտոնաւուրը ջոփոխութեանը նրմանադէս կազմում է առողջութեան նշանաւոր պայմաններից մէկը:

### Ա. ԱՐԵԱՆ ՆՈՐՈԳՈՒՄ

Անդարար նիւթեր, կերակուր, կերակրի պաշանջ:

Արիւնը, իւր պահպանութեան համար, պաշանջումէ, բռլոր այն նիւթերը, որոնցից զոյացած է ինչպէս խոկ ինքը, նմանապէս և մեր մարմինը ընդհանրապէս: Այդ նիւթերը անուանվում էն անընդուրար նիւթեր: Մենք գորանց հասանակ կերակրի մէջ առաջանաւում ենք արիւնը կերակուր: Այս մարսողական գործարանի կաղմութիւնն էլ խառնուրդ կերակրի անհրաժեշտութիւնն է ցոյց տալիս, առհասարակ ապացուցուած է, որ առողջ, աշխայիք կեանքի համար մենք հարկաւորութիւն ունինք կերակրի ջոփոխութեան: Ի՞նչ բանէն անհարաբար նիւթերը, անհարաբար նիւթերը: Մնադարար են մարմինի համար այն բոլոր նիւթերը, որոնք ոչ միայն կատարեալ նման են մեր արիւնը և մարմինը կազմողների հետ (այդպէս են օրինակ սպիտակաւուցային նիւթեր, իւղ, շաքար, հասարակ աղ, եր-

նայնիւ մարսողական դործողութեամբ պէտք է քիչ թէ շատ վերստին պատրաստուին, որպէս զի արեան մէջ անցնեն: Անհրաժեշտ նիւթեր և բաւականաշափ քանակութեամբ արիւնին հասցնելու համար, սննդեան միջոցների (կերակրային միջոցների) պատշաճաւոր ընտրութիւն է հարկաւոր: Այդ ընտրութիւնը հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ գիտենանք թէ ինչ սննդարար նիւթեր և ինչ քանակութեամբ են սպարունակվում իւրաքանչիւր կերակրային միջոցի մէջ: Առաւել հարկաւոր են կերակրային միջոցների սպիտակուցային, իւղային, օսլայտանա, շաքարախառ և աղային բաղադրիչ մասերը: Ամէնից առաւել պատշաճաւոր է մեր կերակուրը: Երբ նա խոտանութիւն է, այս բաղկացած է կենդանական և բուսական կերակրային միջոցներից, որովհետեւ այն ժամանակ սպիտակուցային և իւղարտադրիչ նիւթերը կանոնաւոր համեմատութեամբ են պարունակվում: Յիշաւի կենդանական կերակրի մէջ խիստ ասպիտակուց է պարունակվում, իսկ բուսականի մէջ իւղարտադրիչներ: Մեր մարսողական գործարանի կաղմութիւնն էլ խառնուրդ կերակրի անհրաժեշտութիւնն է ցոյց տալիս, առհասարակ ապացուցուած է, որ առողջ, աշխայիք կեանքի համար մենք հարկաւորութիւն ունինք կերակրի ջոփոխութեան: Ի՞նչ բանէն անհարաբար նիւթերը, անհարաբար նիւթերը: Մնադարար են մարմինի համար այն բոլոր նիւթերը, որոնք ոչ միայն կատարեալ նման են մեր արիւնը և մարմինը կազմողների հետ (այդպէս են օրինակ սպիտակաւուցային նիւթեր, իւղ, շաքար, հասարակ աղ, եր-

կաթ և այլն), այլ դորա հետ միասին ընդունակ են արիւնի փոխուել և գործազրուիլ ոստայնների կազմութեան համար, կամ ստանում են այդ ընդունակութիւնը մարսողական գործողութեան աղջեցութեան ներքոյ (այս. երբ մարսվում են): Համարեա ոչ մի սննդարար նիւթ մենք չենք ընդունում առ անձին, դրեթէ բոլորը ընդունվում են կենդանական և բուսական թագաւորութիւններից գոյացած բնական բաղադրութիւններով, այդ բաղադրութիւնները ասվում են հնդկան հիշոցներ, հերուստայն հիշոցներ կամ պարզաբար հերուստ: Կերակուրը որքան աւելի մոլոդար նիւթ է պարունակում, այնքան նա ասուան է, որքան հեշտ և շուտով են վերստին պատրաստվում այդ սննդարար նիւթերը մարսողական գործարանում, այնպէս որ այնտեղից կարող լինեն արդէն ուղղակի արեան մէջ մտնել, այնքան կերակուրը առաւել բիւրում է: Կերակուրը կարող է շատ սննդարար լինել, բայց միևնույն ժամանակ դժուարամարս, և ընդհա, կառակն, լիծ մասամբ մի քանի կերակրային միջոցներ խառնում են իրար հետ արուեստաբար և պատրաստում են զանազան կերպով մասնաւորապէս զիւրամարսութիւնը աւելացնելու, մասնաւորապէս առաւել ախտքելի ճաշկ տալու համար: Կերակրային միջոցների այդ տեսակ պատրաստած միաւորութիւնները ասվում են իռուպէներ: Սովորաբար նոցա վերայ համբաներ են աւելացնում (զլսաւորաբար հասարակ աղ), որով ոչ միայն բարելաւանումէ կերակրի ճաշակը, այլ և սաստկանումէ մարսողական հիւթերի արտադրութիւնը (թոքի, ստամոքսային հիւթի և այլն):

Բաղց և ծարաւը—երկու գեռ բաւականապէս չբացատրուած զգացմունքներ են, որոնք մեր մարմնի կերակրի և ըմպելեաց պահանջի վրայ են

մատնացոյց լինում: Այդ զգացմունքները մարսողական գործարանի որոշեալ մասերից են յառաջ գաւլիս: Ծալաւութիւններ, որ չորութեան և այրման ըզ գացմունք է որկորի մէջ, ծագում է ամբողջ մարմնի մէջ ջրի պակասութիւնից և զլիսաւորաբար կատիկային և որկորային լորձիւնութաղանթի չորութիւնից: Քաղցածութիւններ, որ գրգռում է մեղ կերակուրը ընդունել, մաշող և Ճնշող զգացմունք է ըստամոքսի մէջ, իսկ վերի աստիճաններում և աղեքների մէջ: Նա զլիսաւոր կերապով, ըստ երեցիթին, պատճառվում է մարսողական գործարանի դատարկութեամբ: Երկար միջոց անօժի մնացած մարդիկ սէտք է շատ զգուշութեամբ ուտեն և կերակրի բընական քանակութեանը վերադառնան աստիճանաւբար:

Աիւթերի կանոնաւոր փոխանակութիւնը պահպանելու համար անհրաժեշտ անհնդրատ նիւթերի քառական կանազան է, նայելով մարմնի պարունակութեան և կշռն, կլիմային և տարուայ եղանակներին, և մանաւանդ գործիքների իւրեանց գործունէութեան պատճառաւ ունեցած աւել կամ պահանջութեան նայելով: Մարմնական կամ հոգեկան մեծ լարումների ժամանակ մարմնը աւելի կերակուր է պահանջում, քան հանգստեան ժամանակ, այդպէս և հասակի ածելուց կամ որեիցէ ծանր հիւնդութիւնից առողջանալու ժամանակ: Խիստ սննդարաբ և հեշտ մարսուող խորտեկներից աւելի փոքր քանակութիւն է հարկաւոր, քան թէ քիչ

սննդարար և շատ անդիւրամարս նիւթեր պարունակող խորտիկներից:Առհասարակ մարդու ուժում է աւելի,քան որքան կարող է մարտել,և այդ մասին արտաթորութեանց մէջ միշտ սննդարար նիւթեր են պարունակում:

Չատ ուտել սովորելով մի մարդ կարող է ոչընչացնել կերակրի մի այնպիսի քանակութիւն, որը բաւական է 2—3 մարդոց համար: Երբեք հարկաւոր չէ պէտք եղածից աւելի ուտելու սովորել: Ինչ վերաբերում է նորան, թէ քոնի ռոգամ օրը պէտք է ուտել 3 անգամը աւաւել համապատասխան կն կազմուածքի պահանջմանց, միայն պէտք է ուշադրութիւն դարձնել, որ կերակրի ընդունելու ժամանակամիջոցների մէջ խիստ փոքր կամ խիստ արելի զանազանութիւններ չլինեն:

Այդպէս են անուանվում բոլոր հեղուկ նիւթերը, որոնք չվնասելով մեզ, կարող են ծարաւ յագեցնել: Նորա արեան և մարմին ջրային բաշղարիչ մասերի տեղն են բունում, որոնց մենք շարունակ վատնում ենք թռչերի, մորթու և երիկաշմունքների միջոցաւ: Բայց, բացի այդ, բոլոր ըմպելիները, մինչեւ անգամ ջուրը, այնպիսի սննդարար նիւթեր են պարունակում, որոնք կարող են մարմինի հաստատուն բաղադրիչ մասերի տեղն ել բոնել: Բոլոր ըմպելեաց մէջ միայն երկուսն են մարդու

համար անհրաժեշտ պահանջ կազմում: ջուրը և մանկական հասակում, կաթը: Վերջինս չափահատ սի համար էլ կարող է ծառայել ինչպէս ըմպելի, և դորա հետ միասին ինչպէս կերակուր: Այս կամ այն բաղադրիչ մասերի պարունակութեան նայած՝ ըեպելիքը բաժանվում են. չորսութեան չորսութեան (զովացուցիչներ), ինչպէս են ջուրը և թթուաշը մակելիները, ինչ և անտարտիկան, օր բուսական իւղալի սերմերից պատրաստած կաթի նմանող հեղանիւթը, հացի, հացի սերմերից և լորձինախառ, օվլայախառ նիւթերի (գարու, վարսակի, բրնձի, սադոի, սալէպի, կըտուահատի սերմերի) եփած ջուրը, շիճուկը, անտարտիկան, ինչպէս են կաթ, մսի ապուր, չոկոլադ, անշաղոսկութեան, ինչպէս են սուրճ, թէց, անանուխի, եղեսպակի ջուր, և առելցներ, ինչպէս է զինի և գարեջուր:

## Պուր

Առանց ջրի բնութեան մէջ կեանք չկայ.

Պուրը չափանց կարեոր, սաստիկ անհրաժեշտ սննդարար նիւթ է, որովհետեւ մեր մարմինը իւր մեծ մասամբը (<sup>1/3</sup>) ջրից է բաղկացած: Ոստայնական մեջ եղեալ գործողութեանց և նոյն ոստայնական յատկութեանց մեծամասնութիւնը նրանից է կախեալ և միայն նորա օգնութեամբն է հնարաւոր նիւթերի փոխանակութիւնը: Մենք անդադար երիշ կամունքների (մէզի), մորթու (բրտինք և մորթու արտաշնչութիւն), թոքերի (արտաշնչած օդ) և առցիքների (արտաթորութիւնք) միջոցաւ կորցնում ենք

ջրի բաւական նշանաւոր քանակութիւն (իւրաքանչ վեր օր մօտ 4 ֆունտ), հեղուկ և գազի ձեւրով։ Եթէ այդ մխուած ջուրը բաւականապէս չի փոխաւրինվում, այն ժամանակ ծարաւութեան զգացմունքը ցոյց է տալիս ոստայնների չորանալը։ Առողջութիւն միայն այն ժամանակ է հնարաւոր, երբ մեր մարմինը պարտ ու պատշաճ քանակութեամբ ջուր է մտնում։ Բնական պայմաններում ջրի խիստ առատութիւն չի կարող գումարուիլ մարմինի մէջ, որովհետեւ այդ առաւելյութիւնը անդադար մէզով և քրատինքով դուրս է ձգվում։ Բացի այդ, ջուրը իւր արտաշնչութեամբ մարմին մակերևոյթի վրայ նրա ջերմութիւնը միշտ մի բարձրութեան վերայ է պահում։ Ջրի անհրաժեշտ քանակութիւնը մենք մասամբ ըմբկեքների ձեռով ենք ստանում, մասամբ խորախիներում, որոնք մեծ մասամբ բաղկացած են ջրից (75—80 տոսկոս)։

**ԽՍՀՆԵՐԸ** համար մանաւանդ պիտանի է տղինքի և ջրերի շուռը, նա ոչ միայն համեղէ, այլ և օգտակար կրային աղեր է պարունակում։ Անձրեային և թորած ջուրը գուրքի են հանքային բաղադրիչ մասերից, և այդ մասին աղ աւելացնել են պահանջում (մանաւանդ հասարակ աղ), որպէս զի խմելու համար պիտանի լին։ Բացի հանքային նիւթերից, ջուրը գազեր էլ է պարունակում, որոնք ջրի եռացման և սառեցման ժամանակ ջոկվում են փամփուշիկների մեջ և ածխաթթու են։ Խմելու համար լաւ, առողջարար ջրի մասին հոգալով շատ հիւանդութիւններից կարելի է հախաղգուշանալ։ Եթէ խմելու համար լաւ ջուր գտնել անկարելի է, այն ժամանակ հարկաւոր է գտնուած վառ ջուրը խմելու պիշտինել։ Խմել դորան համել կարելի է եռացման միջոցաւ, բայց որովհետեւ եռացման ժամանակ ամբողջ օդը արտաքսվում է, որի պատճառաւ ջուրը անհամ է դառնում, ուստի պիտք է փակեալ ամանի մէջ խառնել նորան։ Ամենից առաւել պատշաճաւոր է վատ ջուրը քամեն նոր-այրած փայտային ածուխի փոշոյ միջով, որովհետեւ ածուխը հեղանիւթերից հոտաւոր, փառող և վատ ճաշակ ունեցող գործարանական նիւթերը խլելու յատկութիւն ունի։ Ջրի ճաշակ է բարձր համար նորա վրայ աւելացնում են քացախ, պտուղային թթու և քաղցր հիւթեր, գինի և ուրիշ ոգիաւոր հեղանիւթեր։ Այդ բոլոր խառնորդներն, իհարկէ, կարող են ջրին առաւել համեղ և զովարար դարձնել, բայց նորա չեն կարող խափանել վնասակար խառ-

ջուրը պիտք է հետևեալ պահանջներին բաւակառնացնի. նա պիտք է կատարեալ թափանցիկ և անգոյն լինի, բիւրեղանման պարզ և այնպէս էլ մնայօդի մէջ երկար կենալուց յետոյ էլ, նա պիտք է զովացնի և չունենայ ոչ հոտ և ոչ կողմնակի ծաշակ, ամառը պիտք է մթնոլորդային օդից ցուրտ, ձմեռը լինի։ Աղբիւրի նար ջուրը 6 մինչև 10° ըստ Ռ. բարեխառնութիւն ունի։ Խիստ ցուրտ ջուրը կարող է վնասակար լինել ստամբուի համար, մասնաւանդ թոյլ մարդու։

Մեր խմելի ջրի հետ եղած խորհուրդների պատճառաւ, այդ ջուրը կարող է ծանր հիւանդութեանց պատճառ լինել։ Առաւել կարող է վնասակար լինել արտաքսոցների և աղտեղութեանց խողովակների մօտից անցնող ջուրը։ Մաքուր, առողջարար ջրի մասին հոգալով շատ հիւանդութիւններից կարելի է հախաղգուշանալ։ Եթէ խմելու համար լաւ ջուր գտնել անկարելի է, այն ժամանակ հարկաւոր է գտնուած վառ ջուրը խմելու պիշտինել։ Խմել դորան համել կարելի է եռացման միջոցաւ, բայց որովհետեւ եռացման ժամանակ ամբողջ օդը արտաքսվում է, որի պատճառաւ ջուրը անհամ է դառնում, ուստի պիտք է փակեալ ամանի մէջ խառնել նորան։ Ամենից առաւել պատշաճաւոր է վատ ջուրը քամեն նոր-այրած փայտային ածուխի փոշոյ միջով, որովհետեւ ածուխը հեղանիւթերից հոտաւոր, փառող և վատ ճաշակ ունեցող գործարանական նիւթերը խլելու յատկութիւն ունի։ Ջրի ճաշակ է բարձր համար նորա վրայ աւելացնում են քացախ, պտուղային թթու և քաղցր հիւթեր, գինի և ուրիշ ոգիաւոր հեղանիւթեր։ Այդ բոլոր խառնորդներն, իհարկէ, կարող են ջրին առաւել համեղ և զովարար դարձնել, բայց նորա չեն կարող խափանել վնասակար խառ-

նուրդների ազդեցութիւնը, եթէ այնպիսիներ պարունակվում են ջրի մէջ:

### Գարեջուր

Գարեջուր ամէնից առաւել զովարար, ամէնից լաւ ծարաւ կոտրող ըմպելի է, ջրից յետոյ: Բայց այդ զլսաւոր կերպով վերաբերվում է միայն շատ թեթև, չափազանց քիչ ալկօհոլ պարունակող ըսպիտակ և սև գարեջրին, և անկարելի է միեւնոյնը ասել թունդ, զինւոյ ողիով հարուստ տեսակների համար: Բացի այդ, գարեջուրը թեթև սննդարար. մարտութեան մի փոքր նպաստող, արեան շրջանառութեան և ջղային գրութեան թեթև կերպով զբառող ըմպելի է:

Լուս Գարեջից պէտք է պահանջել, որ նա կատարեալ եփեկած, թափանցիկ լինէր, կանդնելուց մրուր չժողնէր, չունենար ոչ հոտած, ոչ թթու ճաշակ, մի փոքր մածուցիկ լինէր, ոչ ջրալի, գրշդուկուր, ոչ թէ արբեցնէր, սպիտակ, փոքրիկ-փամշ փուշիկաւոր փրփուր թողնէր, որը և չանչետանար խոկոյն, այլ գարեջրի երեսնն և անօթի պատերի վրայ մնար երկար ժամանակ:

Կաթը, սպիտակ արինը, ինչպէս անուանում են նորան, չափահասի համար կարող է ծառայել կերակրի տեղ էլ ըմպելեաց տեղ էլ միասին:

Ինքն ըստ ինքեան կարող է պահպանել մեր մարմինի սննդառութիւնը (նիւթերի փոխանակութիւնը), ոչովչետեւ պարունակում է այն բոլոր նիւթերը, որոնցից գոյացած են արիւնը և մարմինը: Երեխայի համար կաթը անպայման անհրաժեշտ է, դա է միակ, նորան պիտանի ուտելիքը: Ինչպէս յայտնի է, կաթը մի սպիտակ, անժամանցիկ, քաղցրը ճաշակով և հոտով հեղանիւթ է: Նա պարունակում է մինչ 33 պլոցինտ այնպիսի նիւթեր, որոնք կազմում են արիւնը և բաղկացած է ջրի մէջ հալած կազմենեց, շաքարից (կաթից) և արեան աղերից, այդ հալոցի մէջ լողում են կաթնային կամ կարագային գնդակիները, որոց իւղը նուրբ սպիտակացուցին թաղանթով շրջապատած է: Այդ գնդակիները կաթին սպիտակ գյոն և անժամանց կութիւն են տալիս, իսկ կաթի հանդիսա կեցած ժամանակ, ընդհանրապէս սերի սաստիկ շարժելուց, կաթնային գնդակիները պայթում են, կը պը չում են միմեանց և կազմում են կարագ, որ բաղկացած է իւղից կաղէնի, շաքարի և աղերի փոքր ինչ խառնութով: Իսկ կաթի մէջ լուծեալ նիւթերի մէծ մասը այդ ժամանակ մնում է հարոցին մէջ, այս կարագի շիճուկի, որ մի փոքր թթու է դարձած լինում: Կաթը օգի մէջ մնալով, մանաւանդ տաք տեղում և կայծակի ժամանակ, թթվավում և ժրարվում է: Ծրարի մէջ և երեսին եղեալ

պարդ, մի փոքր կանանչագոյն հեղանիւթը անուանվում է շիմուկ, իսկ ծրարները խառնոյ: Կաթի թը թուիլ և ծրարուիլ այս կերպով է կատարվում: օդի և ջերմութեան ազդեցութեան տակ կազէինը կաթեային շաքարի մէջ փոփոխութիւն է զոյացնում, որի պատճառաւ կաթնային շաքարը կաթնային թթուածի է փոխվում, այդ թթուածն էլ կապում է նատրին, որը լուծեալ դրութեան մէջ էր պահում կազէինը, ուստի այս վերջինս էլ տակ է նստում:

Լու կտելի նշանները յետագաներն են. նա պետի լինի սպիտակ, միայն մի փոքր կապտագոյն (չպիտի փայլի), մատերի արանքում իւղի պէս երևաց, հաճելի հոտ և կակուղ, քաղցր համ ունենայ, եռացնելուց երեսի վրայ պիտի փառ կազմուի: Լաւ կաթի մի կաթիլը մաքուր ջրի մէջ թափելուց, պէտք է ցած իջնի, իսկ եղունգի վրայ պէտք է կիսագնդի ձևով մնայ և չհոսի:

Կաթը թէւ ամենասննդարար, բայց ամենազիւրամարս կերակուր չէ: Որոշ ասելով նա ստամոքսի մէջ ստամոքսային թթու հեւթի ազդեցութեամբ ծրարվում է և խաճոյի մեծ կամ փոքրիկ կտորներ է կազմում: Եթէ կտորները մեծ, կարծր, իւղով շրջապատած են, այն ժամանակ ստամոքսային հիւթը վատ է թափանցում նոցա մէջ և նոցա լուծելու (մարսելու) համար երկար միջոց է պահանջում: Այդ մասին քիչ կազէին և կարագ ուստնեցող կաթը, առաւել շիմուկը, չափաղանց

դիւրամարս են լաւ իւղալի կաթից, թէւ այնքան սննդարար էլ չեն: Որպէս զի կաթը դիւրամարս լինի, պէտք է նորան փոքրիկ ումակերով խմել և նոյն ժամանակ հետը հաց ուտելի այն ժամանակ ստամոքսում ծրարուող կազէինը կարող է միայն խաչձոյի փոքրիկ կտորներ կազմել, որոնք ստամոքսային հիւթի համար դիւրաս թափանցելի և լուծանելի են: Թոյլ և հիւանդ ստամոքսի համար կաթը, ինչպէս կերակուր, բոլորովին պէտքական չէ:

Կաթի մննդարարութիւնը կախեալ է նորա միջի կազէինի սպիտակուցային նիւթի, կարագի (իւղի) և կաթնային շաքարի (չերմացուցիչ նիւթ և իւղարտաղը) պարունակութիւնից, Սպիտակուցային նիւթերից (որոց չետ կապուած են զլիստորաբար արեան հանքային բաշղիչ մասերը) կաթի մէջ պարունակվում է 10 մաս, իւղից 10 և շաքարից 20 մաս: Բոլորովին զանազան կաթնակերների կաթը միշտ միենոյն նիւթերից է բաշղացած, կաթի զանազան տեսակները տարբերվում են այս կամայն բաղադրիչ մասերի քանակութեամբը: Կաթի վերայ մեծ ազդեցութիւն ունի կաթ տուող կենդանու ուտելեաց որականութիւնն էլ. Մսային կերակրի ժամանակ կաթի քանակութիւնը խիստ շատ է լինում, քան բուսական կերակրի ժամանակ, մսային կերակրի ժամանակ իւղի և կազէինի պարունակութիւնն էլ է աւելանում:

Այլ և այլ կենդանիների կաթի հետ խառնվում են հոտաւէտ նիւթեր էլ, որոնք մորթային արտադրութեանց մէջ էլ են երեսում և կաթի հոտի ու համի մէջ մեծ տարբերութիւն են պատճառում: Կաթնակերների կաթը մարդկայինից նորանով է տարբերվում, որ առաջինը խիստ շատ կազէին և իւղ է պարունակում, վերջինը



խիստ շատ կաթնային շաքար, Մատակ իշխ կաթը շաքարի առատ պարունակութեամբը ամենից առաւել է նը-  
մանում մարդկային կաթին, կով կթելուց վերջում ստա-  
ցած կաթը միշտ աւելի հարուստ է իւղով, քան  
կթելու սկզբում ստցած բաժինները, Որովհետև  
կովի կաթը մի ֆունտում պարունակում է  $\frac{13}{5}$  լոտ  
սպիտակուցային նիւթեր,  $\frac{3}{10}$  լոտ կարագ և  $\frac{1}{5}$  լոտ  
կաթնային շաքար, իսկ չափահաս մշակը 24 ժամի ըն-  
թացքում պահանջում է գէթ 6—7 լոտ սպիտակուցային  
նիւթեր և 23 լոտ իւղ արտադրիչներ և իւղ. ուրեմն 4—5  
ֆունտ կաթը կծածկեն սպիտակուցի պահանջը, բայց  
հարկաւոր է աւելացնել դեռ 2 լոտ իւղ և 18 լոտ իւղ-  
արտադրիչներ (շաքար, օսլայ և այլն), որ պէս զի սնըն-  
դարար նիւթերի կատարեալ համապատասխան քանակու-  
թին ունենանք:

Կաթ ունեաւ ժամանակ պէտք է յիշել որ նա կա-  
րող է թթուել օդից, ջերմութիւնից և փոքրիկ գործարա-  
նաւոր գոյութիւնների (վերիօն, բակտերիա) ներկայու-  
թինից, հետևաբար պէտք է երկրիցն էլ զգուշանալ:  
Թթուածին պարունակող օղը արտաքսելու, և կազէինը  
թթուածին հետ միաւորիլը խափանելու, նոյնպէս և կա-  
թի մէջ պարունակուող գործարանաւոր գոյութիւնները  
մեռցնելու համար, պէտք է եռացնել կաթը (գոնէ օրը  
մի անգամ). Խուլ փակած թիթեղեայ տուփերի մէջ կա-  
թը պահպում է շատ երկար ժամանակ: Դորա համար  
տուփը (կամ շիշը) նոր կաթով լքցնում են մինչև ի բե-  
րան, տաքացնում են եռալու չափ և յետոյ խսկոյն էլ  
լինեմում են (կամ կնքում): Բացի այդ, նոյնպէս պահելու  
նպատակաւ, կաթի վրայ սպիտակ եղէզնեայ շաքար են  
աւելացնում և խառնուրդը գոլորչիացնում են (թանձ-  
րացրած կաթ): Սառնատան մէջ շատ լաւ կարող է  
մնալ կաթը: Կաթի ծրաբուիլը յետաձգվում է և երկած

խաթթու նատրի փոքրիկ խառնուրդով, որը կատարեալ  
անվեսա է:

Որովհետև կաթնային թթուն (մածունի մէջ) հե-  
տութեամբ լուծում է պղինձը և կապարը, որով խիստ  
թիւնաւոր կաթնա—թթու աղեր են գոյանում, ուստի եր-  
բէք չպէտք է կաթը պղինձեայ և կապարեայ անօթնե-  
րում պահել կաթ պահելու համար գլխաւորաբար պէտ-  
քական են ապակեայ և փայտեայ անօթներ, որովհետև  
կաւ է և երկաթէ անօթը նոյնպէս կարող է թունաւորել  
կաթին, թէ որ վատ, կապար պարունակող շիր ունենայ:  
Ծանոթութիւն: Կաթի բաղադրիչ մասերը. կարագ,  
կաղէին, հարոցք և շիմուկը, գործ են ածում կերակրի  
մէջ և առանձին էլ: Հարոցք և շիմուկը կաթ և խաճոյ  
պատրաստելուց են մնում: Դոքա արդէն այնքան սնըն-  
դարար միջոցներ չեն, ինչպէս կաթը, որովհետև նորա  
չափականց փոքր կարագ և կաղէին են պարունակում,  
այլ գլխաւորաբար կաթնային շաքար, կաթնային թթու  
և աղեր:

### Գ. կենդանական կերպարուր:

Կենդանական մննդարար միջոցների բաղադրիչը  
մասերը գլխաւորաբար սպիտակուցային մարմիններ  
են, որոնք գլխաւոր կերակրվ ծառայում են մեր մարմ-  
նի սատացների շինութեան համար: Բայց չնայելով  
գորան. կենդանային կերակրի մէջ իւղ արտադրիչնե-  
րի և ջերմացուցիչ նիւթերի մեծ պակասութիւն  
կայ, որոնք առատօրէն գանգում են բուսական կե-  
րակրի մէջ: Այդ պատճառաւ մեր մարմնի սննդա-  
ռութիւնը կատարեալ յաջողաբար է կատարվում  
միայն խառնուրդ կերակրով, որ բաղկացած է կեն-

գանական և բուսական նիւթերից: Միայն վայրենիւնների կերակուրը բաղկացած է լինում համարեա բաշուապէս միջոց: Ճարակ կամ ուրիշ իւղ աւելացրած վրէն: Մեր մարսողական գործարանը կազմուած չէ ոչ բացառապէս ինդանային, ոչ բացառապէս բուսական կերակուրների գործածութեան համար: Կենդանական սպիտակուցները սորա են. Տնիքալելանիւն, արեան ծրարուող բաղադրիչ մասը և մար զլիսաւոր բաղադրիչ մասը, սպիտակուց, գտնվում է արեան, մը կանունքային հիւթի ու ձուի «սփիտակուցի» մէջ, էաղիւն-կաթի (պանիր) և արեան մէջ, սօնին կամ դուգող — աճառների, ոսկորների, ջիլերի և ջլային թաղանթների մէջ: Կենդանային իւղերն են. Տեղ է տեղ, կաթի էտրագ, ձուի ուշուաց, ոսկորների միջի ասկրային ուղեղ (ծուծ): — Կենդանային իւղ արտադրիչներ և ջեռուցիչ նիւթեր են. կաթի միջի էանային շատար և էանային լլուտն, մելքը, որ պատրաստում են մեղուները ծաղկային փոշուց: Ոէ ինչ կերպով են (սպիտակուցի, կազէինի թէ այլ կերպերով) սպիտակուցային նիւթերը մեր մարմինը մտնում, այդ միենոյն է, նոյնը վերաբերվում է իւղերին էլ: Սփիտակուցային նիւթերը և կերակրի եւղերը մարսողութեամբ և արեան մէջ այնպէս պատրաստվում են վերաբին, որ կարող են ծառայել մարմին շինութեան և ջերմութիւն արծարծելու համար:

Իւշ անպատճառ պէտք է դտնուի մեր կերակրի մէջ, որովհետեւ նա անպայման անհրաժեշտ է մարմինի կազմութեան և պահպանութեան համար: Նա ոչ միայն մաս-

նակցում է սպայնների շինուածքին (մանաւանդ ջղերի, զիմի և մէջքի ուղեղի), այլ և մի քանի հարկաւոր մասերի համար իբրև ծածկոյթ է ծառայում, մարմինի զծագրութեանց գոլորչութիւն է տալիս, իւր ընդմութեայ խաւովը մարմին ներսը պաշտպանում է հարուածներից, ձնշումից, ծառայում է իբր ջերմութեան վատ հաղորդիչ (պաշտպանում է արտաքին ցրտից և զուրս չէ թողնում մարմինից նորա յատուկ տաքութիւնը) և վերջապէս, արեան մէջ այրուելով, մասնակցում է մարմինի ջերմութեան արծարծման: Իւղի տեղը միայն խիստ անկատար կերպով կարող են բոնել բուսական իւղ արտադրիչները (օսլայ, շաքար) և այս վերջինները մեծապէս զիւրամարս կարող են լինել միայն իւղ աւելացնելով:

## Մ ի ս:

Կերակրի մէջ մեր գործածած միջ կազմում է մեր մարմինի միսը և կմէէ կանոնաւոր ուտենք միսը (լաւ ծամել) իւղի և իւղաբարազրիչների պարտ ու պատշաճ քանակութեամբ հանդերձ, այն ժամանակ այդ տեսակ կերակուրը առաւել ոյժ է տալիս, քան որ և իցէ մի այլ կերակուր: Բարձրաստիշան կենդանեաց մաի վերայ, առաւել խոտակեր կաթնակերներինը, կարելի է նայել իբրև պնդացած արիւնի, որովհետեւ արեան և մաի մէջ համարեա միակերպ բաղադրիչ մտներ են գանվում: Միսը պարունակում է 59 պրօցենտ արիւն կազմող նիւթեր: Ինչպէս որ մասկեր կենդանիները իրենց մկանունքային ուժով և շարժողութեանց արագութեամբ

գերազանցում են խոտակերներից, այդպէս և այն  
ազգերը, որ գլխաւորաբար մային կերակրով են ապ-  
րում (անգլիացիք), աշխուժութեամբ, մկանունքային  
ուժով գերազանցում են գլխաւորաբար բուսական  
կերակուներով ապրող ազգութիւններից (Հնդկա-  
ցիներ):

Մեր կերած մսի մէջ առաւել նշանաւոր են  
երիտ բաղադրիչ մասեր. մկանունքային մանրաթելե-  
րը և մկանունքային հիւթը, որ գտնվում է մանրա-  
թելերի մէջ և նոցա արանքներում, և որ մայն  
տալիս է նորա յատուկ ձաշակը և հոտը: Այդ մա-  
սերի մէկի բացակայութիւնից միսը կորցնում է իւր  
բոլոր մննդարաբութեան ոյժը: Բայց այդ միսը պա-  
րունակում է բջիջային և ջլային հիւսուածներ, իւղ,  
անօթներ, ջղեր, արիւն և աւեշի: Էտպէս բոլոր  
կենդանեաց միսը միաժեսակ բաղադրութիւն ունի,  
միայն առանձին բաղադրիչ մասերի քանակային յա-  
րաբերութիւններն և մանրաթելերի որակութիւններն  
են փոխվում, որից և կախուած է մսի այլ և այլ  
տեսակների մննդարաբութեան և դիւրամարսութեան  
զանազան աստիճանը: Հաւասարապէս և մսի պատ-  
րասելու եղանակը մեծ ազգեցութիւն ունի նորա  
դիւրամարսութեան և մննդարաբութեան վերայ:

Որբան աւելի արիւն և հիւթ է պարունակում միսը,  
որբան կակուզ և լուծանելի են նորա մանրաթելերը,  
անքան նա աւելի մննդարաբ և զիւրամարս է: Միս  
պատրաստելու ամենագեղեցիկ եղանակը եռուցն է (ա-  
ռաւել ևս շամփուրի վերայ), որովհետեւ այդ ժամանակ  
ամենափոք մկանունքային հիւթ է կորչում, և մանրա-

թելերը կակղելով զիւրաւ են բաժանվում միւմեանցից: —  
Քացախի, թթուեցրած կաթի և նատրով լուծած ջրի մէջ  
մսի երկար կենալուց այդպէս և զով օդում: կախելուց,  
մկանունքային մանրաթելերը նոյնպէս լուծանելի են  
դառնում: Եփելով լաւ միս ստանալու համար, պէտք է  
մսի մեծ կտորը ուղղակի յեռ եկող ջրի մէջ ձգել և  
սասակի կրակի վրայ դնել: Սակայն այդպէսով լաւ ար-  
դանակ չի գոյանալ: Լաւ արդանակ ունենալու համար  
պէտք է մսի փոքրիկ կտորները ցուրտ ջրի մէջ դնել և  
հետզհետէ տաքացնել նորան: — Որբան լաւ է ծամած լի-  
նում միսը, այնքան դիւրին և լաւ է մարսվում նա: Խո-  
րոված, տապակած և լաւ եփած միսը չափաղանց դիւ-  
րամարս են, հում, աղած և ապլիսած մսից: Երիտասարդ  
կենդանեաց միսը չափաղանց շուտ է մարսվում, քան  
ծեր կենդանիներնը, որովհետեւ հասակի հետ ոչ միայն  
պակասում է մսի միջի ջրի պարունակութիւնը, այլ և  
մանրաթելերն էլ հեց աւելի կարծրանում, դժուար լու-  
ծանելի են զառնում: Վայրի կենդանեաց միսը աւելի  
դիւրամարս է ընտանի կենդանիների մսից: Առատ իւզով  
պատրաստած միսը, որին իւզը լաւ թափանցած է, աւելի  
դժուար է մարսվում, որովհետեւ ստամոքսային հիւթը  
այնպէս զիւրաւ չէ կարող իւզի միջով մսի մէջ թափան-  
ցել: Կաչ վերաբերում է մսի տեսակներին, դոքա դիւրա-  
մարսութեան վերաբերութեամբ հետեւել կարգով են հե-  
տեւում: Թռչունների միսը, կաթնակերներինը, ձկներինը,  
երկակենցաղներինը (կրիաներ, կոկորդիլուներ, գորտեր),  
խեցկետինների և ոստրեներինը: Զիու միսը արդէն այն-  
պէս սմնդարտը չէ, ինչպէս տաւարի միսը, որովհետեւ նա  
շատ սակաւ իւղ է պարունակում և նորա մանրաթելերը  
բաւական կոչտ են:

Հիւանդ կենդանեաց միսը կարող է ֆուսուար լինել,  
բայց եփելով և խաչելով նորա վասակար յատկութիւն-

ները սպավաբար կորչում են խողի մսի մէջ պատահում  
է գալարաձև որդ, որին յաճախ մահ է պատճա-  
ռում: Այդ թելաւոր, միայն խոշորացոյցով տեսանելի որ-  
դը տրիխին պարունակող խողի մսից մարսողական գոր-  
ծարանի մէջ է ընկնում միայն այն ժամանակ, երբ այդ  
տեսակ միսը ուտում են հում կամ ոչ բաւականաչափ ե-  
փած կամ խորոված: Տրիխինները ստամոքսի և աղիքնե-  
րի պատերը ծակում են, մկանունքների մէջ են սողում և  
կպչում են այն տեղից քսակիների ձեռքով: Տրիխինից  
պաշտպանելու համար, չպէտք է ուտել հում կամ ոչ բո-  
լորովին եփած խողի միս (մանաւանդ ծխում լաւ չորաց-  
րած երշիկների մէջ), կամ թէ յառաջ քան ուտելը պէտք  
է խոչորացոյցով քննել միսը: Պալարալից խողի միսը  
կարող է մեր աղիքների մէջ չտուածած ահծո պատճառել:  
Այն կենդանեաց միսը, որոնք առաջուց դեղ են  
ընդունել (մկնդեղ, մնդիկ), կարող է նոյնպէս վեասակար  
լինել: Չպէտք է նոյնպէս ուտել հորոծ հու: Հոտ բոնած  
որսի միս պատրաստելու ժամանակ պէտք է զգուշանալ  
վիրաւորումներից, որովհետեւ այդ ժամանակ հեշտ կարելի  
է պատճառել արիւնի թիւնաւորում: Հոտած ձուկը, ըստ  
երևոյթին, միշտ վեասակար է, քանի որ բարձրաստիճան  
կենդանեաց հոտած միսը պատրաստութեամբ կարող է  
անվաս դառնալ թէև չկորցնի էլ իւր հոտը:

**Մ**առէերպ հառէը, էնդանեաց փորոքները, որոնք  
նոյնպէս մային կերակուրներ են համարվում, պա-  
րունակում են այնպիսի սննդարար նիւթեր, ինչպէս  
միսը, և այդ մասին նոյնքան էլ սննդարար են,  
բայց մեծ մասամբ ոչ այնպէս դիւրամարսչ  
Սորանց վերաբերում են. աղիքները, որ սակաւ ինչ  
անգոյն միս, իւղ և սօսինձ են պարունակում, լեռ-

ռը, իւղի և արեան բաւական նշանաւոր պարունա-  
կութեամբ, յովնու բգային գեղ, լուծանելի սպիտա-  
կուցի մեծ և իւղի փոքր քանակսւթեամբ, քայծող,  
արիւնի և չմարսուող ջային ոստայնի առատ պա-  
րունակութեամբ, երիկամանիները, սպիտակուցի բաւա-  
կան մեծ քանակսւթեամբ, ռողեղ որ հարուստ է  
սպիտակուցով և իւղով: Զիլեր ու լազանները սո-  
սինձ են տալիս և անմարս են, ոսկողները տալիս են  
իւղ (ոսկրային ուղեղ), երիտասարդ կենդանեաց ա-  
ճանակները սօսնձանման գոնդող (ժելէ) են պատրաս-  
տում: Արևանը բոլոր սննդարար նիւթերից ամենալաւն  
է, այնու ամենայնիւ նա սակաւ է գոծածվում (եր-  
շիկային սպասի մէջ, արիւնէ երշիկներում):

Երշիկները (կալբաս) կարող են վեասակար վնել ունեն  
պարունակելուց (մանաւանդ վատ ապիստած նուրբ երշիկ-  
ներում), կամ թէ այնպէս անուանեալ էրշիկները (եր-  
շիկային իւղային թթուատ) գոյանալուց: Երշիկային թոյն  
առաւել հեշտ գոյանում է ոչ բաւականաչափ եփած, կամ  
վատ ապիստած, հին, սառած և կրկին հալած երշիկնե-  
րում: Այդ թոյնը աւերմունքներ է պատճառում զվարա-  
բար մարսողական գործարանների մէջ, պատճառում է  
մեծ ծարաւութիւն, խոխուց չնչափողում, սրտի խառ-  
նել, փսխում, որովայնալուծութիւն, փորի ցաւեր: Այդ  
կերպ թիւնաւորուելուց բժշկուելու համար հարկաւոր է:  
թոյն հեռացնել փսխողականով, այնուհետ առատ լորձիւ-  
նուս ըմպելիք և թունդ սուրճ: Սիստոր պարունակող եր-  
շիկների մէջ շատ անգամ պարունակվում է վատ, հոտած  
միս, որի համը և հոտը թագնվում են սխառի համի ու  
հատի տակ:

Կատաֆառուում պար  
Բուռած է: պար

**Q** **ո** **ւ.**

Զո՞ն, կաթի և մաի հետ, ոչ միայն ամենասնըն-  
դարար, այլ և ամենադիւրամարս կերակուր է, եթէ  
թերխաշ ուտվի։ Դորա հակառակ պինդ եփած ձուն  
բաւական գժուար է մարսվում։ Չուի, ինչպէս և  
կաթի մէջ, գտնվում են այն բոլոր նիւթերը, որոնք  
կազմում են մեր արիւնը և առհասարակ մեր մար-  
մինը։ Ամենից յաճախ ուտում են թռչնոց ձուն,  
աւելի սակաւ երկակենցաղներինը (կրիաների, կայ-  
ման) և ձկներինը (ձուղպ)։

Թառառնե չուն բազկացած է զեղնուցից, սպի-  
տակուցից և կեղեկից (ածխաթթու կիր)։ ա.) Չուի  
դէղուցը զլխաւ որաբար կաղմվում է իւղով, շա-  
քարի, երկաթի և ֆոսֆորի խառնուրդով հանդերձ։  
Գեղնուցի մէջ պարունակվում է նոյնպէս սովորակուց  
էլ (վիտելին), որը ծրաբվումէ եփելուց, որի հաշ-  
մար զեղնուցը ամուր, բայց դիւրաւ տրորուող զանա-  
գուածի է փոխվում։ բ.) Թռչունի ձուի սովորա-  
կուցը սպիտակուցի՝ թանձրացրեալ լուծուածք է,  
որ, բացի նորանից, գեռ պարունակում է աղեր,  
որոնք արեան մէջ էլ կան, մի փոքր իւղ և շաքար։  
Եփելու ժամանակ հեղուկ սպիտակուցը կարծր, անա-  
թափանցիկ, սպիտակ զանգուածի է փոխվում։ Չուն  
պարունակում է 1000 մասի մէջ մօտ 134 մ. սպի-  
տակուց, 116 մ. իւղ, 10-11 մաս աղեր, մնայեալը-  
ջուր։

Չուելի դէղամարսութիւնը կախուած է նորանից  
թէ ինչպէս են ուտում. հում, թերխաշ թէ  
պինդ եփած։ որովհետև ձուի սպիտակուցային նիւ-  
թերը ստամքսում ծրաբվում են, կաթի կազէինի  
նման և պէտք է նորէն լուծվին ստամքսային հիւ-  
թով։ Չուն որբան պինդ է խաշած, այնքան նա  
զժուար է մարսվում։ Ծարմ հում ձուն ամենից  
գիւրին է մարսվում և արդէն  $1 - 1\frac{1}{2}$  ժամ յե-  
տոյ գուրս է գալիս ստամքսից։ Մի փոքր գժուա-  
րութեամբ ( $2 - 2\frac{1}{2}$ , ժամում) է մարսվում թեր-  
խաշ ձուն, իսկ շատ գժուար է մարսվում (3—5 ժա-  
մում) պինդ խաշած ձուն, առաւել եթէ լաւ չը-  
ծամեն նորան, ինչպէս հարկն է։ Ոինդ եփած սպի-  
տակուցը դեռ աւելի գժուարամարս է, քան պինդ  
եփած գեղնուցը։ Եթէ պինդ եփած ձուն բաւական  
լաւ ծամած չլինի, և այդ մասին էլ երկար միջոց  
չմարսիի, այն ժամանակ նորա լուծվելուց ստամք-  
սում շատ ծծմբախառ-ջրածնային գազ և իւղային  
թթու են գոյանում, որոց ներկայութիւնը պատճառ-  
ուում է ստամքսի խանգարումն, փորացաւ և այլն։  
Չուի գեղնուցի իւղը, ինչպէս ընդհանրապէս բոլոր  
իւղերը, լեարդի լեղույ և աղիքային ու փորագեղձի  
հիւթերի միջոցաւ իւր բաղադրիչ մասերի վրայ է  
բաժանվում, որից յետոյ զիւրաւ ներս է առնվում  
ծծող անօթների մէջ։

Չուեր պահեւու համար պէտք է ուշադրութիւն դարձ-  
նել այն բանի վերայ, որ ձուն գձելուց փոքր ժամանակ  
յնտոյ նորա բութ ծայրին մի տարածութիւն է գոյա-

նում, օդով լցրած: Արտաքուստ, կեղեի միջով թափանցած այդ օդի թթուածինը սպիտակուցի նեխիլ է պատճառում, այդ մասին ձուերը երկար պահելու համար, պէտք է նախազգուշանալ նոր գծած ձուերի մէջ օդ թափանցելուց: Այդ նպատակով կարելի է կեղեր օդի և ջրի դէմ անթափանցիկ շնել ծածկելով նորան իւղով կամ գանով ու իւղով, կառչուկով, հալած ձիւթով: Չուաները դնում էլ են կրային կաթի կամ աղի մէջ: Զատկական ձուաներ ներկելու համար չպէտք է վնասակար ներկեր վերառնել:

Չուերի լուրճութեան հետևեալ միջոցով է իմացվում.  
1) ձուն բռնում են լոյսի դէմ, եթէ կատարեալ լի և ըսպիտակուցը դեռ պարզ երևայ, ձուն թարմ է: 2) Չուն շարժելուց պէտք է ձայն չդուրս գայ, եթէ ներսից լրիկում է, նա անպէտք է: 3) Եթէ ձուի երկու ծայրերին լեզու կպցնելուց բութ ծայրը սուր ծայրից աւելի տաք լինի, ձուն դեռ պիտանի է, իսկ եթէ երկու ծայրերի վերայ բարեխառնութիւնը միննոյն է, ձուն անպէտք է, 4) Եթէ ձուն լողում է ջրի երևին, նա արդէն հին է: 5) Կատարեալ թարմ ձուաները կրակի մօտ քրանում են հըները—ոչ.—Սառած ձուաները պէտք է յետ բերել ցուրտ ջրի մէջ:

### Կարագ և պանիր:

Այդ երկու մննդարար նիւթերը զոյանում են կաթից, որը իւր մննդարարութեամբը նորանց է պարտաւոր: Պանիրը սպիտակուցային նիւթ է և ձուի սպիտակուցին է համապատասխանում, կարագը իւղ է, ձուային գեղնուցի նման: Հետեւարար

միայն երկուքը միասին, կարագը և պանիրը, և այն հացի հետ, կազմում են յարմարաւոր կերակուր: Կարագի որ բաղկացած է իւղի Յ այլ տեսակներից, երբէք մաքուր կաթնային իւղ չէ ներկայացնում, այլ միշտ փաքր ինչ հարոցք (կաղէին) է պարունակում: Որից աւելի համ և սննդարարութիւն է ստանում: Որքան աւելի է կաղէին պարունակում կարագի մէջ, այնքաննա շուտ է թըթգում և կծվում: Այդ բանից զգուշանալու համար, պէտք է հետեւարար բոլորովին հեռացնել կաղէինը, կամ արգելք լինել նորա լուծվելուն, այս նպատակով կարագը կամ լուանում են մի քանի տնգամ, կամ աղում են, կամ թէ հալեցնում են (հալած կարագ): Հալելու ժամանակ կաղէինը բաժանվում է՝ երեսին կանգնած հում, փրփրալի զանգուածի (փրփուրի) կերպով: Կծուած կարագը նորէն ուղղելու համար, պէտք է ածխաթթու նատր աւելցնել ( $2\frac{1}{2}$  դրախմ Յ փունտ կարագի վերայ): Վաս անագած պոյտերի, կամ կապարեայ, պղնձէ և ցինկէ անօթների մէջ պահելուց կարագը կարող է թիւաւոր գառնալ:

Կարագի մէջ խառնուրդներ անում են նորա զոյնը կամ ծանրութիւնը փոխելու համար: Կարագը առաւել գեղին գոյնի է ներկվում քրքումով, զափրանով, ստեղղինի հիւթով: Եթէ հալած գոյն տուած կարագի վերայ ջուր ածուի, նա կրեղնի: Կարագը աւելի ծանր լինելու համար հետը խառնում են աւազ, կափճ, որձաքար, ալիւր, օւլայ, զած, կաւ և այն, կարագը հալելուց, այդ տեսակ խառնուրդները տակ են նստում:

Պահէլը բաղկացած է կաթի կազէինեց, բայց  
էլի մեծ կամ փոքր քանակութեամբ կարագ, կաթ-  
նային շաքար և կաթի ուրիշ բաղադրիչ մասեր է  
պարունակում: Կարագի պարունակութեամբը (նայե-  
լով թէ պանիրը պատրաստուած է երեսը քաշած  
թէ անքաշելի կաթից, կամ մինչեւ անգամ սերից  
որոշում են իւղալի և ոչ իւղալի պանիր, իւղալի  
պանիրը հարկաւ աւելի մննդաբար է քան ոչ իւղա-  
լին: Սովորաբար պանիրը սաստիկ աղերով առանց  
գործածելու պահում են, մինչեւ նա հնանում  
կամ հասունանումէ, որով նորա մէջ պարունա-  
կած կազէինը դիւրաւ լուծուող է գառնում: Ծեր  
պանիրը գրգռիչ կերպով ազդում է ստամբսի վե-  
րայ, իւչպէս համեմունք: Պանիրի սնդդժուռ ոյժը, ըստ  
պիտակուցի առատ քանակութեան պատճառաւ, առ  
հասարակ շատ նշանաւոր է, նա սակայն բաւական  
գժուար է մարսվում, որովհետև նորա կարծրու-  
թեան և իւղի առատութեան պատճառաւ ստամբ-  
սային հիւթը դիւրութեամբ չէ կարող նորա մէջ  
թափանցել և լուծել կազէինը: Ուրեմն պանիրը  
որքան կարծր և առատ է իւղով, այնքան նա դր-  
ժուար է մարսվում:

Պահէ լոյնը, որ կծուած պանիր մէջ է գոյանում,  
յառաջացնում է որկորի և ստամբսի ցաւ. սրտի խառ-  
նում, փսխում, գժուարութեամբ կուլտալ, գլխի պտոյտ,  
ուշագնացութիւն, ջղաձգութիւն: Այդ թոյնի յատկութիւն-  
ները գեռ հետազօտած չեն: Պէտք է զգուշանալ շատ  
ջրալի և սուր թթու հոտ ունեցող, բորբոսով կամ ծաղ-  
կային բծերով ծածկած պանիրց:

Պահը թիւնաւորուելուց հեշտու համար, ինչպէս  
և երշիկային թոյնի ժամանակ, պէտք է ըստ հնարաւորու-  
թեան շուտով թոյնը հեռացնել սիրո թափելով և թունդ  
սուրճ ու դուրինի թթուային միջոցներ (կաղնի կամ ու-  
ռենիի կեղսի խաչած ջուր), զործածել:

### Դ. Բուսական կերսւկուր:

Բուսական թագաւորութիւնը ունի մեր մնջե-  
գեան համար բոլոր անհրաժեշտ նիւթերը, միայն  
ոչ բոլոր բաւականաչափ քանակութեամբ: Ինչպէս  
կենդանական կերակրի մէջ սպիտակուցները գեր-  
իշենում են իւղ արտադրիչների և ջեռուցիչ նիւ-  
թերի վերայ, այդպէս ընդհակառակ բուսական կե-  
րակուրը պարունակում է չափաղանց փոքր սպի-  
տակուց և չափաղանց աւելի իւղ արտադրիչներ ու  
ջեռուցիչ նիւթեր: Եւ էլ բուսական սպիտա-  
կուցները վերստին պատրաստութիւն աւելի շատ են  
պահանջում, քան կենդանականները: Բացի այդ,  
նորա մեծ մասամբ չմարսուող ցանցային թաղանթ-  
ների մէջ են ամփոփած, ու այդ մասին այնքան  
հեշտ չեն մարսվում, այդ պատճառաւ իսկ խոտա-  
կեր կենդանեաց մարսողական առուակը չափաղանց  
երկար է և ուրիշ կերպ է կազմած, քան մարդունը:  
Գլխաւորաբար բուսական կերակրով, ապրող ազգերը  
ընդհանրապէս թոյլ են և թոյլ բարեի տէր, քա-  
նի որ գլխաւորապէս մային կերակրով մննդուող  
ազգերը ուժեղ և պատերազմասէր են:

Ըստ երեսյթին միայն բուսական, կերակրով մննդուող

ազգերը միշտ նորա հետ ուստում են և կենդանական սը-  
նդողաբար նիւթեր. Այդպէս էլղասի գիւղականները  
իւրեանց գետնախնձորի հետ միշտ կաթ են խմում Ուր  
բրինձն է կաղմում զլսաւոր կերակուր, նորան մափ ու  
կաթի հետ են ուստում. Արենելեան Հնդկաստմում, ուր  
առաւելաբար բուսական կերակրով, մանաւանդ բրնձով.  
Են ապրում, այդ վերջնին հետ միշտ ուստում են չորք, մի  
տեսակ կերակուր մօից, ձկնից և բանձարեղիններից, բը-  
րընձի հետ խառնած ու փոքր ինչ ջրով եփած.

### Հացահատիկներ:

Ալիւրէ ուտնվիքներ, հաց.

Հացահատիկներ, որոց մշակութիւնը ընթանումէ  
ձեռ ձեռի տուած քաղաքակրթութեան զարդաց-  
ման հետ և անհնարին է միայն երկրագնդի մի ան-  
նըշան մասերում, վերաբերում են. ցորեան, հա-  
ճար, գարի, կորեկ, վարսակ, եղիպտացորեն, բրինձ,  
սեաւ ցորեն: Կոցա ալիւրոտ սերմերը մասնաւոր  
նմանութիւն ունին թռչնոց հաւկիթներին: Խնչպէս  
որ ձուի կրային կեղեւ տակ ընկած է սպիտակուցը,  
այնպէս էլ հացահատիկները իրենց ցանցային ծած-  
կոյթի տակ ունին սպիտակուցային նիւթ սօնչաւ-  
նելի: Եւ ինչպէս որ ձուի մէջ սպիտակուցով շըր-  
ջապատած ընկած է իւղով հարուստ դեղնուցը,  
այդպէս էլ հացահատիկի կեղրոնում գտնվում  
է ծուծը, որ բաղկացած է օւլցոյից: Օլան մէր մար-  
մընի ներսում հետզետէ իւղի է փոխվում. (այս.

Օլան այնպէս անուանեալ իւղարտագրիչէ): Օլան կազմակերպում է հատիկներին, որոց մեծու-  
թիւնը և ձեւը զանազան է այլ և այլ բայսերի վե-  
րայ: Օլայի հատիկները ուռչում են եփելուց և պայթում են, որով աւելի կակուզ, գիւրահալ և գիւրամարս են դառնում: Բոլոր հացահատիկների սպիտակուցային նիւթերը միւնցին յատկութիւնը չունին, և այդ մասին բոլորն էլ միակերպ սննդա-  
րար չեն: Մինչև անգամ հացի միւնցին տեսակն էլ երբեմն հարուստ և երբեմն պակաս է սպիտակուց-  
ային նիւթերով: Այդպէս աւելի տաք կողմերի ցորենը աւելի սօսնձանիւթ է պարունակում, քան  
ցուրտ երկերներում մշակուածը; Նյոնպէս դարնցան հացը հարուստ է սօսնձանիւթով, քան աշնցանը: Պարարտացնելու նիւթի տեսակը ևս ազգեցութիւն  
ունի սօսնձանիւթի պարունակութեան վերայ: Սպի-  
տակուցային նիւթերի պարունակութեան վերաբ-  
րութեամբ հացարոյսերը հետեւեալ կարգով են հետ-  
աւում. ցորեան (135 մաս հազարից), գարի (123),  
հաճար (107), վարսակ (90), եղիպտացորեն (79) և  
բրինձ (51 մաս հազարից): Բացի սպիտակուցա-  
նիւթից ու օսլայից հացահատիկների մէջ գտնվում  
են դեռ հանգային բաղադրիչ մասեր, որ համապատաս-  
խանում են արիւնի աղերին, և իւղային խառ-  
նութիւներ, սակայն աննշան քանակութեամբ: Այս  
վերջինները ըստ մեծի մասին, աղերի նման, թեփի  
մէջն են մնում:

Որպէս զի հացահատիկները կերակրի մէջ

գործածելի լինեն, նոքա յառաջօրէն պէտք է ազաւուած լինեն իւրեանց ցանցային ծածկոյթներից և մանրեցրած։ Տարաբաղդաբար հատեկները գորանով նուազ սննդաբար են դառնում, որովհետեւ աղաւլու ու թեփահան անելու ժամանակ անջատուած թեփի մէջ միշտ մնում է սօսնձանիւթի շատ կամքիչ քանակութիւն։ Այդ պատճառաւ հացային հատիկներից պատրաստած Փլետքից բերքերը, ինչպէս են, կորկոտ (կրուպա), մսկարոն, ալիւր, միշտ աղքատ են սօսնձանիւթով և հետեւաբար նուազ սննդաբար են, քան չի աղացած հացա հատիկները։ Այդպէս ցորենի ալիւրը սօսնձանիւթ քիչ է պարունակում, քան ցորենի թեփը, իսկ նաշիշը (կրուպչատիէն) բաղկացած է համարեա միմիայն օւլյից։ Կրուպչատի բարձր աեսակը բոլորովին աղքատ է սօսնձանիւթով, և այդ մասին, մննդաբարութեան վերաբերութեամբ, սև ալիւրից ստոր է։ Գար ոյ մանրացրածի (կրուպի) ստոր տեսակները հարուստ են սօսնձանիւթով, քան մանր տեսակները, վարսակի և սեաւ ցորենի մանր կրուպէն հարուստ են սպիտակուցային նիւթով, քան այդ հացատիկների բարձր տեսակ ալիւրը, ծածկոյթներից զրկած բրինձը համարեա միմիայն օւլյայ է պարունակում։ Ինչ եղանակով որ այժմ աղումեն հացը, սօսնձանիւթ աւելի փոքր է կորչում, քան առաջուայ եղանակով, երբ թեփի մէջ կորչում երնրա 30%, այժմ թեփի մէջ մնում է ոչ աւելի 9-10%։

Ալիւրը, որ ստանում են հացահատիկները աղաւով, իւր յատկութիւնները փոփոխում է ոչ միայն նայած այն բոյսերին, որոնցից ստացվում է նա, այլ և նայած նորա աղաւու եղանակին, Այսինքն է ալիւրի մէջ որքան աւելի սօսնձանիւթ է մնում, այնքան նա առաւել մննդաբար է, Այնպէս անուանեալ չաքարեղէնի ալիւրը շատ սպիտակ և կակուղ է, բայց նա համարեա միմիայն օւլյից է բաղկացած, իսկ ցորենի ալիւրի երկրորդ և երրորդ տեսակները այնպէս սպիտակ չեն, կոչտ են չօշափելուց, բայց հարուստ են սօսնձանիւթով և հետեւաբար առաւել մննդաբար, եթէ ալիւրի մէջ շատ թեփ է մնում, որոց վերայ զեռ բաւականի շատ ըսպիտակուցային նիւթեր են մնացած, այն ժամանակ նա խիստ դժուարամարս է և եփելուն ու հացի թխելուն չնայած սօսնձանիւթը, այնու ամենայնիւ, մէծ մասամբ անմարս է անցնեւմ մեր ստամոքսա - աղիքային խոզովակի միջով։

Լուսկութի նշանները յետագաներն են. նա պէտք է ղեղնա-սպիտակ լինի, այլ ոչ աղաւնե-սպիտակ, չօշափելուց հատիկաւոր երեայ, բայց կակուղ և չոր, ձեռի մէջ որքան էլ սխմենք՝ ալիւրը չպէտք է գունդ գունդ կազմուի, այլ մատների արանքում չարժուի, ձեռը բանալուց գծաւորութիւնները իսկոյն չպէտք է անհետանան և ալիւրը, գունդաեր չկազմելով, պէտք է նորէն կատարեալ սփռուի, համը պէտք է քաղցրագոյն լինի, այլ ոչ թթուագոյն, ատամների տակ ալիւրը չպիտի զբարձայ, չպէտք է և անհաճոյ հոտ ունենայ, մանաւանդ հոտած, ջրի հետ խառնելով խմոր լինելուց նա պէտք է շուտով պնդի, իսկ թարմ խմորը պիտի լինի մածուցիկ և առածգական, այնպէս որ սխմուէր և ձգուէր առանց պատռուելու, Որովհետը ալիւրը դիւրութեամբ օդի խոնաւութիւնը իւր մէջ է առնում, նոյնպէս ել երբեմն

թրջվում է, աղալուց առաջ, ուստի շատ անդամ նա գունդ գունդ է կազմում, հոտ է բռնում, բորբոսով շածկվում է և անհաճոյ, դառն կամ թթու համ է ստառում, այդպիսի ալիւրը վասակար է, Ալիւրի փչանալու առջն կարելի է առնել բայց օդի մէջ չորացնելով, յաճախ խառնելով և այնույնու ըստ կարողութեան ամոք փակած ամանների մէջ պահելով, Փոքր ինչ գորշ գոյն ունեցող ալիւրը պէտք է կասկածելի լինի, մի գուցէ փոշի թափած լինի մէջը, կամ թառնած լինի աւագի, դաճի, կափճի հետ և աղնու

**Հայը պատրաստվում է սովորաբար հաճարի** (և հաց) և ցորենի (սպիտակ) հատիկներից, և հէնց այնպէս, որ ջրով շինած խմորը «զրօժի» (մայի) աղցեցութեան է ևնթարկվում սպիտակ հացի համար կամ տխտմօրի աղցեցութեան՝ և հացի համար: **Այդպիսով խմորի մէջ «լսմորումն է սկսվում,** գոյանում է խմորած, կամ թթուած հաց: **Այդ** ժամանակ փափկած օսլայի մի մասը շաքարի է փոխարկվում, և այս վերջինը ածխային թթուի ու զին լոյ ոգիի, որոնք գազի ձեռվ ուռչեցնում են խմորին, սրո զրանով փխրուն և ծակոտկէնաւոր է դառնում: **Այնույնու թխելուց ածխային թթուն և զինւոյ ոգին բաժանվում են և հացի մէջ մնում են միայն մնալարար բաղադրիչ մասերը:** **Հայը ներկայացնում է մի բաւական դիւրամարս զուգաւորութիւն սպիտակուցային նիւթերի, օսլայի, շաքարի,** խէժի և աղերի, **հետևաբար պարունակում է ինչպէս արին և իւղ արտադրող նմանապէս և ջերմացուցիչ նիւթեր:** **Հայը այնքան աւելի մնալարար է,** որ

քան հարուստ է սօնկճանիւթով, նա այնքան աւելիդիւրամարս է որբան աւելի ծակոտկէն աւնի (վոքրիկ հաւասարապէս դասաւորուած փամփուշտիկներ): Եւ այդպէս փիրուն ծակոտկէնաւոր հաց ունենալու համար մենք պէտք է զոհենք օսլայի մի նշանաւոր մասը (որից դշանում է նախ և առաջ շաքար, յետոյ ածխային թթու և գինեցյ ոգի):

**Ալիւրից թխած պատրաստութիւնները** (մ.ձ. մասամբ ցորենի ալիւրից, որի խմօրն հռուցվում է ոչ թէ ջրով, այլ բոլորովին կամ մասամբ կաթով) այնքան աւելի մնալարար են, որքան աւելի է նոցամէջ պարունակվում կաթ, ձու, իւղ, շաքար և այն: Ի հարկէ այդ բոլոր խառնուրդների պատճառաւ այդպիսի պատրաստութիւնները այնքան դիւրամարս չեն լինում ինչպէս հասարակ հացը: Այլնայն խմորեղէն, հացի պէս, պէտք է հաւասարապէս ուռած լինի, այսինքն փիրուն, ծակոտկէ նաւոր և առաճգական, առանց գոնոտիկների:

Պիտօնիները և շուրջութէները վնասակար կարող են լինել ինչպէս թիւնաւոր ներկերի պատճառաւ, որոնցմով նորանց ներկում են, նոյնպէս և այն զունաւոր թղթերի պատճառաւ, որոց մէջ փաթաթում են նորանց. վերջինս այնպատճառաւ, որ պիրօժնու թաց եղած ժամանակ, ներկի մի մասը կարող է թղթից նորա մէջ անցնիլ. Մանաւանդ պէտք է փախչել պարզ զեղին, նարնջի կամ կանաչ գունով ներկած, նոյնպէս և խիստ հոտ ունեցող շաքարեղէնի թխածներ գործածելուց:

**Եթած ալեւէկ կերտութէր:** Նորանց մէջ օսլայի հատիկները ուռչում են և փելուց, արաքվում

են, ու այդ մասին թեթև և դիւրահալ են դառնում։ Մսի արգանակի, կաթ, ձու և գարեջուր աւելացնելով՝ այդ կերակուրները առաւել մննդարար են դառնում, այս բանը առաւել անհրաժեշտ է այն մասին, որ նրանց մեծ մասը բոլորովին սպիտակուցային նիւթեր չի պարունակում, կամ շատ փոքրը է պարունակում։ Ալեւրէ կերակուրները աւելի դիւրամարս են լինում իւղ աւելացնելով (ոչ խիստ առատ), որը սակայն չպիտի այրած լինի։

### Պատիճաւոր ունդեղէն

Պատիճաւոր, կամ լրէիտիւ ունդեղը, որոնցից զլիսաւորաբար գործ են ածվում՝ սիւնու, ռողը և լրէիտն, առատ մննդարար նիւթերի պարունակելով, առաւել սպիտակուցային նիւթեր, մեծ սննդատ ու ոյժ ունին։ Խնչպէս որ հացահատիկների կեղեի տակից սօսնձանիւթն է գտնվում, այդպէս էլ պատիճաւոր ունդերի մէջ լէ գումին, կամ բուսական կազէին անուանուած սպիտակուցային նիւթը։ Բոլոր պատիճաւոր ունդերը չափազանց աւելի հարուստ են այդ սպիտակուցային նիւթով, քան հացահատիկները սօսնձանիւթով, չորացրած սերմերի մէջ լեզումինը կազմում է համարեա նորանց ամբողջ գաղաքաղաքացիների մէջ, 22 պրօցենս լորիայի մէջ, 23 սիսերի, 26 ոսպի)։ Բոլոր պատիճաւոր ունդերի մէջ լորիան առաւել աղքատն է սպիտակուցային բաղադրիչ մասերով, բայց և այնպէս մէկնկէս անդամ

հարուստ է քան յորենը, ոսպը երեքանգամ աւելիէ պարունակում սպիտակուցային նիւթեր, քան նոյն քաշով յորենի հացը, ուրեմն նա մօտենում է սպանրին, իսկ սիսեռը այդ վերաբերութեամբ համարեա՝ հաւասարվում է հորթու մաին։ Պատիճաւոր սերմերի մէջ, ինչպէս և հայահատիկների մէջ, զլատնվում է սպիտակուցային նիւթով շրջասլատած օռլոյն միջակ, որ չոր սերմերի մէջ կէս քաշիցն էլ աւել է (56 պրօցենս ոսպի մէջ, 53 սիսերի, 50 լորիայի)։ Հացահատիկների նման պատիճաւորներն էլ դիւրամարս լինելու համար պէտք է ազատուած լինեն իրենց անմարս կծեփներից, և օսլայի հատիկները պիտի տրաքուին եփկլուց։ Որովհետև սպիտակուցային լեզումինը տաք ջրում անմիջապէս կարծրանում է (ծրարգում է) և այդպիսով կորցնումէ դիւրամարսութիւնը, ուստի որպէս զի լուծուի այդ սպիտակուցային մարմինը, պէտք է պատիճաւոր սերմերը և նորանց ալեւրը թրծել ցուրտ ջրով։ Այնույետ միայն կարելի է նորանց վրայ տաք ջուր ասծել և եփել մինչև որ կծեփները տրաքին։ Պատիճաւոր ունդեղէնների կերակրի մէջ քացախ աւելացնել հարկաւոր չէ, որովհետև այնժամանակ լեզումինը անդիւրամարս է դառնում ստամբուխ համար։ Որովհետև պատիճաւոր ունդերի մէջ սպիտակուցային նիւթերի պարունակութիւնը խիստ աւել է իւղարատաղրիների (օսլայի) պարունակութեան վերաբերութեամբ, ուստի հարկաւոր է համեմել այդ ունդերը իւղով, հացով, գետնախնձորով կամ ու-

րիշ օսլայաշատ նիւթերով։  
Պարփական ունդէւմ պէտքական չէ հաց թխելու  
համար, որովհետեւ լեզումինը ձգական զանգուածի վե  
փոխվում ինչպէս սօննանիւթը։ Դորա փոխարէն այդ  
ալիւրից առաւել լաւ ապուր և կաշ է պատրաստվում,  
քան բոն ունդերից։ Այնպէս անուանեալ բնակչութեամ  
էր լուսական ոչ այլ ինչ է քան պատիճաւոր ունդերի ալիւր։  
Պատիճաւոր ունդերի ճաշակը և դիւրամարսութիւնը կա-  
ռաւելանայ, թէ որ եփելու նախընթաց օրը նորանց ջրի  
մէջ թրջեն սօղի ամենափոքր քանակութեան հետ կոչտ  
ջրի (կրային աղերով հարուստ) մէջ եփելուց՝ պատիճա-  
ւոր ունդերը պնդանում և կատարեալ անմարսելի են  
դառնում, որովհետեւ ջրի կիրը սերտ, անքակտելի կերպով  
միանում է ցանցապատի և լեզումինի հետ։ Երբ որ գե-  
տի կամ անձրեսային կակուղ ջուր չլինի, այն ժամանակ  
յառաջ քան կոշտ ջրի մէջ եփելը, պէտք է նորան կակ-  
դացնել ածխաթթու նատր աւելացնելով։

## Գետնախնձոր

Գետնախնձորը, որ համարեա բոլոր կլիմանեւ-  
րում կարող է բուսնել, զլսաւոր կերպով բաղկա-  
ցած է ջրից (<sup>(3)</sup>) և օսլայից (16—20%): Զա-  
փազանց վորք սպիտակուցային մարմիններ պարունա-  
կելուն պատճառաւ՝ գետնախնձորը վատ անդարար  
միջոց է, մանաւանդ եթէ նա գործ է ածվում  
իրեւ զլսաւոր ուտելիք։ Նա համարեա միայն կարող  
է ծառայել իրեւ իւղարտադրիչ և ջեռուցիչ նիւթ։  
Հասակաւոր մշակը պարտաւոր կլինէր 24 ժամի մէջ  
20 դրուանքա գետնախնձոր ուտել, որպէս զի բաւ

ցառապէս նրանով ծածկէր սպիտակուցային կերակրի  
իւր պահանջը, և հարկաւոր կլինէր 6 գրուանքա  
գետնախնձոր էլ որպէս զի մարմինին մատակարարութիւնս-  
լայի այն պարու ու պատշաճ՝ քանակութիւնը, որ կա-  
րելի է ստանալ 2 գ. Հայով։ Գետնախնձորի աւ-  
լիւրը բոլորովին սպիտակուցային նիւթեր չէ պարու-  
նակում և այդ մասին չափազանց նուազ մննդարար  
է քան սօննանիւթ պարունակող ցորենի ալիւրը։  
Դեանախնձորը դիւրամարս լինելու համար նորա օս-  
լայի հատիկները պէտք է խաշելով ու եփելով տրա-  
քովն և ուռչին։ Խաշած կամ եփած գետնախնձոր-  
ը պէտք է կամ տրորուի, կամ զգուշաբար ծամուի,  
նորան պէտք է իւղով ուտել։ Գետնախնձորի տրորա-  
ծը և տպուրը չափազանց դիւրամարս են, քան ամ-  
բողջ, կամ զգուշած գետնախնձորը։ Ինչպէս առ-  
հասարակ օսլան, այնպէս և գետնախնձորի օսլան  
մեր մարսողական գործարանի մէջ շաքարի է փոխ-  
վում։ Կաթ, իւղ, մաաջուր, ձու, միս, արիւնէ եր-  
շիկ, պանիր աւելացնելով՝ գետնախնձորից լաւ սեղան  
է պատրաստվում։

Գետնախնձորը չտե է, թէ որ նա ջրալի, լալծուն,  
մածուցիկ է, նոյնպէս թէ որ ջրի կամ ապուրի մէջ տակ  
չէ նստում։ Տէս և վառեա գետնախնձորը օսլայ քիչ է  
պարունակում, չի կակում և դժուարամարս է։ Գետնա-  
խնձորի բուժութէն մէջ թիւնաւոր, արբեցուցիչ նիւթ (սո-  
լանին) է զոյանում, ուստի այդպիսի գետնախնձոր գոր-  
ծածելուց յառաջօրէն պէտք է նորանից իստակ մաքրել  
բողբոջները։ Այդպիսի գետնախնձորով թունաւորուած  
ժամանակ նախ և առաջ պէտք է ստամոքսը դատարկեց-

նել փսխողականով, այսույթտ տալ թունդ սուրճ, կամ  
կանաչ թէյի, կաղնու կամ քինաքինու կնդեր ջուր:  
Սառած գետնախնձորը հալզելով՝ աւելի քաղցր, շա-  
քարով աւելի հարուստ է լինում. քանի փտած չէ կա-  
րելի է այդ տեսակ գետնախնձորը ուտել, միայն ուտել  
խկոյն հալզելուց յետոյ:

### Բանջարեղինք առ Հասարակ

Բուսական բերերը, որ յայտնի են բանջարեղինք  
ընդհանուր անուամբ, մեծ մասամբ կամ արմաթիք են  
կամ աւելանելը (կանաչ թելեր): Արմաթքներին պատ-  
կանում են. ստեղղին, շողգամ, բողկ, ձակնդեղ,  
սոխ և սխտոր, կանաչեղէնին-կաղամբ, շոմին, թըր-  
թընջուկ, աղցան, ծնիրէկ և այլն: Սննդեան այս  
բոլոր միջոյները խիստ փօքք սննդարար ոյժ ունին,  
որովհետեւ սպիտակուցային նիւթեր չեն պարունա-  
կում, իսկ օալայ, շաքար ու խէժ շատ քիչ են պա-  
րունակում: Նրանց պարունակած մննդարար բա-  
ղադրիչ մասերն էլ զժուարամարս են, որովհետեւ  
շրջապատած են ուրիշ, բոլորովին անմարսելի բա-  
ղադրիչ մասերի զանգուածով: Քանի որ բանջարե-  
ղէնները գեռ ևս փոքրիկ են, նոքա մասամբ լաւ են  
մարագում: Ամենից զիւրամարս է սուեզինը, ամենից  
մննդարար է շաքարով հարուստ շողգամը: Բանջա-  
րեղէնների մեծամասնութիւնը առաւել համեմներ  
են, քան մննդեան միջոյներ: Նորանցից մի քանիսը,  
որոնք ցնդող իւղեր են պարունակում, կարող են զոր-

ծածուիլիբրե համեմոնք, զորորինակ նեխուրի, բողկ,  
ամսական բողկ, սխտոր և այն:

Որովհետեւ ադարակային բոյսերի հետ երբեմն թիւ-  
նաւոր բոյսեր նն խաճնվում, կամ երբեմն կարելի է  
թիւնաւոր բոյսը կերակրի համար պիտանի բոյսի տեղ  
ընդունել (օրինակ կարսոնը կարող է խառնուիլ մոլա-  
խինդի հետ), ուստի հարկաւոր է լաւ ծանօթ լինել կե-  
րակրի համար պիտանի բոյսերի նշաններին և տարե-  
բութիւններին.

### Սունկեր

Սունկերի մննդարարութիւնը չափազանց առա-  
ւելէ բանջարեղէնների և պտուղների մննդարարու-  
թիւնից, որովհետեւ նոքա ջրի մեծ քանակութեան  
հետ համեմատաբար մեծ քանակութեամբ էլ սպի-  
տակուցային նիւթեր են պարունակում, այսպէս և  
օսլայ, շաքար, լորձիւն և խէժ: Ուտելու սունկերին  
պատկանում են, արիւթել, շամայնիօն, սպիտակ սուն-  
կեր և այլն:

Սունկերի վերաբերութեամբ մեծ զգուշութիւն է  
հարկաւոր դժբաղդ պիտուածներից խորշելու համար: Ոչ  
միայն թիւնաւոր շատ սունկեր կան (արբեցուցիչ աղդե-  
ցութեամբ), բայց և այն սունկերն էլ, որոնք սովորական  
պայմաններում պիտանի կերակուր են կազմում կարող  
են թիւնաւոր յատկութիւններ ստանալ որոշեալ տեղե-  
րում, չափազանց հասունութեան ժամանակ և նոցա բա-  
ղադրիչ մասերի արդէն լուծվիլ կամ փաել սկսելուն  
պատճառաւ: Սունկերով թիւնաւորուիլը արաւայտվում  
է կլանի այբելով, փսխելով և որովայնալուծութեամբ,

գիմի ծանրութեամբ, գլխացաւով, դէլը տալով և իմացականութեան կորուսմամբ: Թոյնը պէտք է հեռացնուի փսխմամբ (կլանը խանել մատով կամ փետուրով) և բացի այդ լուծողականներով (և զրեխով, դաստուրով), որովհետև վնասակար ազդեցութիւնը մեծ մասամբ շատ ժամը է յայտնվում, յաճախ 10—12 ժամ սունկերը ուտելուց յետոյ: Այսույթ պէտք է խմել տալ առատ տաք ջուր, թունդ սուրճ կամ թէյ, ի վերջոյ քացախ: Իմացականութիւնը կորցրած ժամանակ զլուկը պէտք է սրսկել ցուրտ ջրով:

## Պ տ ու ղ ն ե ր:

Պտուղների բոլոր տեսակները (կորիզաւորներ, խնձորայիններ, թփային միրգեր, քսակաւորներ, բաժակաւորներ, դդմայիններ և պատիմաւորներ) հազիւ թէ կարող են սննդարար միջոյներ անուանուիլ, որովհետև նոքա համարեա մասնով ջրից են բաղկացած և չափազանց փոքր սպիտակուցային նիթեր և օսլայ են պարունակում կամ բոլորովին չեն էլ պարունակում: Միայն շաքար և լորձիւնը (այսինքն իւղարտադրիչ և ջեռուցիւնիթեր) են պտուղների բաղադրիչ մասերը, որոնք փոքր իշատէ նշանակութիւն ունին: Կեղենները և հատիկները կամ կորիզները որքան հնարին է պէտք է հեռացնուին, որովհետև ծնողադնոքա ոչ միայն նոյն իսկ պտուղների մարտուելուն են արգելք լինում, այլ և միատեղ ընդունածուրիշ կերակրային նիւթերին էլ:

կատարեալ անմարսութեամբը դժուարացնում են ստամեսի հիւթի և այլ մարտողական հիւթերի նոցա մէջ մտնելը: Տհաս և փտած պտուղներ ուտելը վնասակար է:

Թէ որքան պիտանի են պտուղները մարմնի մնացնեան համար, այդ շատ անզամ ապացուցուած է փորձերով: Այդպէս Բուրգօնեայում փորձել են խաղողի այզիներում բանող մշակներին համարեա բացառապէս խաղողով կերակրել, հացի և ապուրի փոքր քանակութեան հետ: Բայց մշակները այնպէս չուտով ուժաթափ են եղել, որ ստիպուել են մայիսն կերակրի գասնալ և ապացուել է որ սա աւելի արժան է նստում: Հարաւային կողմերում թուղը և և արմաւը ծառայում են իրեն իւղ արտադրիչ մնացնար: Պտուղները իւրեանց ճաշակով և զովարար ազդեցութեամբ պարտաւոր են, բացի շաքարից, պտուղային թթուներին եւս: Խոշոշունք և սէրէսը, ինչպէս նուշ, բոլոր տեսակ ընկոյզներ, ձիթապտուղ, կանեփի և մեկոնի սերմեր, սպիտակուցային բաղադրիչ մասերի և իւղերի հարստութեամբը, հարաւային կողմերում լաւ սննդարար միջոցների տեղ են ծառայում: Մեզանում նոքա թանգ են ուստի գործ են ածվում միայն իրեն համեմեր և քաղցրասիրութիւններ: Դառն նշի մէջ մի առանձին նիւթ, ամիզդալին, է դտընվաւմ, որը մի քայնի պայմաններում սաստիկ թիւնաւոր սինիւնի թթուփէ է փոխսպաւմ: Այս ասին չպէտք է զառը նուշ շատ ուտել, զատ զարգացնաց զմեն դու զնամնի ախտա

**Ե ա մ ե մ և և և ր**  
Մենք հաստատուն և հեղուկ նիւթերի մի

յայտնի և քանակութիւն ենք գործ ածում, աւելացնելով նորանց կերակրի վերայ մասամբ ձաշակը լաւացնելու և սաստկացնելու, մասամբ մարսողութեան նպաստելու համար Այլ նիւթերը կամ ախորժակն են աւելացնում, զրգուում են աւելի ուսել, կամ թէ սաստկացնում են բերանի մէջ լորձիւնի և թուքի արտադրութիւնը, ինչպէս և ստմոքսի և աղիքների միջի արագրաւթիւնը ու շարժումները: Նորանցից մի քանիսը զրգուումն սրտի գործունէութիւնը և այդպիսով արագացնումն արիւնի շրջանառութիւնը, միւսները, եթէ չափազն չեն գործունէ, օգտաւէտապէս զուարթացնումն ջղերի և ուղեղի գործունէութիւնը: Այս նիւթերի մեծամասնութիւնը չէ կարող ծառայել իբրև սննդարար միջոցներ, այս մեր մարմնի բաղադրիչ մասերի նորոշիչներ:

ԱՍԻ ՀԱՆՈՉԻ աղը, կամ պարզաբար աղը, թէև համեմէ անուանվում, չոտարէու անդայանցը չեն հըստիւ ծեշտ, անդարչը միջ-է: Արդարէ, խոհանոցի աղը արեան և մարմնի ոստայնների էսկան բաղադրիչն մասն է, մորթու, երիկամնենքների և այլ արտազրիչ գործարանների միջոցաւ նա անդադար արտահանվումէ մեր մարմնից այնպիսի նշանաւոր քանակութեամբ, որ մենք հարկադրած ենք անդադար նորէն մատակարարել մեր մարմնին: Որովհետեւ բուսական սննդարար միջոցները խիստ փաքր աղ են պարունակում, քան կենդանականները, ուստի առաջինները պէտք է աւելի աղել, քան վերջինները, ու

բոնք այնքան փոքր են աղ պահանջում, որքան իւրանք հարուստ են արիւնով, պատճառ որ արիւնը շատ աղ է իւր մէջ պարունակում: Դորանից մետոյ խոհանոցի աղը նպաստում է մարսողութեան, որով հետեւ զրգուումէ մարսողական հեթերի արտադրութիւնը և սպիտակոցային նիւթերի ու գժուար լուծանելի իւղերի լուծելը: Բայց աղը իւրեան հալեցնելու համար բաիւնիցը ջուրը խելով ծարաւութիւն է պատճառում, հարկադնումէ շատ խմել:

Թէ որ կերակրի մէջ խիստ շատ աղ է լինում, այն ժամանակ մարսողութիւնը զժուարանում է, և թէ որ մինոյն ժամանակ կերակուրն էլ բաւականաչափ սննդարար չէ, այն ժամանակ գոյանում է արիւնի այնպէս անուանեալ սկօրբուտային (նոդանարութիւն) փոփոխութիւն: Այս առաւել պատահում է բացառապէս աղի մսի գործածութեան ժամանակ (նաւերի վերայ), որից աղածուրը սննդարար նիւթերի նշանաւոր մասը խլում է: Այս մասին միշտ աղի մսի հետ պէտք է ուտել և բանջարեղին (թթու կազմը, լորիայ, գետնախնձոր) ու հաց:

Իւղային համեմները (կարագ, ձարալ, ձէթ) օգտակար են այն մասին, որ իւղը մեծ գեր է խաղում ինչպէս մարմնի սննդեան, այնպէս և ջերմութիւն գոյանալու մէջ: Բացի այդ յայտնի է որ օսլան, երբ ուտումն իւղի հետ խառնած, չափազանց վիւրութեամբ է շաքարի և իւղի փոխվում: Քան իւղ չխառնած ժամանակ: Այդ հիմամբ հացը և գետնախնձորը դիւրամարս են, երբ նորանց ուտումն իւղով: Իւղը աւելի դիւրամարս կդառնայ, թէ որ նորան տաքացնեն կամ շաքար, քացախ (նոյնպէս

կիտրոնի հիւթ), խոհանոցի աշ, համեմներ՝ խառնունի հետք Խիստ մեծ քանակութեամբ ընդունելուց՝ իւղը խանգարումէ մարսողութեան, որովհետեւ ըստ տամբասի մէջ պատումէ միւս սննդարար նիւթերին և ստամբային հիւթի նոցամէջ թափանցելըն դժուարացնում:

**Չաքարը** (նմանապէս ռուփր-մսթը և մեզը ըլը) ոչ միայն ճաշակ բարւոքող նիւթ է, այլնոյնպէս օլլայի նման (որի հետ համեմատելով նա առաւել զիւրամարս է) ծառայումէ իբրև լաւ իւղարտադրիչ և ջեռուցիչ միջոց: Բայց այդ նա զրդառումէ ստամբային հիւթի արտադրելուն. մարսողական գործարանի մէջ հետզհետէ կաթնային և իւղային թթուների փոխուելով՝ նա նպաստումէ սպիտակուցային նիւթերի և երկաթ ու կիր սպարունակող կերակրի բաղադրիչ մասերի մարսելուն: Էռեծեալ շաքարը մարմնից հեռանումէ ածխային թթուի և ջրի կերպով (առաւել թռերի միջոցաւ):

Այսպէս շաքարը մեծ նշանակութիւն ունի մարմնի մանդեան համար, ինչպէս այդ ապացուցանում է, ի թիւս այլոց, կաթի մէջ կաթնային շաքարը գտնուիլը: Թէ շաքարը վչացնում է ատամներին և թթուահամ վկրտանք է բերում, ինչպէս մի քանիսները պնդում են, այդ ճշմարիտ չէ: Նեգրերի սպիտակ ատամները, արևմտեան հնդկաստանի շաքարի ագարակներում—ուր շատ եղէ գնի շաքար են պատրաստում և շաքարի շատ հիւթ են գործածում—դորա հակառակն են ապացուցանում: Նոյնպէս և անգղիացիք ու ամերիկացիք, որոնք շաքար շատ են ուտում, չափազանց լաւ ատամներ ունին, քան ֆրանսիա-

ցիք և գերմանացիք, որոնք շաքար՝ խիստ փոքր են գործածում մաքսի թանգութեան պատճառաւ, Ընդհակառակ շաքարը, երեսում է որ նպաստում է ատամների զարգանալուն, պահպանելուն և ամրանալուն, որովհետեւ նա օգնում է ֆուֆորա-թթու կրի լուծուելուն, որը ատամների համար կազմիչ նիւթ է: Խակ թթուահամ զկըստանք կամ թթու ճաշակ երբեք չէ պատճառում մաքուր շաքարը:

**Քացախը** որի զլիսաւոր բաղադրիչ մասը քացախային թթուն է (ինչպէս որ լիմոնի հիւթի մէջ լիմոնի թթուն, մածունի մէջ կաթնային թթուն), ոչ միայն ճաշակ է տալիս մի քանի ուտելիքների, այլ և հարկաւոր է իբրև փոտութեան ընդդէմառնող միջոց: Դորանից յետոյ, ջրի հետ քացախի խառնուրդը շատ լաւ ծարաւ է յագեցնում և նըսպաստում է մարսողութեան սպիտակուցային և օպայաշատ մննդարար նիւթերի մեծամասնութեան լուծելուն օգնելով: Միայն լորիային բանջարեղինների լեզումինը անլուծանելի է գառնում քացախի պատճառաւ, և այդ մասին նպատակայարմար չէ սիսեռի, լորիայի և սպիտի վերայ քացախ աւելացնել: Այնույետ քացախը նպաստումէ օսլան շաքարի փոխուելուն, առաւել եթէ հետք իւղ խառնած լինի (օր. քացախով ու իւղով սալաթայի մէջ):

Կապարի կամ պղնձի հետ քացախ դիպչելուց շատ թիւնաւոր աղեր են գոյանում, և այս մասին այդ միտաղների կամ կապարի ապակաբուռ (շիր) ունեցող անօթների մէջ երբեք չպէտք է քացախ և առհասարակ թթու կերակուրներ ու ըմպելիք պահել, սորա համար հարկաւոր է ապակեայ կամ փայտեայ անօթ:— Խիստ յաճախ

և շատ քացախ գործածելուց եղջվում է մննդառութիւնը  
և արեան նուազում է պատճառվում:

**Հ**ոտաւոր համեմատելու բոլորովին սնըն-  
դարար չեն, այլ միայն զրգութեն ձաշակի գործա-  
րաներին և մարսողութիւնները: Դորանց զրգուիչ  
ազգեցութիւնը այնքան առաւել սաստիկ է, որքան  
նոցա մէջ աւելի է պարունակվում հոտաւոր, ցըն-  
դիչիւղ, ինչպէս տաք երկիրների համեմունքների  
մէջ (կինամնն, մշկահոս ընկոյզ, պղպեղ, կոճապլղ-  
պեղ, մեխակ, վանիլ): Այս քանակութեամբ ըն-  
դունելուց՝ այս խիստ հոտաւոր բերքերը կարող են  
արիւնատար և ջղային զրութիւններին վնասակար  
զրգումունք պատճառել և մինչեւ անգամ կարող են  
թիւնաւոր լինել: Ուրեմն պէտք չէ շատ մեծ քս-  
նակութեամբ գործ ածել նորանց:

Եւրոպակ առաւել լրու համեմատին վերաբերում են.  
եղեսքակ, բողմարին, կաքաւախոտ, թուրինջնոտ (մելխ-  
սա), սամլթ, նեխուր, կարսն, անխոն, զիհւոյ (արդիշի)  
պտուղներ, քրքում և այլն: Առաւել առաջ համեմներն են.  
սոխ, սխտոր, բողկ, ամսաբողկ (բեղիսկ), մանանիս,  
կապար և այլն:

**Ո**գելից ըմպելիքները զրգուիչ միջոցներ են,  
չափաղանցութեամբ գործ ածելով նոքա վնասումնեն  
առողջութեան, մանաւանդ երիտասարդ հասակում:  
Երիտասարդ մարդեկ իւրեանց ծարաւը պէտք է յա-  
գեցնեն ջրով, կաթով և թէ կուզ ամենաթոյլ  
զարեջրով, նորանց համար ամենավտանդաւորը օղին  
է, թոյլ զինի կարելի է թոյլ տալ ժամանակ առ  
ժամանակ: Ծերութեան ժամանակ կարելի է դինի

գործածել փոքր քանակութեամբ, իբրև կաղմուած-  
քի նիւթերի փոխանակութեան կազմուրելու միջոց:

**Ս**ուրճը բոլոր զրգուիչ միջոցներից լաւագոյնն է,  
որովհեաւ նա ջեռուցանում և սթափեցնում է:  
Մարմնական և մոռաւոր կողմանէ լսորուած միջոցնե-  
րում սուրճը չափաղանց լաւ է ոյժ պահպանում,  
քան զինին, օղին կամ թէ յլլ. ողելլոց ըմբիլիքների  
վերայ նա այն գերազանցութիւնը ունի, որ իրանից  
յետոյ նկատելի թոլութիւն չէ թողնում: Խիստ շատ  
քանակութեամբ խիստ թունդ սուրճը շատ վնասա-  
կար ընդհանուր զրգումունք է պատճառում, սրտի  
ուժգին բարախման հետ:

**Թ**է յլլ չափաղանց ուժեղ զրգուիչ միջոց է՝ քան  
սուրճը, սակայն թէ յի ազգեցութիւնը շուտով է  
անցնում, քան սուրճինը: Թունդ թէ յլլ՝ մեծ քա-  
նակութեամբ խմելուց, ուժգին սրտի բարախմանը և  
գող է բերում:

**Շ**ո կոլագը, կաթի և ձոխի հետ պատճառած,  
բաւական լաւ մննդարար միջոցէ. քաքաօի մէջ զր-  
գուիչ նիւթեր պարունակելու պատճառած՝ նա  
միենայն ժամանակ զրգումն է սուրճի և թէ յի

պէս: Բանանա դաբայ զենք մին քառ զանա այն  
նզար դամբաշնչի մակրեն որս ոչոս առաջ զանանանի  
այս քայլած չ մասնաւուալու չ մասնաւուալու այսուր իւսու

**Ռ**ւտելու և խմելու կանոններ նուածաւած  
ուածաւած չ մեր մարմնի մննդան (կեանքի պահ-  
պանութեան) համար: Ինչպէս արդեն բացատրուած

է կերև, կերակուրը պէտք է անսպատճառ, բաղկաշցած լինի այն բոլոր մննդարար միջոցներից, որոնցից չուրուլ է կազմուիլ մեր մարմինը:

Առաջնութեան համար բոլորից առառել պետանին է բուսական և էնդոֆանոյն մննդարար միջոցներից բաղկացած կերակուրը: Եւ այդ կերակուրը այնքան առաւել պիտօնի է, որքան առաւել նա գիւրամարս է և որքան աւելի տարբեր նիւթեր կան նորա մէջ: Այս մննդառառել մննդար և դիրամարս էերակուրը մշշո բոլորից առաջնութեան է որովհետեւ կանոնաւոր մննդեան համար նորանից չափազանց փոքր է պահանջվաւ, բան ոչ այնպէս մննդարար և գիւրամարս կերակրից: Պէտք է հետեւել կանոնները մտաբերել.

1) Կերակրի համար պէտք է համապատասխան, շուտ աղջ մննդեան միջոցներ և նպաստակայացմանը ըմբելելու ընտրել, որպէս զի մարմնին մատակարարենք ոչ միայն այն բոլոր նիւթերը, որոնցից նա բաղկացած է, բայց և ջերմակթիւն արծարծելու համար անհրաժեշտ նիւթեր:

Միայն էաւ և Յուն են պարունակում այն բոլորը, ինչ որ մեզ հարկաւոր են մարմնի մննդեան և ջեռուցանելու համար, բալց եթէ մենք երկար ժամանակ բաւականացնենք բացառապէս այս մննդեան միջոցների գործ ածութեամբ, այն ժամանակ նորա չուտով մեզ հակառակ կդայլն. կերակրի մէջ այլասեռութիւն է հարկաւոր: Մի քանի մննդարար միջոցներ պէտք է միաւորուին այնպէս, որ կերակրի մէջ միշտ բաւականաչափ քանակութեամբ ինչպէս սպիտակուցային նիւթեր, այնպէս էլ իւղեր և իւղ արտադրիչներ լինէին: Այդ իսկ պատճա-

ռաւ է հարկաւոր խառնել բուսական և կենդանային մննդարար նեւթերը և նոյն ժամանակ լաւ էլ աղել նորանց, մանաւանդ առաջնոները:

2) Պէտք է բարոկանութեամբ չել և իրոք ընդունել և գորա հետ միասին բաւականաչափ ջրոք խմել: Կերակրի խիստ շատ աւելնորդութիւնը, թէ կուզ լաւ կերակրի, նոյնքան էլ վնասակար է, որքան նորա պակասնորդութիւնը: Չպէտք է մասանալ մանաւանդ, որ պէտք է պարտ ու պատշաճ քանակութեամբ ջուր հասցնուել արիւնին:

Թէ որքան է հարկաւոր ուտել և խմել, այդ առհասարակ ցոյց են տալիս քաղցածութիւնը և ծարաւը: Որքան առաւել է մարմնի կորուստը, թէ մարմնական, թէ հոգեկան աշխատութիւնից, այնքան էլ առատ պէտք է լինի կերակուրը.

3) Պէտք է նպառութել մննդար միջոցների դիրամարսութեան և նոյն իու մարտութեան գործողութեան: Որքան լաւ և կատարեալ են ջոկվում մննդարար նիւթերը կերակրից և արեան մէջ անցնում: այնքան էլ կերակրի փոքր քանակութիւն է հարկաւոր:

Կերակրի մարսելուն նպաստում են, զգուշաբար մանրացնելը (կտրտել և ծամել), կանոնաւոր պատրաստութիւնը (եփել, խորովել) և համեմեները. Անհրաժեշտ է նմանապէս խմել ուտելու ժամանակ, շատ լաւ է ճաշել մաքուր օդի մէջ, հագուստը նեղ չպէտք է լինի, Ռւտելու ժամանակ խմելը միայն այն ժամանակ է վնասակար երբ անչափաւոր է լինում և եթէ կերակուրը շատ իւղափ: Ռւտելուց անմիջապէս յետոյ պէտք է խորշել սասակիկ լարումներից, բայց մի առ միջոց ճաշից յետոյ չափաւոր չարժողութիւնը մարտողութիւնն սպասուում է,

4) Պիտիք է զգուշանալ այս վնասից, որ կորող է պատճառութել կամ նոյն իսկ էլեւակից, կամ նորա միջը կամ նույն էլեւակից: Կերակուրը և բմկելին կարող են վնասակար ազգեցութիւն ունենալ արդէն և այնպիսի գիւղուածում, երբ նորանց ընդունեն այնչափ քանակութեամբ, կամ երբ նորա վաս որակութիւն, կամ խիստ բարձր կամ սուր բարեխառնութեան աստիճան (խիստ տաք կամ ցուրո) ունենան: Յուրա ըմկելին նորանով է վնասակար, որ ստամքով և նորան կից մասերի արհենատար անօթներին նա սեղմուիլ է ստիպում, որի պատճառաւ սաստամում է արեան ընթանալը դէպի միւս արիւնատար անօթները, որից կեանքի համար կարեոր դործարանների այդ տեսակ անօթները կարող են սոյթիլ: Բայց ամենից վտանգաւոր են կերակրի, ըմկելեաց և համեմների մէջ պատահած օտար մարմիններութշները:

Թիւնաւոր նիւթեր գտնվում և դոյանում են երբեմն ոռնչերի, էջմիաչերի և դուռի մէջ: — Խոզէնին (մանաւանդ վատպատրաստած ապուխտի և երշիկների մէջ կամ կարտած հումը) կարող է վտանգաւոր լինել որտեւ և կառաւութիւններ պարունակելուն համար: Ընդհանրապէս Տիւ կարող է վնասակար լինել եթէ նա վեր է առած հիւանդ կինզանիներից, առաւել երբ նորանց բժշկել են թիւնաւոր գեղերով (մինդեղով, սնդիկով), կամ նոյնպէս եթէ նա մնացել է խիստ երկար միջոց: — Կարտաճ հետ, կամ նորափոխարէն, կերակրի մէջ կարող է մոլախինդ ընկնել:

Գեղանձնութիւններ պաղբոջներ արձակելու միջոցին, թոյն է դոյանում: — Զատէ, եթէ կեցած լինի այնպիսի

ջրի մէջ, ուր կանեփ և վուշ են թրջում, կամ ուր կապարի, մկնդեղի և սնդիկի հանգերի ջուր են թափվում, հիւանդութեան երեսոյթներ կարող է ծնեցնել, այդպէս էլ կուկելվաննի սերմերով արբեցրած ու որսած կամ վատաղած և չորացրած ձուկը:

Բորբոսած հայր երբեմն թիւնաւոր յատկութիւն է ստանում: Ոէ որ խիստ տաք հացը թիւնաւոր ներկով ծածկած տախտակի և սեղանի վերայ զնուի, կարող է թիւնաւորութիւն: Սինչեանդամ թիւնաւոր նիւթերով սրնուած փայտով (կանաչ մինդեղային ներկով ներկած փայտով, երկաթուղիների, սնդիկային աղով սնած զերաններով) տաքացրած փռան մէջ թիւնաւոր կարող է թիւնաւորել հացին:

Քաղցրէ նիւթեանի սուրանէը, եթէ նոքա ներկած են, կամ փաթաթած են գունաւոր թղթի մէջ, և մինչեւ անդամ գունաւոր նոմանի նշառները, կարող են վնասակար լինել թիւնաւոր ներկերից (մանաւանդ կանաչ ու կարմիր): Նմանապէս հօրություն ծնունդը չպէտք է ուտեսաների մօտ պահել, որովհետեւ նա մէծ մասամբ մինդեղ, պղինձ և կապար է պարունակում:

Ոէս, մանաւանդ կանաչը, երբեմն ներկում է վնասակար նիւթերով (Եկրպինեան կանաչ ներկով), որոնք կարող են նկատելի լինել խոշորացոյցով և հեռացնուել ցուրտ ջրի մէջ սղողելով:

Հարկաւոր է առանձին ուշաղրութիւն զարձնել անօթների վերայ, որոնց մէջ պատրաստում և պահում են խորտիներ և ըմկելիքներ, այլակերպ նոքա կարող են վնասակար յատկութիւն ստանալ: Անվնաս է մնում միշտ փայտեայ (չներկած), քարէ, ապակեայ, յախճապակեայ, ֆաեանսի, ոսկէ և արծաթէ անօթը (վերջինս եթէ խիստ շատ պղինձ չէ պարունակում): Ուրիշ բոլոր անօթները կարող են վնասակար լինել որոշ հանդամանքներում:

Պոշտէ և հայութեաց անօթը երբէք պէտքական չէ: կաւէ ա-  
նօթը անվասս է միայն այն ժամանակ, երբ լաւ թրծած  
է և լաւ ծածկած է վէրնիճով (շիր), (որովհետեւ վէրնիճը  
կապար է պարունակում): Այս մասին պէտք է ուշա-  
զրութիւն դարձնել հետեւալի վերայ. որ և իցէ ամուր  
իրով կաւէ անօթին խփելուց, նա պէտք է պարզ ձայն  
հանէ, վէրնիճը չպէտք է քերուի դանակի ծայրով, չու-  
ծուի տաքութեան մէջ կամ չփելուց, անօթի մէջ  
թոյլ աղած կամ փոքր ինչ թթուեցրած ջուր  
եռացնելուց, ջրի մէջ չպէտք է կապար անցնի:  
Ամէնից առաւել վստահանալի է կաւէ անօթը, զործա-  
ծութիւնից առաջ, քացախ խառնած ջրով եռացնել  
և զգուշութեամբ մաքրել աւազով: Ավայան, այնուամե-  
նայնիւ, աղի և թթու խորտիկներ երբէք չպէտք է եփու-  
ին և մի ժամից աւել մնան կաւէ անօթների մէջ: կաւէ  
անօթի կապարեայ վէրնիճից պատճառեալ թիւնաւորումը  
վրայ է հասնում անկատելի կերպով, ծածուկ, և շատ յա-  
ճախ պատճառէ լինում հիւանդութեան, որի ծագումը երբեմն  
կատարեալ մութ է մնում: — Խետաղեայ անօթներից, բացի  
ոսկեայ և արծաթեայներից, միայն էր չի կարող կե-  
րակրի մէջ ոչ մի վնասակար նկալ խառնել, ի հարկէ. ա-  
նօթը այստեղ էլ չպէտք է կապար պարունակէ: Ամէնից  
յաճախ վնասակար է լինում պահանջ անձնը, որովհետեւ նորա  
մէջ հեշտութեասը դոյանում է պղնձէ ժանդար: Ցինչ կամ  
շորունէ (պղնձի և ցինկի խառնուրդ) անօթը նմանապէս  
հեշտութեամբ կարող է թիւնաւորել: — Անզէ անօթնե-  
րը. թէ որ կապար չին պարունակում, բոլորովին վնա-  
սակար չեն, միայն թէ առիթու անափից (անազի և մնղիկը  
խառնուրդ) չլինի: — Աւելիուից կամ նոր արծունից (պղնձի, ցին-  
կի և նիփկիլի խառնուրդ), նմանապէս և փայլուն անափից  
(նոր արծաթ անազի մնծ խառնուրդով) շինած անօթնե-  
րը կարող են զործ ածուիլ ինչպէս արծաթէ անօթներ:

5) Պիեռն է հորսողական գործարանները պաշտպանել  
հետառարութեաներից: Սորան մեծ մասամբ կարելի է  
արդէն հասնել, հետեւելով սննդարար միջոցների  
որակութեան և քանակութեան, ինչպէս և նոյա-  
դիւրամնաբութեան վերաբերութեամբ նոր յիշեալ  
կանոններին: Բայց, բացի զորանից, մարտողական  
զործարանների յայտնի մասերը տուանձին հօգատա-  
ռութիւն ևն պահանջում:

ա) Բերանի խորշում առանձին հոգատարութիւն  
են պահանջում առաջնորդ, և այն զեռ փոքրիկ հասակից,  
որովհետեւ միմիրայն լաւ ծամած կերպուրն է զիւրու-  
թեամբ մարտում: Լէըն երբեմն վիրաւորվում է ատամ-  
ների սուր ծայրերին և սուր զուրս ընկած մասերին շր-  
փուելուց, ատամների այզպիսի տեղերը հարկաւոր է սը-  
զոցել: Պէտք է հեռացնել ուսուած հաշուները, որոնք կա-  
րող են զժուարացնել կուլ տալը, խօսալը և լսողութիւնը:  
Խիստ վտանգաւոր սովորութիւնն է բերանի մշջ գուրքի: ուշի  
առաջնորդ խորացնելը (գնդասնղ, ատամի մաքրիչ, պաղոց  
կորիղ), որովհետեւ շունչ առնելուց նոքա զիւրաւ կարող  
են կլանի և շնչափողի մէջ ընկնել, որից շատ անզամ  
մահ է պատճառվում:

բ) Սոսորդը և կրանը պէտք է՝ պահպանել խիստ  
տաք կամ կծունկիթերով այրելուց, այդպէս և երբեմն կուլ  
տուած պինդ սուր մարմինների (սուր կորիզներ) պատճա-  
ռած վնասներից:

գ) Ստամոք և կերակրով լքցուելուց բարձրացնա-  
շանառաւ է, ուստի ուտելու ժամանակ չպէտք է սեղմել  
նորան հաղուստալ (կորակով, ձգուած իւրկաներով, շալ-  
վարով փոկերով), նոյնպէս վնասակար է լիք ստամոքսով  
նստել խիստ թեքեալ դրութեամբ: Ստամոքսը ոչ զիւրա-  
մարս կերակրուներով, կամ շատ զրգուիչ համեմներով

իեսու շցունելոց՝ և զգման է շատ կամ քիչ երկար միջոցով։  
Խանգարուած ստամբսը շուտով ուղղելու համար ամենալաւ միջոցը է ժուժկալութիւն կերակուրներում (փահրիզ) մի քանի օրով, այսինքն է որքան հնարաւոր է ընդունել քիչ կերակուր, ոչ շատ ցուրտ, բացառապէս հեղուկ և փոքրիկ բաժիններով։

Ստամբսի համար շատ օգտակար է փորի վերի մասի բարձր պահելու։ Թիւնուոր հետեւ որքան հնար է պէտք է շուտով հեռացրած լինին ստամբսից սիրտ թափելով (մատով կամ փետրով սիրտը խառնելով)։

Դ) Ա. Գիքային իո ո զ ո վ ա կ ը շատ հեշտ եղձվում է փորի մրսիկուց, Եղծումը սովորաբար արտայայտվում է որովանը առաջնական է բարձր փորացակի հետ կամ առանց դորան, և ընդհանրապէս նորանից ազատվում են փորը տաք պահելով (տաք թաշկինակիներով, կոմպրեներով)։ Փորացակի մեծ մասամբ գոյանումէ հաստ աղիքի մէջ, ուստի դորանից բժշկուելու համար պէտք չէ լուծողական գործ ածել, որը վասում է ստամբսին և նուրբ աղիքներին, այլ գործ ածել ողողիչներ (գրեխ, դաստուր)։ Փորացակի և փորակապութեան ժամանակ պէտք է միշտ մըտաքերել որ փուլուն ուղարկուն կարող է պատճառուիլ և խնդրել բժշկի օգնութիւն։ Աղեթափութիւնները նայելով թէ ինչ տեղ են երեսում, անուանվում են պորտային, ածուկի և աղջրի, Նոքա այդ տեղերում կազմում են մեծ կամ փոքր ուսուցներ, միշտ մորթով ծածկած, Այդ ուսուցների մեծ մասը անյայտանում է ուղղելուց, այն է նորանց մէջ պարաւնակեալ փորոտիքը յետ փորի խորշը մղելով, Յայց հազի և ձգտման ժամանակ ուսուցների կրկին երեսում է։ Ոհա այն եղծութերը, որ կարող է պատճառել աղեթափութիւնը, ցաւ բուն իւր մէջ և փորի մէջ, աղիքների զրպոց, փորակապութիւն։ Աղեթափութիւնը վառագույն է դառնում, երբ նա ճմլում է,

այսինքն երբ աղեթափի պարկի մէջ պարունակեալ փորտիկների մասը բաժանվում է միւս, զեռ ևս փորի խորչի մէջ մնացած մասերից։ Ճմլման վասնգաւորութեան պատճառաւ աղեթափութեան վերայ պէտք է խիստ աշաղութիւն գարձնել, խորհուրդ հարցնել փորձառու բժշկից և լաւ աղեկապ (բանդաժ) ունենալ.

Կոյր աղիքի ուժնեանունի և կուլ տուած պինդ մարմիններ զանուելուց, հեշտութեամբ լորբազում է զոյանում։ Կուլ և հաղութեանուն ճիծուները սովորաբար՝ այդպիսի աղիքների մէջ են գոյացութիւն ունենում և զանազան ախտեր են պատճառում մարմի մէջ։

Պէտք է նպառել մարտունեան մէջ մանակցող գործիների գործողութեան։ Այդ տեսակ գործիքներին պատկանում են ոչ միայն ստամբսը և աղիքները, այլ նոյնպէս լեարզը, փորագեղձը, արիւնատար և աւիշիեան անօթները։ Ուրեմն այս գործիքների մէջ զիսաւորապէս պէտք է շարժումներ պահպանուի, ինչպէս և արեան և աւիշկի շրջանառութիւնը։

#### Բ. Շնչառութեան կանոններ

Շնչառական գործողութիւնը կարգին պահելու համար մենք պէտք է ուշաղրութիւն դարձնենք ինչպէս օդի վերայ, որով մենք շնչնենք առնում, նմանապէս և նոյն իսկ շնչառական գործարանի վերայ։

Ա. Լաւ մըսութիւնն օդը առաջին պայմանն է շնչառական գործունեութեան բնական ընթացքի և շնչառական գործիքների առողջ գրութեան համար։

Օդը առողջարար և մաքուր է՝ երբ նա իւր որոշ շեալ բաղադրիչ մասերից (այն է ազօթ, թթուածին և ջրային գոլորշի) պարունակում է բաւականաշափ քանակութեամբ և օտար նիւթեր չէ պարունակում (գազերի, փոշոյ և ծխի կերպով), որոնք կարող լինեին վնասել կամ արեան որակութեան, կամ շնչառական գործիքների զրութեան, մանաւանդ թռփերի։ Մնթնողդային օդի վնասակասար խառնուրդների մէջ, իւր վանդաւորութեամբ, առաջին տեղը բունում է ածխային թթուն և ածխածնի օքսիդը։ Նոյնպէս էլ վնասակար է աղտեղութեանց տեղերի գազի, կամ թիւնաւոր գորդշների, նուրբ փոշոյ և ծխի շնչառնելը։

Բայց մթնողդային օդի Ալբա-թթվը այնքան շատ չէ պահասում, մինչև անդամ փակեալ սենեակների մէջ, որովհետեւ լուսամուտներ ու դռները ամրապէս չեն փակվում և հետեւթար օդի անդադար նորոգումը հնարաւոր է լինում։ Բայց եթէ մի որ և իցե բնակարանի մէջ շատ հոգիք երկար միջոց շունչ քաշեն, այն ժամանակ շուտով օդը այնքան կապականի, որ նորանում գժուար կլինի շունչ քաշել, մանաւանդ այդպիսի պայմաններում գումարուող ածխային թթուի պատճառաւ, որովհետեւ մենք շարունակ արտաշնչում ենք այդ վնասակար օդը։ Օդի ապականումը յաճախ էլ գոյանում է վառուող ծրագներով ու գազերով։ Ճխախոտի ծրախով և ածխահոտով։ Սենեակում անդադար մաքուր և առողջ օդ ունենալու համար, անհրաժեշտ

հոգալ, որ սենեակի օդը յաճախ փոխանակուէր արտաքին թարմ օդով։ Այդ մասին այն սենեակները, ուր երկար ժամանակ շատ հոգիք պիտի կենան, ուրեմն զլսաւ որապէս ուսումնարանական և գործառորաց կացարանները, պէտք է ընդարձակ լինեն, լաւ օդափոխութեւն ունենան, չափազանց չլքուին մանուկներով և զործառորներով և յաճախ հոգահարուին։ Այդպիսի սենեակներում երբ բոյը ու վառուող ձրագները կորցնում են իրենց պարզ փայլմունքը, նշանակում է, որ օդը անպէտք է զարձել շնչառութեան համար։ Հոտաւէտ նիւթերի ծխելը, երբէք չէ կարող օդի նորոգման տեղը բռնել։ Բայց սենեակի մէջ տերևաշատ բոյսեր պահէլը շնչառութեան համար լաւ է. արեգակային անտառային օդը կուրծքի և արիւնի համար կատարեալ բալզամ է։ Անհրաժեշտ հարկաւոր է, մանաւանդ էլ, հոգալ մաքուր օդի մսսին նոշարանների համար (տես, ներքեւ քուն և բնակարան)։

Ածխային Ալբան չափազանց վնասակար է շնչառութեան համար։ Կա այնքան առաւել ուժով է ներգործում, որքան նա աւելի է չնչառնելի օդի մէջ և որքան երկար են ծծում այնպիսի օդը։ Ածխային թթուով խիստ առատ օդ ծծելու հետեւանքը լինում է արագ վրայ եկող տկարութեան զգացում, ուշաթափութիւն և մինչև անգամ խեղդաման։ Ածխային թթուով թիւնաւորուելու առաջին նշաններն են թունդ, բարախող գլխի ցաւ, ականջների մէջ աղաղակ, զլիի պտոյտ, չնչարգելութիւն, կըրծքի սեղմուկի, սրտի բարախում, դէմքի կապտագոյն կարմրութիւն։ Բայց աւելի յաճախ վնասակար հետեւանք-

ները հետզհետէ, կամաց կամաց են վրայ հասնում և այդ մասին հասկանալի չեն լինում և ուրիշ պատճառների են վերաբերվում, գակեալ տարածութիւններում ածխային թթուով օդի ապականումը ծագում է ինչպէս մարդկանց և կենդանեաց չնշառութիւնից, նմանապէս և այրման իւրաքանչիւր գործողութիւնից (վառարանների վառելուց, արուեստական որև իցէ լուսաւորութիւնից): Մեծ քանակութեամբ ածխային թթու. կարող է գումարուիլ եռ եկող փինի պահած զինետներում, ածխահանքերում, կըրեայ վառարաններում և զարեջրի գործարաններում, այդպիսի տեղեր հարկաւոր է մտնել զգուշութեամբ և չմնալ նոցա մէջ երկար ժամանուի: Առվորաբար օդի ապականութիւնը այդտեղ արտայայտվում է հոտով և խեղդաման լինելու զգացմամբ:

Աջիածան է առաջը (ածխանուա) նոյնապէս շատ վտանգաւոր գաղ է, որ արդէն շատ անգամ սպանել է ննջողներին: Այդ գաղը ածխային թթուից նրանով է տարբերվում, որ արեան փոքրիկ մարմիններից խլում է կեանքի համար անհրաժեշտ թթուածինը և որա տեղ նորանց մէջ է մտնում: Նա առաւել հեշտ արծարծվում է սենեակներում, երբ վառարանի ածուխը մարելուց՝ խողովակը խիստ վաղ է փակած եղել, որը զժբաղդաբար խիստ յաճախ է պատահում, չնայելով շատ գժբաղդ զիպուածներին: Ընդհանրապէս, երբ որ կատարեալ և հանդարտ այրում (միացաղ բացով) է մինում լինչպէս կրակարանների վրայ կամ այլ վակեալ տարածութիւններում կրակ անելուց, հեշտ է դոյանում այդ վտանգաւոր ածխանի օքսիզը, որի ներկայաւթիւնը, զժբաղդաբար, սկզբում խիստ փոքր է զգալի լինում և դժուարութեամբ կարող է իմացուիլ: Ապիտակեղէններ արդիկելուց խիստ վասակար է արդուկը տաքացնել այրուսղ ածուխով լիք բաց, կրակարանի վերայ, որը մի, և նոյն սենեակնումը լինի, ուր և

արդկում են, դորանից շատ չուտով աշխատողների վերայ զլսի ցաւ, զլսի պտոյտ, ընդհանրապէս տկարութեան զգացմունք է դոյանում:

Լուսաւորութիւն է առաջն ժամանակին գաղ (ծանր ածխածնային գաղ) վերջին ժամանակներում, երբ մասնաւոր աներում էլ գաղային լուսաւորութիւն սկսուեց, արդէն շատ անգամ խեղելու պատճառ է եղել: Ոչ միայն չփակեալ գաղային բաժօկներից, այլ նմանապէս զաղային փչացած խողովակներից էլ գաղը կարող է սենեակների մէջ դուրս գալ, բաղդաւորապէս այդ գուրս եկած, չվառած զաղը՝ իւր վատ հոտովը զբաւ է տալիս իւր մասին: Հենց որ գաղով շուսաւորած բնակարանի մէջ նկատելի լինի այդ հոտը, պէտք է իսկոյն նեռացնել բոլոր վառուող առարկաները (մունիր), դռներ ու լուսամուտները բանալ և փակել զաղ տանող խողովակների զիսաւոր ծորակները: Այդ միջացում ամենափոքրիկ բացը, զոր օր, վառած լուցկին, չափաղանց վատնգաւոր է: Եթէ գուրս մղուած զաղը արդէն որ և իցէ տեղում վառուելիս լինի, պէտք է նորան մարեցնել թացացրած հնոտիներով: Յէլև ածիալլութեանցին գոյանում է ամէնից յաճախ քարածուխի հանքերում և, եթէ վառուի այրուող մարմիններից, սարսափելի պացմունքներ կպատճառի այնտեղ: Նա թոյլ, անախորժ հոտ ունի, և ի հարկ է չնշառութեան համար վասակար գաղերին է վերաբերվում նոյնապէս:

Արդարունուցի սուր գարշահոտութիւն ունեցող հունը, մասնաւանդ ծծմբաջանը, որ հոտած ձուաների հոտ ունի (պողպատը և նոյնապէս սպիտակ իւղային ներկը նրանից սեանում է), շատ հեշտովթեամբ կարող են սպանել անգդոց մշակին: Բայց նոքա կարող են, նոյնապէս էլ, աստիճանաբար, աննկատելի կերպով խանգարել առաջութիւնը, եթէ արտաքնոցներից սենեակի օդի մէջ (մասաւանդ ննջարանի) թափանցում լինեն:

Հահճաշին գողէւը, որ գոյանում են ճահճներում բռւսական և կենդանական մնացորդների փտելուց, զլիսաւորապէ՛ թեթեւ ածխաջրածնից են քաղկացած. եթէ երկարժամանակ ծծնված նորան, արեւան ապականում կաղատճառուի, որ մնանում ընդհատուող տինդով է արտայայտվում, իսկ տաք երկիրներում վտանգաւոր ճահճային ջերմով.

Վահական (Ալեռ, սռ- և հ-հաշաչին) գուրշընչը, զորօր. քղուորի աղօթախառը և ծծմրախառը թթուների, սրօմի անուշատրի, լուսակրի, մնդկի, կապարի, մկնդեղի և այն, չնչառնելի օդին են խառնվում յայտնի զբաղմունիքների և աշխատովթեանց ժամանակ և խիստ վնասակար աղդեցութիւն են ունենում առողջութեան վերայ. Ով որ այդպիսի նիւթերի հետ գործ ունի, պարտաւոր է որքան հնարաւոր է թոյլ չտայ նորանց թոքերի մէջ մտնելը. իւրաքանչիւր անձ պէտք է զիտենայ ինչ նիւթի հետ գործ ունի ինքը, և եթէ նիւթը թիւնաւոր է, այն ժամանակ անհրաժեշտ է զգուշութեան համապատասխան միջոցնը և հակաթոյներ զիտենալ. Ընդհանրապէս եթէ պարտաւորուած պէտք է շունչ քաշել անմաքուր և վնասակար օդի մէջ, պէտք է չնչառական գործիքները պաշտպանել վնասակար գոլորշիներ մտնելուց՝ քթի և բերանի առաջ բեսպիրատօր, կտաւ կամ սպունդ կապելով. Եթէ այդ էլ չի կարելի անել, այն ժամանակ գոնչ պէտք բերանը փակ պահել և շունչ քաշել միայն քթով, որպէս զի անմաքուր օդը իւր բոլոր վնասակար նիւթերով և խիստ էլ արագ չմտնէր թոքերի մէջ. իսկ առհասարակ աշխատովթեան բնակարաններում հարկաւոր է մաքուր օդ պահել պատշաճաւոր կերպիւ հովանարելով ու ջուր սրսկելով.

Սնութել, փոշույ և գոլորշիների կերպով, շատ անգամ այնպէս անհասելի կերպով ծծվում է, որ նորա

պատճառած խանդարումները վերաբերում են ուրիշ ամենայն տեսակի պատճառների: Այդպէս զորօր. մի քանի մկնդեղ պարունակող կանաչ և կարմիր ներկով ներկած առարկաներ (գորգեր, վարագոյրներ, հանդերձ) կարող են թիւնաւոր լինել չըբեմն նոյնպէս պատահում են առուծակար մէջ նշանաւոր քանակութեամբ մկնդեղ պարունակող բնածարապէ մոմեր, որոնք վառուելուց մկնդեղը գոլորշի է փոխվում, սխառի հոտ է տարածում և ինչպէս թիւնաւոր փոշի նստում է առաւել ցուրտ առարկաների վերայ: Այդպիսի մոմերը զանազանվում են ալերասատրի (սպիտակ գաճը) նման սպիտակ գունով, կոտրած տեղից աւելի ս նշաննեան, քան բիւրեղանման կարծը շինուածք ունին և վառելուց թոյլ սպիտակ ծովս են թողնում, բացի այդ, վառուած մոմի պատրուպի ամրող տեսանելի մասը սի է լինում, քանի որ սովորաբար պատրուզը բոցի ներքեմի մասում սպիտակ գունով է:

Փոշէլց օչը խիստ վնասակար է չնչառական զործիքների համար, առաւել գեռանաս գործաւորների թոյկրծքի համար: ուստի իւրաքանչիւր ոք, ով իւր զբազմունքների տեսակի համեմատ պարտաւորուած է փոշելց օդի մէջ աշխատելու, պարտաւոր է աշխատէ որքան կարելի է փոշի փոքր ծծել: Այս նպատակի համար բերանի ու քթի առաջ պէտք է կապել մետաղաթելեայ դիմակ նուրբ կտաւով բեսպիրատօր, թացացրած աղլուխ կամ սպունդ և շունչ առնել հանգստութեամբ, աւելի քթով, քան բերանով այսպիսավ միշտոյ նշանաւոր մասը ըթի անցքերումը կմնայ: Աշխատելու բնակարանները պէտք է լաւ հովանարուին և յաճախ ջուր սրոկեն նորանց մէջ, փոշելց մթնոլորդում չպէտք է շատ խօսալ երդել իսոր շունչ առնել:

Ամենայն ծռ-ի, նոցա մէջ և ծխառողինը, չնչառական գործիքների թշնամին է, մանաւանդ նա վնասակար է

յաճախ հազի կամ դժուարաշութեան ենթարկեալ մարդկանց:

Թառը օրը, առաւել արեգակնային անտառային օդը, առողջութիւն պահելու գլխաւոր միջոցներից մէկն է: Թարմօդը նպաստում է նոյնպէս հիւանդութեանց մեծ մասի բուժելուն, և լողալու երթեւելութիւնները զիստորապէս նորան են պարտական առողջների և հիւանդների վերայ արած իրենց բարենպաստ ներգործութեամբը: Դորան հակառակ, սեղմուած, մութ (առաւել բակի վրայ դուրս եկող) բնակարաններում, ցածր, մարգկերանցով լիք սենեակներում, մութ արուեստանոյներում, ցեխոտներքնատներում և այլն, թարմ օդի պակասութիւնը պատճառում է առողջութեան խանդարում, որը ուզգում է ոչ թէ գեղերով, այլ միայն թարմ, մաքուր օդով: Ամենից առաւել տանջփում են մանուկները թարմ օդի պակասութիւնից, ինչպէս տան, նմանապէս և ուսումնաբանում: Նստական կեանք վարելու և տանը երկար մնալու ստիպուած մարդու համար զիստոր կանոնը նրանում է կայացած, որ որբան կարելի է յաճախ թարմ օդ վայելի, խորշելով նոյն ժամանակ միայն խիստ մեծ տաքութիւնից և ցրտից, սուր կամ ընդ միջանց քամուց, խոնաւութիւնից և փոշուց: Թարմ օդի բարերար ազդեցութիւնը առաւել սաստկանում է մարմնական չափաւոր շարմունքներով և այդ միջուցումէլ հանդարար, խոր շունչ քաշելով և շունչ թողնելով:

Սենեակների օդի մաքրութեան ամենից լաւ կարեմ է հասնել յաճախ օրը նորդէլով. նորան բաւականին բարձր աստիճանի տաքացնելով և յաճախ տախտակամածները լուանալով: Ապականուած օդը կարելի է մաքրել գաղերով էլ, որոնք ոչնչացնում են օդի վնասակար խառնուրգներին: Առաւել գործածական են քղուորի գոլորշիները, (որ դոյանում են քղուորային կրի վրայ թթուներ ածելով), այնույն թթու գողորշիները. ինչպէս է ծծմբախառը թթու (ծծումբ այրելուց) աղօթախառը թթու (վառող այրելուց), քացախային թթու և վառած թթուներ (քացախ, սուրճ, շաքար, սամթ, գիհւոյ պտուղ և այլն ծխելով):

Գ. Առաջանակ նոյնպէս կարող են նպաստել օդ մաքրելու Օրինակ. նորդիկացրած ածուխ, ցուրտ ջուր սառոցցով, թացացրած սպոնդ, սրճի թարմ դիրտ, Անոշառնակ հիւներ ծիւելով բուրովին չկ հրեւել հաւաք:

Բ. Ենչառական դործիքները, իւրեանց կանոնաւոր զործունէութեան համար, պէտք է միշտ լաւ վիճակի մէջ պահուին: Բայց այդ զործիքներից հէնց ամենահարկաւորներին, այն է կրծքի վանդակին և թռքերին, ամենից աւելի վնաս են պատճառում: Ինչ վերաբերում է կրծքի վանդակին, խիստ յաճախս արգելվում է նորա զարդանալը լայնութեան կողմանէ, և սովորաբար հէնց արդէն ծնունդից սկսեալ, այսինքն է երեխային սաստիկ ամուր խոնճարուելով: Կնօջ կրծքի վանդակի լայնանալուն կարող են խափան լինել կօրսէն, իւր կաների պինդ կապելը, նեղ հանդերձները, այր մարդկերանցը—նեղ բաճկոնները, վարտիքը, սերտուկները, փոկերը, երկու սեռիներինը ևս — յա-

Ճամա կորացած նատելը (գրելուց, կարելուց և այլն): Այսկաւ մարդիկ են հօգում կրծքի վանդակի բաւաշիմնաչափ լայնանալու համար, բայց նոյն միջոցում գորան կարելի է հասնել մարմինը ուղիղ պահելով, սաստիկ և խոր շնչառութեամբ, պարտ ու պատշաճ մարմնամարզութեամբ: Շնչառական միանակները, որոնք լայնացնում են կրծքի վանդակը, պէտք ոչ միայն լաւ մնունգ ստանան առողջ կերակրով և լաւ օդով, այլ և վարժուին հանդարտ խորը շնչառութեամբ: Շատ թողլ մկանունք ունեցող սակաւարիւն մորդկանց շնչառութիւնը երբեմն այնպէս դժուարանում է, որ սխալմամբ թոքերից տանջուողներ են համարում նորանց: Որքերը, օդի շտեմարանը և արեան նորոգման տեղը, պէտք է ամենից առաջ բաւականաչափ ընդարձակութիւն, այնպէս էլ ընդլայնելու և ամփոփուելու հարկաւոր ընդունակութիւն ունենան՝ շնչառութիւնը կանոնաւոր պահելու համար: Թոքերի միջի արեան շրջանառութիւնը (արեան փոքր շրջանառութիւնը) պէտք է աշխուժորէն կատարուի: Ուստի թոքերի բնական վիճակի պայմանները հետեւեալներն են. Հայ կազմուելով և շարժական իրծիք վահուակ շնչառական ուժեղ միանակներ և շատ հսկութ օդ: Թոքերի վերայ բարերար ազդեցութիւն են գործում. հանդարտ և խոր շունչ առնելու ու շունչ թողնելը մաքուր օդում, բարձրաձայն կարգութիւն, ոչ խիստ լարեալ երգելը և փողաւոր երաժշտական գործիքների վերայ խաղալը: Նմանապէս ժամանակ առ ժամանակ ծիծաղը, փոշտակը, յօրան-

ջելը, հառաչելը կարող են դիւրութիւն տալ թռուքերին:

Թռուքելը հիւանդութիւններից պաշտպանելու համար անհրաժեշտ է նորանցից հեռացնել որքան հնարաւոր է ոչ միայն անմաքուր, վնասակար օդը, այլ և խիստ տաք կամ ցուրտ օդը, առաւել գիշերով՝ քնի ժամանակի: Դորանից յետոյ. զգուշանալ է հարկաւոր տաք օդից խիստ արագարար ցուրտ օդի մէջ անցնելուց, եթէ տաք օդում մի առ ժամանակ շունչ քաշել, խօսացել, երգել են՝ այն ժամանակ ցուրտ սուր օդում հարկաւոր է շունչ առնել միայն քնիթով, չբանալով բերանը, կամ, առաւել լաւ, առժամանակ քիթը և բերանը ծածկել աղլուխով (կամ բեսպիրատօռով): Բացի այդ էլ, անհրաժեշտ է հողալ և այն մասին, որ արիւնի դէպի թոքերը հոսելը երբէք չսասականար չափից գուրս ջակիաւ զանց հոսում գոյանում է բոլոր այն հանգամանքներում, ինչ որ օրտի բաբախման սաստկութիւն և շնչառութեան արագութիւն են պատճառում, զուրօրինակ մարմնաւոր սաստիկ լարումների ժամանակ (սաստիկ լարեալ վաղելու, ինը բարձրանալու, պարի, մարմնամարզութեան), տաքայնող խմիչքներից, կըրքերի զրգումներից և այլն: Սաստիկ պաղպաղ խիստ տաքացած լինելուց յետոյ, մանաւանդ մէջքի, թեատակերի և ոտերի մրսիլը, նոյնպէս պատճառում է շատ անգամ թոքերի հիւանդիւթիւն: Մրսելու դէմ եփուելու համար պէտք է իրան վարժեցնել ցուրտ լուացմանքների և շփումների, շա-

բունակել աշնանային զով օրերում էլ սառը լողնալը, ամառը որքան կարելի է թեթև հագնուիլ և շատ էլ չվախենալ վատ եղանակից: Բայց այս բանին սկսել կարելի է միայն այն ժամանակ՝ երբ թռչերի թռւլութեան նշաններ չլինին (հաղ, շնչարգելութիւն). յառաջօրէն պէտք է հեռացնել հիւանդութիւնը, և այն ժամանակ արդէն կարելի է մըտածել միսելու դէմ իրան վարժեցնելու համար, սաստեկ զգուշաբար կաշելով այդ բանին: Թռչերի դիրութիւնը, որ զիսաւորապէս արտայայտվում է շընչարգելութեամբ, կրծքի ցաւերով, հազով, խուխով (բլղամ), պահանջում է մարմնական հանդիստ, մաքուր տաք օդ և թեթև (չզբգուղ) կերակուր:

**Ակնջան** և հեղջանակ վրայ են հասնում շընչառութիւնը դադարելուց: Այս պատճառվում է կամ նրանից, որ օդը չի կարողանում թռչերը մտնել (ինչպէս ջրում խեղուողների և կախուածների), կամ նրանից՝ որ մեծ քանակութեամբ թիւնաւոր օդը (ինչպէս ածխածնի օքսիդ), ածխային թթու, լուսաւորութեան դադ) են շնչառնում: Այդպիսի կեղծ մեռեալներին ազատելու ժամանակ զըլսեաւոր խնդիրն է որքան հնորդաբ է շոտով վերադադունքնել շնչառութիւնը, և հետեւաբար անյատաղ հեռացնել բոլոր աղոտութիւնները, որոնք էեղծ մահապատճեցնին, զորօրինակ պարանոցը ձնշող պարանը, բերանից ջուրը, վնասակար գազերը և այլն: Այսույեաց կեղծ մեռեալներին պէտք է դնել մաքուր օդուղութիւնը կերպանակութեամբ, որ ուղինի շրմելը և ձնշելը հանգըստութեամբ մէջ, մերկացնել զդուցութիւնը:

բայց որքան կարելի է արագ (պատռելով հանդերձը, մաքրել բերան ու քիթը և փորձել վերականգնելու շնչառութիւնը և սրտի գործունէութիւնը մասամբ շնչառական մկանունքերի և սրտի թափանցիալ շարժմունքները զրդուելով, մասամբ մեքենայական ձանապահաւ, արուեստական շնչառութիւն գործելով և թռչերի մէջ օդ փշեյով:

Կեդ մուետներուն օդունալիւն հարկաւոր է, ամենից առաջ, տաքացնել մարմնը (տաք սաւաններով, անօթներով, աւազով, մոխրով, վաննայով), դէմքի և կրծքի վերայ ցուրտ ջուր սրսկել, քորել քիթը, որկարը և ներբանները, պիսի և ծործորակի վերայ ուժով թափուող ջուր ածել, քթին թմբնդ զրդուող գոլորշներ մօտեցնե (անուշատի, քացախի թթուի, վառուող վետուրների), մորթու վերայ հալած կնքամոմ կաթեցնել: Եթէ այս միջոցներով շնչառութիւնը չվերականգնի, այն ժամանակ պէտք է աշխատել թռչերի մէջ օդ փշելով (կեդ մեռեալի քիթը փակած) և արտաքուստ ձնշելով կրծքի խոռոչը փոփոխաբար լայնացնել և սեղմել: Գրա համար այսպէս են վարպւմ: Կեդ մեռեալն փորի վերայ են դնում, նորա ձեռներից մէկը դնում են ճակատի տակը, այնպէս որ բերանը և քիթը աղատ են մնում: Յետոյ բաց ձեռի ափերով թեթև ձնշում են մէջքի վերայ և մարմնը շրջում են այն կողքի վրայ, որ կողմի ձեռը ճակատի տակ է զրուած, և յետոյ կրկին արագ փորի վրայ են շրջում, այնու յետ նորէն ձնշում են մէջքի վրայ, շրջում են մարմնը, ինչպէս առաջի անգամ, և այս օրինակը կրկնում են 15—16 անգամ մի վայրկեանում: Այս եղանակով կենդանաւակելու ժամանակ պէտք է ուշաղրութիւն գարձնել, որ ուղինի շրմելը և ձնշելը հանգըստութեամբ լինին, չշտացնելով բայց և անընդհատ մի-

ամբողջ ժամի ընթացքում, Զրի մէջ խեղդուածների, մինչև անգամ 20 վայրկեան ջրում մնացողների, կեանքը շատ անդամ յուղողել է վերադարձնել այս միջոցով:

Կենդանացնելու մի ուրիշ, զուցէ և առաւել ճշմարիտ եղանակ հետեւեան է. կեղծ մեռեալին դնում են մէջքի վրայ փոքր ինչ զառիվայր դիրքով, այնպէս որ գլուխը բարձր լինէր, զիմն կամ ուսերին նեցուկ են տալիս կոշտ բարձեր կամ ծալած հանդերձներ, ուսի տակը դնելով նրանց ջետոյ կեղծ մեռեալի լեզուն առաջ են քարշում և պահել են տալիս շրթունքների մէջում. Մեռեալի զիմն ետելց կանգնելով, բռնում են նորա բազուկներից, իսկ և իսկ արմունկների տակից, հանդարտ և հաստատ ձգում են նորանց դէպի վերև, զիմն վերայ և այնպէս տարածած պահում են մօտ 2 մանր երկրորդ, դորանով օղը ծծվում է թռքերի մէջ; Այսու յետ բազուկները կրկին տանում են ներքեւ և զգուշութեամբ, բայց հաստատ հուփ են տալիս նրանց մօտ 2 մանր երկրորդ կրծքի կողքերի վրայ, սրանով օդը արտաքսվում է թռքերից, Այդպէս շարունակում են անել մօտ 10 անգամ վայկեանում, մինչև որ չնչառական շարժումները նկատելի են լինում: Ալավելաց պէտք է առ ժամանակ կանգնացնել այդ գործողութիւնները և յետոյ շարունակել նորանց մի փոքր թողլ կերպող մինչև կատարելապէս կեանքի վերադառնալը, Աթէ կարելի է, հարակաւոր է սթափուողի բերանը մի փոքր ցուրտ ջուր կամ զինի ածել, կենդանանանալուց յետոյ վրայ հասած քունը և քրտինքը չպիտի խանգարուին: Թէ որ ալպելու դրչելը անյաջող մնան, այն ժամանակ մեռեալին պէտք է պարկած թողնել տաք սենեակի մէջ, լաւ չորացնելով նորան և վերմակովծ ածկելով, բայց բաց դէմքով, և սպասել զիակացին երեսոյթներին: Այս նախազգուշութիւնը այն մասին է հարկաւոր, որ երբեմն մեռեալ կարծեցեալը սթափիվում է

հէնց այն ժամանակ, երբ ազատելու փորձերի վերջանալուց յետոյ՝ թողած է լինում հանգիստ և խաղաղ:

Կախեալին պէտք է անմիջապէս ազատել պարանոցը ձգող պարանից, չը թողնելով նորան գետին վայր ընկնել այդ ժամանակի:

Զրահեղծին հարկաւոր է զուրս հանել ջրից որքան կարելի է շուտով, բայց առանց բռնութեան և զգուշանալով որ և իցէ ցնցումից, երերումից և մարմինի գլմիվայր կախուելուց, քիթը, բերանը և ականջները զբուշաբար մաքրել տիղմից, աւազից և ջրից: Յետոյ, եթէ եղանակը բաւական տաք չէ, պէտք է մեռեալ կարծեցեալին մօտիկ գտնուող մի տաք բնակարան տանել ձեռների վերայ: Այսաեղ արագ նորա հանդերձներն հանել (կտրելով հանդերձը) և զգուշութեամբ կողքի վերայ դնել, այնպէս որ մարմին վերին մասը մի փոքր կախուած մնար և ջուրը կարողանար դուրս հոսիլ բերանից: Դորանից յետոյ արդէն հարկաւոր է գործի դնել կենդանացնելու վերոյ յիշեալ փորձերը. Հւացածակ է լաւ առել առ խածնի օքսիդի, ածխային թթուուի, արտաքնացների գազերի մէջ) որքան կարելի է շուտով պէտք է հեռացնել վիասակար գազի միջից և տանել մաքուր օղի մէջ, որը բաց գուների և պատուհանների միջոցաւ պէտք է անդադար վերանորոգուի:

Սառածին չպէտք է շուտով տաքացնելու աշխատել, այլ հարկաւոր է փոքր առ փոքրյետ բերել, Նորան պէտք է ներս տանել չտաքացրած սենեակի մէջ, շորերն հանել, ձիւնով կամ սառոցի կտորով ծածկել մինչ ուռնդներն և բերանն իսկ, մինչև որ մորթը յետ կը զայ և անդամները շարժական դառնան: Եւ երբ նորա մորթու ջերմութիւնը կը վերականգնի, պէտք է ձիւնը վերառելով՝ ամբողջ մարմինը շինել մի կտոր չտաքացրած չուխայով (մահուղով) և յետոյ նստացնել նորան գաղջ վան-

նայի մէջ:

Սեռեալկար ծեց և ալփոքը կ մանուկների հստակաւոր է այս կերպ վարութիւնը Երեխայի ուսերից բռնելով այնպէս, որ բոյթ մատերը նորա առջիկ մասի վրայ ընկնէին, իսկ ձեռի ափերը մէջքի վերայ, պէտք է օրօրեւ նորան՝ դէպի յառաջ իւր վերայ բարձրացնելով, և յետոյ նորէն ցածրացնելով, որով պէտք է ուսի նորա կրծքային արկղի փոփոխաբար ընդլայնիլ և սեղմուիլը:

#### Գ. ԱՐԵԱՆ ՄԱՔՐՈՒԻԼԸ.

Քանի որ մենք կենդանի ենք՝ մեր մարմինը իւր բոլոր մասերում վշանում է շարունակ և բուլոր անպէտք դարձածը մազային անօթների պատերի արեանքով արեան հոսանքն է մտնում։ Այստեղ, արեան մէջ, ոստայնների այս մնացորդները այնպէս փոխվում են (այրվում են), որ կարող են բաժանուիլ արեան միջից (այնպէս անուանեալ արեան մաքրիչ գործարանների ներսում, որոնց վերաբերում են թոքերը, մօրթը, երիկամունքները, լեարդը): Այդ բաժանումը կատարվում է քանի որ արիւնը այդ մաքրիչ գործարանների մազային անօթների մէջն է հոսում։ Եւ ուրեմն՝ որպէս զի արեան մաքրութիւն կանոնաւորապէս կատարուի, պէտք է դրա համար նշանակեալ գործիքները բնական վիճակի մէջ պահպէլ լաւ, աննդեան ու խնամատարութեան միջոցաւ և նորանց միջի արեան շրջանառութեան նպաստել։ Մի և նոյն ժամանակ ներս շնչած թթուածնի օգնութեամբ արեան մէջ ոստայնների մնացորդների այդ

այրուիլն էլ մեր մարմինի ջերմութեան աղբերներից մէկն է. և եթէ ինչպէս հարկն է չի դոյանում այդ այրուիլը, արիւնն այն ժամանակ փշանում է։

(ա) Թթառելի մէջ արկենը հաֆրուելուց հորանից հետում է վառառիտ ածկային լւլուն։ Որպէս զի ոչ ինչ բան արգելք չլինէր ածկային թթուի հեռանալուն՝ մենք պէտք է հոգանք ինչողէս հափուր օրէ այնպէս էլ տառողջ լւառելի համար (տես. նախընթագլուխը): Բ էւրոպի մեջնու արկեն միջից լեզու հետ հեռանում են արեան հին փոքրիկ մարմինների բաղադրիչ մաս սերը, հարկաւոր է արկեն արկեն շրջանութեանը: Լեարդի գործունէութեանը շատ անգամ խանդարվում է նրանով, որ այդ գործին սեղմվում է խիստ նեղ հանդերձով (կօրսէիով, զօտիով, փոկերով): Կամ մարմինը երկար և սաստիկ թեքած պահպէլ։ գ) Երկայնականիների մէջ արկենի լուսականութեամբ է առաստ ջուր խմելով։ վում է առաջանուած է առաստ ջուր խմելով։ Այնպէս անուանեալ միզարեր կերակրային միջոցների ու զեղորայից օգնութեամբ (ինչպէս են նեխուր ծներէկ, պղպէղ, զիհւոյ պտուղ, խրէն, բևեկնի խոզ, խարանաղեղ և այն) երիկամունքների մէջ մէշ արտադրելու համար խիստ զրդամունքը կարող է եղծել երիկամունքներին։ դ) Մորկան մեջնու արկեն մէջնուն համարվում է քրտինք և նորթային առրողութեան դուրս դալովը։ Այս մաքրիչ գործին, իւր կարեռութեամբը, առանձին հոգատարութիւն է պահանջում։ Այնպէս անուանեալ արկեն մի-

ջոցները (թէյ, ջուր) խաբեբայների հնարածներ են:

Դ. ՄՈՐԹՈՒ ՀՈԳԱԾԱԲՈՒԹԻՒՆԸ.

Առթու հոգատարութեան նպատակն է այդ գործիքի մէջ գործողութեանց կարգաւորութիւն պահպանել, մանաւանդ քրտինքի և արտաշնչութեան արտադրումը: Հոգատարութիւնը դիմաւորապէս կայացած է մորթու մակերևոյթը փոշուց, ցեխից, մաշկային թեփուկներից, չորացած մորթու ձարպից և քրտինքից մաքրելում: Պարզ է՝ որ բոլոր այն վնասակար ազգեցութիւնները, որոնք կարող են մորթու գործունէութիւնը խանգարել, պէտք է հեռացնուին: Կորանց պատկանում են ամենայն տեսակ մնացունքները (այրած լինել, ցրատար լինել), ողի բարեխառութեան արագ փոխուիլը, խիստ նեղ հագուստը:

Արթու հագաղորութեան ամենակարեսը պայմանը մաքրութիւնն է, որին կարելի է հասնել լուացմանքներով, վաննաներով, մորթու շփելով, ինչպէս և մաքուր ձերմակեղեններով: Ամբողջ մարմնի ամենօրեայ լուանալը խիստ կարեւոր է առողջութեան համար: Այդ լուացմանքների ժամանակ սապոնը օդսակար է այն մասին, որ նա մորթու փրայի քրանքի կեղուր լուծում է, որին պարզ ջուրը չէր կարող խստակել: Ճեղմանքների փրկելը մի կերպ բանում է մարմնի ամենօրեայ լուացմանքների տեսքը, որ ովհեան ձերմակեղենը ներս է ծծում:

Թային արտադրութիւնները, իւր մէջ է առնում օդի մէջ պտտառող փոշին, որը այլակերպ մարմնի փրայ կնատէր, և մորթին չոր պահելով՝ արգելք է լինում կեղու գոյանալուն գիշերով հանած ցերեակուայ հաղաւից, իսկ ցերեկով հանած գիշերայինից, գուրս է գալիս մորթային արտաշնչութիւնը, այդպիսով երկուսն էլ նորէն թարմանում են:

Մողեն մաքրութեան ամմնից լաւ կարելի է հասնել ուստացմաններով (26 մինչ 28 աստիճան) սպառի ու շնչուր (ասուեղէնով կամ վրձինով) օգնութեամբ: Տաք ջուր չլինելուց՝ չոր չփմունքներն էլ կարող են օգտաւէտ լինել: Ցուրտ վաննաները և լուացմունքները չունին այն շահաւէտ, մորթու գործողութիւնները պահպանող ազգեցութիւնը, ինչպէս տաք ջուրը: Մորթային ջղերը գրգռելով նոքա մինչեւ անգամ կարող են վասակար լինել մի բանի հանդամանքներում, մանաւանդ սակաւարիւն, ջղու մարդկանց վերայ:

Արթու և էջել հունին, այսինքն վարժեցնել նորան դիմանալ ամենայն եղանակի: մանաւանդ օդի բարեխառնութեան փոփոխութեան և ցրտահարութեան չենթարկուիլ մի ենոյն ժամանակ (փորհարութեան, յօզացաւութեան, ջղացին հիւանդութեանց), կարելի է սպառաբար: Ցուրտը՝ ցուրտ ջրի (լուացմունքների և վաննաների) և ցուրտ օդի (թեթե հանդերձ) կերպերով, պէտք է սաստկացմուի փոքր առ փոքր Ով որ իրեն կատարեալ առողջ չէ զգում, պէտք է բոլորովին հրաժարուի այդպիսի եփուելուց, կամ թէ նորան կպչի սաստիկ զգուշութեամբ: Պէտք է յիշել որ ցուրտը, առաւել երբ յանկարծակի և կարճ ժամանակ է ներգործում (ինչպէս լուացմունքը), սաստիկ խիստ գրգռող միջոց է, որ բազմաթիւ զգացականութեանց ջղերի միջոցաւ ներգործում է զվիսի և

մէջքի ուղեղի վերայ: Ցրտից պատճառեալ մորթային ջղերի յաճախ կրկնուող գրդոմունքը կարող է պատճառ դառնալ ուղեղային և ջղային գործուէութեանց խանդարման (այնպէս անուանեալ ջղերի թուլութիւն):

Մորթու և ամբողջ մարմնի առողջութեան համար խիստ կարեոր են շաբաթունները (առաւել կանոնաւոր շարժմունքները, խչպէս մարմնամարզութեան ժամանակ) և նպատակայարմար հանդէրքը (տես ներքեւ):

Հագացած քը անած մոլլեա արտկ ստաելը և ընդհանրապէս մօրթային գործունէութեան ձնշումը կեանքի համար մնասակար՝ մինչեւ անդամ վտանգաւոր կարողէ լինել, որովհետեւ դորանով, տեհնդային (սուր) յօդացաւութեան հետ միասին, կարողէ սրտի բորբոքում պատճառուիլ, որը արագ մահ է բերում, կամ իրենից յետոյ սրտի անբուժելի եղծումներ է թողնում: Ցրտահար լինելու մնասակար հետևանքները հեռացնելու համար՝ պէտք է որքան կարելի է շուտով սաստիկ քըլը ախնք բերել առատ տաք ջուր կամ թէյ խմելով, անկողնի մէջ պարկած և ծածկուածուած մինչ պարանոցը: Ամենից հեշտ և առաւել վտանգաւոր է ցրտահար լինելը այնպիսի դիսուածում, երբ տաքացած և քրտնած մօրթին սաստիկ ցրտի ներդործութեան է ենթարկվում: Առաւել ևս մնասակար են. յուրա ընդմիջանց քամին (գռների և պատուհանների ճեղքերի արանքից), տաքացած և քրտնած մօրթու վրայ թրջած հանդերձ կրելը և ձմռուայ տաք հազուսից արագ ամեռուայ թեթև հադուստի անցնելը: Փոքր առ փոքր ե. աննկատելի

կերպով կարող է ցրտահարութիւն գոյանալ խիստ թեթև հազուստ հազնելուց, քնի ժամանակ խիստ բարակ վերմակ գործածելուց (նմանապէս էլ զականակաւոր, հովահարուող, մահիճների վերայ քրնելուց), յուրա պատի մօտ (ոչ մի վատ ջերմահաղորդ նիւթով չծածկած), յուրա և խոնաւ կողէնքային Ճերմակեղէնի վրայ քնելուց:

Կաշու հետահրաւելինները, որ հեշտ կարելի է ըստանալ վարակուելով, սոքա են. բրոտաւելինն և գոնջութիւնը գոյանում է փոքրիկ, հազիւ տեսանելի, սարդի ստայնի ձև ունեցող միջատից, որ նման է մանրանկար կրիայի և անուանվում է ժռ և ափու: Այդ տիզը մեր վերայ կարող է երեալ և բազմանալ, երբ մենք մի այլ մարդու կեղտոտ անկողնակալի վրայ պարկենք կամ հազորդակցութիւն ունենանք բորոտ մարդկանց հետ և կուշենք նորանց հանդերձին: Խոկ գոնջութիւնը գոյանում է զլիսի մազերի տակ եղած մանր սունկերից, յարդանման—զեղին կեղ կազմելով: Գոնջութիւնը կարող է անց կենալ այդ ախտով բռնուած մարդու գլխարկի վրայ էլ, ուստի ուսումնարաններում աշակերտներին չպէտք է թոյլ տալ գոնջութիւն ունեցող ընկերաց զլիսի իւրեանց զլիսին: Այդ կերպով էլ փոխվում է ոջիլը: Կաշու վրայ փոքրիկ վէրքեր եղած ժամանակ՝ պէտք է զգուշանալ նորանց թիւնաւոր բաների կազմնելուց (հոտած որսի մի, թիւնաւոր թանաքի, ներկերի, լուսակրի և այլն): Թիւնաւոր իւնդանինները խածած քամանուի (օձի, կատ-

զած շան) պէտք անմիջապէս բերանով ծծել թշնը վերքից և թքելով նորան՝ բերանը լաւ ողողել: Հոտած գէշերի վրայ նստած միջատների խայթելու դէմ (մ.զուի, ձանձի, բոռի, մնձակի), այդպէս էլ վիրաւորուած կաշու մէջ ընկած թարախային հեղանիւթերի դէմ, առաւել ազդողական է անուշատրի արտաքուստ գործածութիւնը:

Ե. ՇԱՐԺԻՉ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՀՈԴԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ.

Կամաւոր շարժում: Մարմնամարզութիւն

Շարժման գործիքներին ամենից առաջ պատշաճում են ջղերով հարուստ միանուանքները: Ուրեմն եթէ մենք կամենում ենք մեր մէջ պարտ ու պատշաճ ոյժ և ճարսիկութիւն դարձացնել, պարտաւոր ենք կանոնաւոր կերպիւ ննուցանել և վարժեցնել մեր մկանունքները: Բացի մկանունքներից, շարժիչ գործարանին վերաբերում են և ռուբոնները, որնք կապերով միաւորուած են միմեանց հետ յօդերում: Ինչքը ըստ ինքեան յայտնի է, որ այս մասները, ևս պէտք է կարգին լինեն շարժմանց կանոնաւորութեան համար:

Առաջին պահն կամաւոր շարժմանքների հնարաւորութեանը համար՝ շարժումներ գործող գործիքների բնական վիճակի մէջ լինենք: Այս

գործիքներին են վերաբերում ոչ միայն մկանունքներ ու ոսկորները, այլ նմանապէս ուղեղը և շարժողական ջղերը: Ուստի անպայմանօրէն անհրաժեշտ է որ այս վերջիններիս մէջ եւս հնարաւորութիւնը (նիւթերի փոխանակութիւնը) կանոնաւորապէս ընթանար, նորանց շարունակ լաւ արիւն մատակարելով և արեան անընդհատ շրջանառութեան միջոցաւ:

Ում որ հարկաւոր է կամքի և մկանուքների ոյժ, նա պէտք է այնպիսի կերակուր ընդունի, որը մկանունքային, ջղային և ոսկրային ոստայններին լաւ մնուցանել կարողանար: Կենդանապէսին կերակրային միջոցները գորահամար առաւել պիտանի են, քան բուսականները: Սակաւարիւն և վաստ սննդուող մարդկերանցից չի կարելի պահանջել կամքի և մկանունքների նոյն ոյժը, ինչպէս առատ կերակուր ստացող պնդակազմ մարդկերանցից:

Դրանից յետոյ՝ շարժիչ գործարանը իւր կանոնաւոր սննդաւութեան համար, բացի լաւ արիւնից և արեան շրջանառութիւնից, պահանջում է դեռ գրանցութեան և հանգուռութեան մէջ պարզ ու պատշաճ հերթականութեան: Միայն այս պայմանը պահանջուց մկանունքների մէջ նիւթերի փոխանակութիւնը (այսինքն է մկանունքային նոր ոստայնների կազմուիլը ու հին փչացածների հեռանալը) կարող է պարտ ու պատշաճ կերպիւ կատարուիլ: Խիստերկար և խիստ լարուած գործունէութիւնը նոյնքան էլ վկասում է, որքան և շարունակ անգործութիւնը: Երբէք չպիսի շարժումը շարունակուի մինչև սաստիկ յօդնելը, մանաւանդ երեխաների կողմանէ, լարուած աշխատող գործիքների մէջ հեշտ կարող է

թոյլութեան, անդամաղուծութեան վիճակ պատառ հել: Հարումը միշտ պէտք է յարմարուի ունեցած մկանունքային ոյժին, մկանունքների սննդառութեան ու աշխատելու վարժութեան և առհասարակ մարմնի կազմուածքին, արեան քանակութեան և կենաց եղանակին:

Յատկապէս եւեւենեւի համար մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել շարժիչ գործարանի վերայ, որովհետեւ նորա հետ անկանոն վարուելուց հետ կարող են ծոռումներ պատճառուիլ, որոնք կը մնան ամբողջ կեանքում: Երեխսային հարկաւոր չէ խիստ վազ նստելու և Մջելու ստիպել կամ նեղ հագուստ հազցնել: Ուսանող մանկանց էլ պէտք է արգելել զբելու և ձեռային աշխատութեանց ժամանակ կորացած և ծոռուած նստելը:

Կամուռ շարժուաննելը, որոնք յաճախ իրանութեան ներակ (սովորելով, կրթուելով) և հետզհետէ ոտառի հաջուելով բաւականին կատարելակործվում են տեսուականութեան, ոյժի և արագութեան մէջ, մեր մարմնի համար իարեռը են նրանով, որ ոչ թէ միշտ այն ամրացնում էն հենց շարժման գործիքները, այլ և նոյնպէս ազդեցութիւն են գործում շնչառութեան, սրտի բարախման, արեան շըջանառութեան, կաշւոյ գործունէութեան, մարսողական և բոլոր արտօղրողական գործողութեանց վերայ էլ: Կարծ ասելով, նոքա կենդանացնում են սննդառութիւնը (նիւթերի փոխանակութիւնը) և դրանով առաւելացնում են ամբողջ մարմնի առողջութիւնը: Որովհետև կամաւոր շարժումները կամքի, այսինքն է զլիսի ուղեղի ազդեցութեան տակ են կա-

տարփում, ուստի նոքա նոյնպէս ծառայում են կամք կազդուրելու համար և աւելացնում են ուղեղի բարեկեցութիւնը: Բայց ինչպէս շարժմունքներից յետոյ, այնպէս էլ հողեկան գործունէութիւնից յետոյ ուղեղը պէտք է կազդուրզի քնով:

Աննպատակայարմար, ուժին անհամապատասխան շարժմունքների ունեցած վահանելի հեռացնելու համար, ուշադրութիւն պէտք է դարձնել շահճռանելը ծանուանի և նոցանից յետոց վրայ հասնող երեսունեւելի վերայ: Առանձին ուշադրութեան արժանի է որոնք բաբանուածը, նա չպիտի ոչ խիստ սաստկանայ, ոչ խիստ յաճախի, շնչառաւելիւնը չպէտք է արագ և կարծ դառնայ, դէմքը չպէտք է սաստիկ կարմրի կամ գունաթափի և առ հառարակ գոյնը արագ փոխի, էտշեն չպիտի չափից դուրս փափառայ և գրանի, չպիտի պատահանին անհաճայ պատահաններ ինչպէս է չափազանց յոգնածութիւն, զլիսի ցաւ, զլիսի պատոյա, շնչարգելութիւն և այլն:

Շարժման և, զլսաւորապէս, մարմնամարզութեան ժամանակ պէտք է ի նկատի առնել հետեւալ կանոնները. 1) Ամենայն նեղ և մանաւանդ պարանոց ու կործքը սխմաղ հանգերձ պէտք է հանած լինի: 2) Բոլոր մկանունքները պէտք է աշխատանք: Այս մասին հարկաւոր է շարժումները կատարել մարմնի բոլոր յօդերովը, ի հարկէ պարտ ու պատշաճ փոփոխութեամբ, այլ ոչ թէ մկանունքային մի քանի խմբերը զարդացնել զլսաւորապէս: Իսկ առաւելապէս պէտք է շնչառական և փորի

մկանունքների վրայ գործել։ 3) Շարժումը չպիտի  
շարունակուի մինչ չափազանց յոգնելը։ Պէտք է  
դադրացնել անմիջապէս յոգնածութեան զգացում  
եթեալուն պէս։ 4) Շարժումներից յետոյ, նոր շար-  
ժում սկսելուց առաջ, պէտք է հանդիսան առնել,  
մինչև որ կանյայտանայ յոգնածութեան զգացումը։  
5) Շարժմանց ոյժը և երկարաւելութիւնը պէտք է  
հետզհետէ աւելացնուին, միայն այն ժամանակ,  
առաւել կենդանի սննդեան հետ, աւելանում է  
մկանունքների ամրութիւնն ևս։ 6) Շարժմանունքների  
ժամանակ և նորանցից յետոյ հարկաւոր է հագալ-  
լաւ օդի և ուժեղ շնչառութեան մասին, որովհետ-  
և խոր շունչ առնեն ու ուժով շունչ թողնելը ոչ  
միայն թոքերի միջի օդի փոխուելու վերայ են ազ-  
գում, այլ նմանապէս արեան, աւիշի և կերակ-  
րային հիւթի հոսելուն և մարսողական գործողու-  
թեան վերայ։ 7) Շարժմունքները պիտի յարմարուին  
անձնական պայմաններին։ Նորա պէտք է չսպառու-  
րուին՝ երբ որ յաճախ և ուժզին սրտի բարախում  
ու կարծ շնչառութիւն վրայ հասնելու լինի, երբ  
որ երեան անքնական և անհաճոյ զգացմունքներ  
(մանաւանդ գլխի ցաւ և գլխի պտոյտ), գունաթա-  
փութիւն, սասաթիկ դադրածութիւն, դէմքի գոյնի  
յանկարծակի փոխում, սասաթիկ տաքանալ և քըր-  
տինք։ Նա մինաւանդ սակաւարիւն և թոյլ կուրծք  
ունեցող անձինք արտաքոյ կարդի զգուշութեամբ  
պէտք է յողնեցուցիչ շարժմունքներ գործեն։ 8)  
պէտք է ուտել սպառիկ շարժմունքներից փոքր ա-  
զգէտք և ուտել սպառիկ շարժմունքներից փոքր ա-

ռաջ և անմիջապէս նրանցից յետոյ, որպէս զի  
մարսողութիւնը չմնասաւի։ 9) Շարժմունքների ժա-  
մանակ և նրանցից յետոյ պէտք է զգուշանալ ցուրտ  
առնելուց, որը կարող է սրտի հիւանդութիւններ  
բերել։

#### ԶԱՆԴԵՐՁ

Մենք հանդերձ ենք կրում ոչ միայն վայե-  
լու լինելու և զեղեցկութեան համար, այլ նոյնպէս  
մեր մարմինը եղանակի վասակար ազդեցութիւններից,  
մանաւանդ ցուրտ առնելուց՝ պաշտպանելու, և մարմ-  
ինի ջերմութիւնը պահպանելու համար։ Արդարեւ,  
քանի որ մենք շարունակ, և առաւել ցրտում, մեր  
մարմինի ջերմութեանց մի մասը մեզ շրջապատող օ-  
դին ենք տալիս, ուստի անհրաժեշտ է ընդդիմա-  
գործել մարմինի սառելուն, այդպէս էլ մենք վար-  
վում ենք՝ օդի բարեխառնութեանը նայելով առա-  
ւել տաք, կամ աւելի թեթև հանդերձ հագնելով,  
որը միշտ բաղկացած է վատ ջերմահաղորդ նիւթերից։  
Անշուշտ է որ հագուստը պէտք է համապատաս-  
խան լինի ինչպէս մեր արտաքեն պայմաններին, այն-  
պէս և իւրաքանչիւրի անձնական առանձնայտկու-  
թեանցը, ինչպէս է տարուա և օրուա ժամանակին,  
եղանակին, երկրի կլիմային, հասակին և սեռին,  
կենաց եղանակին և զբաղմունքներին, մարմնակազ-  
մութեանը և այլն։ Առաւել կարեոր է տաք պա-  
հել ոտները, փորը, մէջքը և թևառակերը։ Այս

մասին շատերի, առաւել հիւանդների համար օգտաւէտ է բրդէ գուղպաներ, փորապատ և անընդմիջապէս մարմնի վրայից նուրբ ֆուֆայկա ունենալը: Հագուստը մարդուս համար մի տեսակ երկրորդ կաշի է կազմում, որի մակերևոյթի վրայ կատարվում է ջերմութեան բաց թողնելը՝ առանց ցրտի անհաճոյ զգացողութեան: Այդ իսկ պատճառաւ սաստիկ ցրտի ժամանակ մենք հագնում ենք մի քանի հանդերձներ, որպէս զի այդպիսով մարմնից առաւել ևս հեռացնենք ջերմութիւն բաց թողնելու մակերնոյթը: Մի հագուստ որքան աւելի և հեշտ է խնառութիւն ընդունում, և պահում է նորան իւր մէջը, այնքան էլ նա, թացնացած լինելով, աւելի շուտ է բաց թողնում ջերմութիւնը, սառացնում է քրտնող կաշուն, արգելում է այլ ևս քրտինք գալը և այդ կերպով ցուրտ առնելու յարմարութիւն է տալիս: Այս վերաբերութեամբ բոլորից վատթարն է քաթանէ կտորը, որը հագնելով հեշտ է ցուրտ առնել: Իսկ մետաքսէ, բրդէ և բամբակէ կտորները, իւրեանց մէջ խոնաւութիւն ընդունելու քիչ ընդունակ լինելով, արգելք են լինում մորթու արագ սառելուն և ցրտահարութեան (սալթրջամ) երևալուն, ուստի այդպիսի կտորներից շապիկ օգտակար է հագնել մերկ մարմնի վրայ ցրտահարութիւնից պաշտպանուելու համար (տաքացած վիճակում, թեթև քրտինքի ժամանակ և տաք եղանակում):

**Չիւռառացող գործութները գուտտապերչից վերաբ-**

կուներ և կրկնայօդեր) մորթու արտաշնչութիւնը բոլորովին դուրս չեն թթղնում իւրեանց միջից, այդ պատճառաւ այդպիսի գործուածներից հագուստ հագած ժամանակ անախորժ գէջ տաքութիւն է զգալի լինում և արտաշնչութեան սաստկացած արտադրութիւն է նկատվում: Ուստի այդպիսի հագուստը հարկաւոր է հագնել միայն խոնաւ և ցուրտ եղանակում: Կտորի կարծրութիւնը աղղեցութիւն ունի նոյնակէս ջերմահաղորդութեան վերայ: Որովհետեւ օդը վատ ջերմահաղորդ է, ուստի և այն կերպար, որի առանձին մասնիկների արանքներում շատ օդ կայ, հետևաբար կերպարը շատ կարծր չէ, պէտք է որ կարծր պինդ կերպասից աւելի տաք լինի: Խիտ չգործած զիւլպաներն էլ իստ գործածներից աւելի տաք են: Հանդերձի գոյնը ևս նշանակութիւն ունի մարմնի տաքցնելում և պաղացնելում: Մութ և առաւել սե կերպարը իւր մէջ է հաւաքում բոլոր լուսոյ ճառագայթները և աւելի լաւ է ջերմութիւն հաղորդում, ուստի և այդպիսի կերպասից հագուստը աւելի տաք է լինում և ամէնից աւելի պիտանի է ձմռուայ և ցուրտ կողմերի համար: Իսկ պարզ կերպասները, մանաւանդ սպիտակները, հեռացնում են իւրեանցեց բոլոր լուսոյ ճառագայթները կամ նորանց մեծ մասը և այդ մասին իւրեանց միջով այնպէս հեշտ չեն թողնում ջերմութիւն անցնելու: Այդ պատճառաւ պարզ կամ սպիտակ կերպասներից պատրաստած հագուստը օգտակար է կրել առառը և տաք երկիրներում: Մութ կերպասները այն

առանձնայատկութիւնը ևս ունին որ խոնաւութիւնը  
զանազան տեսակ հոտեր և վարակիւնիւթեր գիւռ  
րաւ են ներս ընդունում, քան պարզ կերպաս-  
ները:

Մարմի առաջին ժամանակի վերաբերութեամբ կը  
նկատենք, որ մարմինի վերի կիսամասը ընդհանրապէս  
կարելի է աւելի զով պահել, քանի որ փորը և ոտները  
պէտք է ատաւել տաք ծածկած լինին. Մարմինի վերի կի-  
սամասի վերայ անհամեշտ է ցրտից պաշտպանել զլւա-  
ռութապէս քրտնող թեատակերը ու մէջքը, ներքելի կիսա-  
մասի վերայ—փորը: Փոքր մանուկներ ու ծերունիները  
իրենց լաւ են զգում միայն տաքում, ուստի նոքա պէտք  
է տաք հագած լինին, Երիտասարդները ու միջահասակ  
անձինք պէտք է չափաւոր տաք հագուստ հագնեն: Տաք  
հագուստից ցուրտ հագուստի դառնալը պէտք է այնպէս էլ  
աստիճանաբար լինի, Գլուխը, որ արդէն մազերով պաշտ-  
պանուած է, միշտ պէտք է ծածկուած լինի, որքան կա-  
րելի է, թեթե, նորան պէտք է պաշտպանել միայն խիստ  
սաստիկ տաքութիւնից, արեգակի այրելուց, ցրտից, քա-  
մուց, վասամունքներից, Պարանոց ամենից լաւ է արդէն  
մանկութիւնից բոլորովին բայց պահել, երբեք չխմին նո-  
րան տաք, հոգի տուող, բարձր փողպատներով, այդպէս  
էլ շապիկների նեղ օձիքներով: Փողպատի և պարանոցի  
մէջը միշտ պէտք է բաւականաչափ տեղ մնայ, այնպէս  
որ երկու մատներ ազատ անցնէն: Կրծքի վահանաւ միշտ  
պէտք է ունենայ բաւականաչափ լայն հագուստ, որ  
խոր չնշառութիւնները արձակ կարողանան կատարուիլ:  
Կանանց խիստ յաճախ վասում են նեղ հանդերձներ ու  
կորսէները, այր մարդկանց էլ մինչեւ պարանոցը խիստ  
կոճկած սերտուկներ ու բամկոնները, ինչպէս և կրծքի վե-  
րայ խաչած ընկած անձգական փոկերը: Փոքր ճնշումից

պէտք է պաշտպանած լինի զլսաւորաբար իւր  
վերի մասնում (ուր ընկած են լեարդը, ստամոքսը և  
փայծաղը): Այդ մասին նեղ կապեր ու գոտիները սաս  
տիկ վասակար են: Վարակիքը պէտք է ձգափոկների  
վերայ ազատ կախուած լինի, իսկ փոկերով նորանց փո-  
րի շուրջը ամրացները հաստատապէս վնասակար է: Որ  
ուր ամենից աւելի տանջվում են նեղ ոտնամաններից:  
Բամբակէ զիւլպանները պէտք է նախապատիւ համարել  
կանեփէ թելերով գործածներից, բայց ում ոտներ մաս-  
տիկ քրտնում են: Նա պէտք է միշտ բրդէ զիւլպաններ  
հագնիւ Ծեղինի կամ կաշուկ կրկնայօդները (գալօշներ) լաւ  
են խոնաւութեան ու ցրտի դէմ: Գիւլպանների կապերը  
պէտք է ծնկերից բարձր կապել, որպէս զի արեան կա-  
նոնաւոր ընթացքին արգելը չլինեն:

Կարեւոր են հետեւալ կանոներն ևս: Հագուս-  
տը միշտ պէտք է յարմարեցնել շրջապատող օդի  
բարեխառնութեան ու խոնաւութեան: Տաք սենեակի  
մէջ հարկաւոր չէ խիստ տաք հագնուիլ, զարնան  
և աշնան հարկաւոր է ուշագրութիւն դարձնել  
օդի բարեխառնութեան փոփոխութեան վերայ, մա-  
նաւանդ երեկոյեանները: Հարկաւոր չէ խիստ վազ  
ձմռուայ հանդերձը հանել՝ ու ամառուանը հագ-  
նելի այլ պէտք է մարմինը աստիճանաբար վար-  
ժեցնել առաւել թեթե հանդերձի: Ամենազլխաւո-  
րըն է—որքան կարելի է յաճախ ձերմակեղէնը  
փոխել: Թացացրած հագուստը որքան կարելի է  
պէտք է շուրջով հանել և փոխել  
չոր հագուստի:

Է. ՄՏՔԻ ԳՈՐԾԱԲԱՆԵՐԻ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ.  
առ պատճեաց ու դիմաց յան ժամանակ պահանջանքավարութիւնը նրանցից հեռացրած լինէին:

**Մարդս իռհեմ կարող է լինել միայն այն ժամանակ, երբ 1) նորա մտքի գործարանները (որոնց վերաբերված ուղղելով ջղերի հետ, զգացողութեանց գործիները ու խօսալու դործին), առողջ վիճակի մէջ են գտնվում, և 2) երբ այդ գործարանները կանոնաւոր աշխատելու վարժուած են (կրթութիւնների, վարժութիւնների միջոցով): Ուրեմն խոհեմ լինելու և խոհեմաբար գործելու համար պէտք է որ՝ մտք ի գործ արանն երը պարտ ու պատշաճ կերպով սնունդ առնեն, կանոնաւոր պատք է ո կրթուեն և վնասուելուց պաշտպանուին:**

Ինչ վերաբերում է այդ գործիքների հանունութեամբ, դա պահանջում է նախ և առաջ բաւականաշափ քանակութեամբ լաւ արիւն և սրա անարգել ընթանալը գործիքների միջով, Այնույնամենդառութիւնը պահպանելու համար գեռ անհրաժեշտ է, որ մտքի գործարանների գործունէութիւնը կանոնաւորապէս կատարուէր, արտաքոյ կարգի լարուած գրութեան համանէր և փոխանակուեր բաւականաշափ հանգստութեամբ: Մտքի գործարանների աշխատութեան պարագաները կաշըլի է համանել միայն նորանց շարունակ գէպի մի որուեալ, միենոյն գործունէութեան զրգուելով, բայց այդ լարունները պէտք է սաստկանան աստիճանաբար և նորանցից յետ միշտ պէտք է բաւականաշափ հանգստութիւն լինի: Մտքի գործարանները լուսավորութիւններից պաշտպանելու համար պէտք է հոգալ որ նոցա վերայ իմիստ սաս-

տիկ և երկարատև զրգումունքներ չներդորձէին և որ արտաքին բռնաբարութիւնները նրանցից հեռացրած լինէին:

ա. **Գլխի ուղեղը, բոլոր հոգեկան գործունէութեան կեդրոնը,** իւր առողջութեան համար պահանջում է, առաւել քան մի որ և իցէ ուրիշ գործիք, բայտականաշափ գործութեանը լաւ արիւն, այդպէս է նորա արագ, հաւասարապէս ընթացալը: Ուղեղի գործունէութեան մէջ չափաղանց կարեւոր է շարունակութիւնների կանոնաւորապէս, ստորիմայննելը և բաւականաշափ հանգստութիւնը, մանաւանդ գունը: Ուղեղի ստորիմ գրգուուղականութեանը, եթէ կրկնվում էն յածախ կամ երկար են տեսում, ուղեղի մէջ մի տեսակ վիճակ են պատճառում, որ անուանավում է ջղոպատճեան, — զրգուուղականութեան և թոյւլութեան բարձրագոյն վիճակ: Այդպիսի զրգումներները կարող են ներգործել անընդմիջաբար ուղեղի վերայ (ինչպէս հոգեկան վրդովմունքներ և կրեեր), կամ ուղեղը տանող զգայականութեանց ջղերի միջոցաւ (ինչպէս լոյսի և ձայնի սաստիկ տպաւորութիւնները, մորթու ջղերի գրգուուկը ցուրտ լուացքունքներով), վաննաներով և ջրի սրսկումով, սաստիկ ցաւերը), կամ թէ արեան միջոցով (ինչպէս արբեցուցիչ նիւթերը, ոգելից ըմուլիները, թօւնդ սուրճ կամ թէ յը և այլն): Ուղեղն է ստորիմ յնցուները, ինչպէս է զլիսի վերայ հարուածներ, ցնցումներ, վայր ընկնել և այլն, հեշտ կարող են ուղեղի գործունէութիւնը խանգարել: Շատ սաստիկ պարէ ուղարքը, կառագիել վրայ ներգործելով, իմիստ վնասաւ-

կար կարող են լինել ուղեղի համար, մանաւանդ եւ բեխայոց (արևի կաթուած): Եւ այսպէս ուղեղը պահանջութեն չոգեկան լարում ներից, սաստիկ գրգռմունքներից և բռնաբարութիւններից (մանաւանդ ցնցումներից):

Շատ մարդկանց ուղեղը արդէն փոքր հասակից գործունէութեան ստիւտ պիտանի է դառնում, այն պատճառաւ, որ նորա խիստ վաղ (մինչ 7 ամեայ հասակը), այսինքն յառաջ քան ուղեղի բաււականաչափ գորդանալ ու ամրանալը, սովորվում են մտաւոր աշխատութեան դառնալ (ուսումնարանում):

Քուն մենք անուանում ենք այն վիճակը, որի մէջ կարձ միջոցով զլիի ուղեղը դադարեցրել է լր գործունէութիւնը, Ուղեղի հանգստութիւնը նորա արթուն ժամանակի աշխատութեան հետևանքն է. ուղեղի նիւթը աշխատելով, հետզհետէ գործունէութեան անընդունակ է դառնում, բայց քնի, հանգստութեան ժամանակ, նա վերականգնում է սննդառութեան օգնութեամբ, Քնի ժամանակ ուղեղի գործունէութեան կանգնելուն պատճուաւուաւ, զգացողութիւնը, իմացականութիւնը, բոլոր մտաւոր գործունէութիւնը և կամաւոր շարժումները գաղարումնն, քանի որ նոյն միջոցում անկամաւորապէս կատարուող և սննդառութեան ծառայող, այնպէս անուանեալ բուսական գործողութիւնները շարունակվում են, բոլորովին չխանգարուելով, Արթնութեան ժամանակ ուղեղի գործունէութիւնը, որքան սաստիկ է եղել (մտաւոր աշխատութիւն, նոգեկան վրդովմունքներ, մանաւանդ վիշտ), այնքան առ

ուաւել անհրաժեշտ է խաղաղ, խոր. երկարատև քունը, չասակ առած մարդուն հարկաւոր է ընդհանրապէս 7 մինչ 8 ժամ քուն, Մանուկների համար, որոնց երբէք չպէտք է արգելել, երբ քնի են կամենում, հարկաւոր է 10 մինչ 12 ժամ քուն, Այդպէս էլ թոյլերին, սակաւարիւն անձերին, հիւանդներին քուն աւելի է հարկաւոր, քան ամուր և առողջ անձերի համար, Ամենաառողջ մարդկանց ուղեղն էլ երբեմն այնքան գործունեայ է լինում քնի ժամանակ, որ զարթնելով նոքա կարող են մտարերել այդ գործունէութիւնը (Երանակառավելական), բայց այդ բոլորովին անկամաւորապէս է կատարվում և մեծ մասամբ առանց մի որ և իցէ կարգի, Քնի մէջ խօսալը առաւել մանուկների ու երիտասարդների, հիւանդութեան նշան չէ բոլորովին, Անասուններն ես քնի մէջ զառանցում են:

Քնի ժամանակ թթուածին սակաւ է գործ ածվում, քան ցերեկով, իսկ նա ընդունվում է համարեան երկու անգամ աւելի, քան արթուն ժամանակ: Այդպիսով քնի ժամանակ մարմինը պահում է թթուածինը, որովհետեւ մոքի, զգայարանքների գործունէութիւնը, ինչպէս և կամաւոր շարժումները դադարել են, անկամաւոր շարժումներն էլ (սիրաը և թոքերը) թոյլ են կատարվում, այնպէս որ գործարանում նիւթերի փոխանակութիւնը ուշանում է, Քնի ժամանակ ընդունած թթուածինը ժողովում է սատացնների մէջ իբրև պաշար, որի հաշուով էլ կատարվում է յետոյ մեր ցերեկուայ աշխատութիւնը: Ուժեղ և առողջ մարդը քնի ժամանակ աւելի է թթուածին ընդունում, քան նիհար կամ հիւանդ մարդը: Սորանով բացատրվում է թէ ինչու առաջինը քնից զարթնելով, նոյն իսկ սաստիկ յօգնածութիւնից յետոյ էլ, աշխատում է աշխատութեամբ, իսկ վերջինը իւրեան դաղրած և թոյլ է զգում:

Ամենից խոր և հանգիստ է լինում սովորաբար պահանջմանը, և ուստի չպէտք է նորան խանգարել: Ընդահրապէս քունը միայն այն ժամանակ կարող է ամրացնել ուղեղը և ամրող ջղային և մկանունքային դրութիւնները, երբ բաւականաշափ երկարատե, խոր և անընդհատ է լինում: Մի և նոյն չէ նոյնպէս ուր և ինչնէ քննելն էլ: Նաջարանը պէտք է ընդարձակ լինի, բաւականաշափ տաք և առանձնացած, մաքուր, չոր օդով՝ <sup>120</sup> ըստ հի, որքան կարելի է հեռացրած լինի խոնաւ, վատ և գարշահոտ բնակարաններից և պատուհանները դարձած լինին դէպի արեելք կամ հարաւ: Օդը չպիտի փչացած ինի ոչ գարշահոտ արտաշնչութիւններով (մի սենեակէ՞ մէջ զետեղուած մարդկանց բազմութիւնից, կեղտոտ ճերմակեղէնից, զիշերային անօթներից), ոչ անուշահոտութիւններով (ծաղկանց): Եթէ ննջարանը ցերեկով հովալարվում է, նորա օդը մաքուր և թարմ կլինի, ննջարանում բոյսեր չպիտի երբէք գտնուին, որովհետեւ զիշերով նոքա ածխային թթու են բաց թողնում: Վնասակար է քննել բաց պատուհաններով, ցուրտ պատի մօտ, պատուհանի կտմ գուների զիմուց: Գիշերով ննջարանի օդը մաքրուելու համար կարելի է նորան կից չփակած սենեակի պատուհանները բանալ: Բարձր և ընդարձակ ննջարանները առաւել լու են ցածր և նեղերից, որովհետեւ օդը նորանց մէջ այնպէս շուտ չէ ասպականվում, սակայն նորա էլ հարկաւորութիւն ունին հովահարուելու: Ապականուած օդ ունեցող սենեակներում քննելու վատ սովորութիւնը հիւանդութիւնների պատճառ է լինում, ննջարանի լուսաւորելու վրայ ևս պէտք է ուշագրութիւն դարձնել (առև ներքեւ աչքերի պահպանութիւն): Բայց առաւել վտանգաւոր է ննջարանում ածխանոտը, որը շատ անգամ զոյանում է վառարանի խողովակի վատ շինելուց և խողովակները անժամանակ վակելուց: — Ահ-

ռովնը պէտք է բաւականաշափ երկար և լայն լինի, ոչ խիստ կոշտ, ոչ խիստ կակուղ, ոչ ցուրտ, ոչ տաք: Ամենից առողջարար են զսպանակաւոր ու ձիու մազերով ցրած ներքնակները: Վերմակը պէտք է լաւ ծածկի մարմինը, առաւել փորբ, բարձերը պիտի հով լինեն և ոչ էլ խիստ ցածր, որպէս զի գլուխը միշտ մի փոքրբարձր լինէր բնից: Դեռահասակ մանուկները ու սակաւրին, թոյլ մարդկիք աւելի տաք անկողիններում պիտի քննեն: Ծածկոյթաւոր անկողինները վնասակար են նորանով, որ գմուարացնում են թարմ օդի մերձենալը, ինչպէս և ննջողի արտաշնչութիւնների հեռանալուն: Նմանապէս առողջարար չէ մի անկողնում մի քանի հոգով քննել: Ննջողն հագուստով պէտք է թեթև և ընդարձակ լինի, այս թէ այն կողքի վերայ ուրբէւ — այդ բանը որոշվում է իւրաքանչյուրի գլացմունքով ու փորձով: Անկողին ճերմակեղէնի վերայ ևս հարկաւոր է դարձնել ուշագրութիւն: Գնից փորբ առաջ պէտք է գլուշանալ առատ ուժելուց, գրգռող մտածմունքներից ու զրագմունքներից, սաստիկ գրգռվմունքներից ու հոգսերից:

բ. Արտաքին զդայ արանքները, որ ուղեղին հոգեկան կերպուր են մատակարարում, արժանի են ամենազգուշ հոգացորութեան: Հասկանալի է, որ արտաքին տպաւորութիւնները զգալու և նորանց մասին: Գատելու համար բաւական չեն միայն առողջ զգայարանքները, դրա համար գեռ անհրաժեշտ է, որ ջղերը տպաւորութիւններին տանէին գէպի ուղեղը, և որ ինքը ուղեղը բնական վիճակի մէջ լինէր: — Զգայարանքների, հանուսնդ աչքի և ականջի՝ Կետենդրութեանց ժամանակ, անմիջապէս պէտք է յատկապէս աչքերի և ականջի հիւանդութիւններով պարագուլ պարագուլ զիմել:

ա) Ա. Հ. Ը. Բոլոր զգայարանքներից ամենակարևորը, առանձին հոգատարութիւն է պահանջում, որովհետեւ լաւ տեսողութեամբ բոլոր կեանքում պարմանաւորվում են ամենայն տեսակ գործունեութիւնք: Բնութիւնից տկար աչքերը առաւել մեծ զգուշութիւն են պահանջում, քան առողջ, ուժեղ աչքերը: Որչափ հնարաւոր է, աչքերից պէտք է հեռացնել փոշւոյ ծխի, սուր գոլորշների, սասաթիկ տաքի, շատ ցուրտ ջրի (մանաւանդ իսկոյն զարթնելուց յետոյ) և ընդմիջանց քամու ազգեցութիւնը: Այդպէս և հարկաւոր է զգուշանալ ամենայն տեսակ վնասմունքներից (զորօր, զիսի հարուածներից և աչքերի ազտոտելուց): Խիստ յաճախ անդամ աչքի ցաւերը պատճառվում են լրական և արուեստական), երբ նա խիստ ստորին, պարզ է լինում, այնպէս որ աչքի ցանցաթաղանթը չափաղանց զրգութելուց անդամալուծվում է: Ամենայն մի շլացուցիչ լրյա այնքան առաւել վնասակար է, որքան յանկարծակի է ներգործում աչքի վերայ, զորօր. մութ տեղից պարզ լուսաւորուած տեղ անցնելուց, կամ մի փայլուն առարկայից լրյա թափանցած ժամանակ: Չպէտք է յաճախ և երկար նայել արեգակի, ուսինի, կրոմի, հայել անման փայլուն առարկաների վերայ, չպէտք է նոյնպէս պարզ արեգակնային լոյսամ նկարել, կարդալ, գրել, կարել, զարթնելուց անմիջապէս չպէտք է դեսի պայծառ: Լրյա կողմը դառնալ:

Ա. Հ. Կանոններին պէտք է հետեւել մանաւանդ

նորածինների, առհասօրակ փքրիկ մանուկների վերաբերութեամբ և ուսումնարանում: Բայց վնասակար է նոյնպէս և թիստ լոյսը (մանաւանդ մըթնաշաղաղը), որովհետեւ նա աչքերի չափականց լարումն է պատճառում՝ որը որ այդպիսի լոյսով փոքրիկ առարկ սների վրայ այլական լոյսը առարկ սների վրայ այլական լոյսը (կառքի մէջ թարթափուող լոյսի առաջ կամ շարժող տերեւուոր ծառերի տակ կարդալը) նոյնպէս հետզհետէ աչքերին վնասում է: Վնասակար է նոյնպէս արուեստական և լուսական լոյսի խառնութեամբ (կիսով չափ ցերեկուայ լոյս, իսօվ չափ կանոնեղի կրակ):

Արուեստական լոյսը որքան աւելի սպիտակ է, այնքան նա աչքի համար լաւ է: Որովհետեւ սպիտակ արեգակնային լոյսը արուեստական լոյսին (որ չափազանց աւելի զեղին և կարմիր ճառագայթներ է պարունակում) զանազան վում է կապտագոյն ճառագայթների մեծ պարունակութեամբը, ուստի արուեստակ ն լոյսի վերայ պէտք է կապտագոյն ճառագայթներ աւելացնել, որ նա աւելի կակուզ և սպիտակ լինէր: Այդ պատճառաւ խիստ յարմար է կաթեղների (կամպերի) կաթնագոյն խուփեր (կոլպակի) ներսեից երկնա կապոյտ գունով ներկել կամ առարկուստ թոյլ-կանաչ աղաւնեցոյն բամբակի պատուպարիչներով ծածկել: Գրա համար էլ կապոյտ պատուպները շատ օգտակար են այն աչքերի համար՝ որոնք լոյսի խիստ զգայուն են: Աչքի համար կարեսը է նոյնպէս աշխատութեան ժամանակ լուսաւորով

առարկայի ուժութեաւնը. նորան պէտք է ձախ կողմից դնել (մանաւանդ կթէ աշխատութիւնը աջ ձեռքով է կատարվում) և էլ այսպէս, որ լոյսը լնկնէր վերեից, բայց չէ թէ աչքերի, այլ գործի վերայ. աչքերը կարող են ծածկած լինել պատսպարիչով:

(Ա. Դիտութիւնը կարող է աչքերին վնասել, թէ որ աչքերի լինող երկոր լուսաւորուած առարկաների վրայ ուղղուին կամ որ գոնէ աշխատութիւնը փոփոխուի: Երբէք չպէտք է շատ երկար և յաճախ աշխատել մանրիկ առարկաների վրայ, որոնց պէտք է մօտ բանել աչքերին. այդպիսով հեշտ կարելի է կարճատեսութիւն պատճառուի: Առաւել ևս պէտք է խսութեամբ նայել ուսումնարանի մանուկների վրայ, որ նոքա առարկաները աչքերին խխատ մօտ չըռնէին: Ով որ ահոցների հարկաւորութիւն ունի, պէտք է անպատճառ աչքի բժշկի դիմէ: Երեխնեայ դիտուներ (բինօսկը) որքան կարելի է պէտք է սակաւ գործածել:

Չպէտք է կոպերի տակը մտած որոր նոր թիժները շրփմամբ հեռացնելու փորձ փորձել, այլ, թէ աչաց մըկանունքների ջանքով՝ թէ մատների օգնութեամբ՝ աչքի ճեղքուածը բաց պահելու աշխատելով, պէտք է նայուածքը ուղղել սաստիկ դէպի մի կօզմ, ցաւող աչքին համապատասխանող ուսի ուղղութեամբ, և յետոյ արագ շրջել քթի ծայրի ուղղութեամբ, և փոփոխապէս, կամ թէ աչքը փոխաբերաբար սաստիկ բարձրուցածը շարժել, մի և

նոյն ժամանակ ցուրտ ջրով նրան թաց անելով: Յթէ այդ կերպը ոչինչով չօգնի: այն ժամանակ հարկաւոր է փորձել օտար մարմննել հանել, հայելու առջն կանգնելով, կամ մի ուրիշն յանձնել ազլուսի անկիւնով հանելու: Թէ որ հեռացնելը չյաջողի, այն ժամանակ պէտք է բժիշկ հրաւիրել, իսկ մինչ նորա գալը զգուշանալ բոլորովին կոպերի շինուաց և առ ժամանակ ցուրտ պրիմօչկաներ դնել:

Օտար մարմննը աչքից հեռանալուցյետոյ սովորաբար կոպերի տակ մի առ ժամանակ էլ զգալի է լինում նորա ներկայութիւնը: Մեծ մասամբ փորդիկ մարմնների հեռացնելը չի յաջողվում այն մասին, որ նորա նսառում են աչքի և վերի կոպի մէջ տեղի անկիւնում, այնտեղից նորանց ձեռք բերելու համար պէտք է կոպը բռնել թերթերունքից և ուժով յետ տանել աչքերից, ցածր նայելով այդ ժամանակ: Եթէ աչքի մէջ հանուցին լլուռէք կամ էռտչու ջուր է ընկել, այնժամանակ որքան կարելի է շատ պէտք է բժշկի օգնութեան դիմել: իսկ առ ժամանակ ցուրտ պրիմօչկա դնել: իսկ եթէ աչքը հէ, ճիշիք, ծիտիք և այլ զոցա նման կծու նիւթ է մտել այն ժամանակ հարկաւոր է կոպերի տակը իւղ կամ սեր քսել, որ ծածկի օտար մարմննը և, եթէ հնարաւոր է, նորան գուրս հանել տայ, իսկ յետոյ մինչ բժշկի գալը ցուրտ պրիմօչկաներ դնել:

բ.) Լոելիք: Որովհետեւ լոելիքի լոողական և ամենակարե որ մասը փակուած և պաշտպանուած է քնքի ոսկրների մէջ, ուստի նա սակաւ է վըտանգի ենթարկվում, քան տեսանելիքը, բայց և շափազանց դժուար: է հիւանդութիւնների ժամանակ նորան դնելը: Առջեաց որպիս

տին անցքը, որ ականջի խեցիից սկսեալ տարածվում է մինչ թմրիաթաղանթը, զանազան օտար մարմիններ աղտոտու ելու պատճառաւ (բարբակ, միջատներ, հաւաքուած ու չորացած ականջի կեզա) խիստ յածախ ամենայն տեսակ խանգարմանքների կեղրոն է դառնում (բորբոքման, թարախահսութեան, ցաւերի, լսողութեան ծանրանալու, տիկանջի հնչմունքի և խութեան): Ուսի անհրաժեշտ է լսելեաց արտաքին անցքի մաքրութեան մասին հոգալ, իսկ ականջի ցաւերի ժամանակ էլ նորան զդուշաբար հետախուզել: Եատ անզամ հասարակ ականջացաւին օգնում է լսելեաց անցքի մէջը դադջ ջրի սրսկելը: Հարբուխը և նշաճե գեղձերի (բշտիկների) ուռչելը հրբեմն պատճառում են եւսպանեն խողավի փակումը, որից նմանապէս հետեւում են ականջի մէջ հնչումներ և լսողութեան ծանրանալ: Խիստ սաստիկ և սուր մանաւանդ արագ փոփոխուող ձայներով ալրպէս էլ խիստ երկ որ և լսուած ունկնդրութեամբ լողակն ջղէրէ արտաքոյ կարգի զրդուելուց կարող է նոյն ջրերի ամար անդամարուծութեան զրութեան պատճառուել (ականջի շըշուկի, լսողութեան ծանրանալու կամ խըլութեան) հետ: Ով որ ձայնի սաստիկ տալաւորութեանց ենթարկուելու է ստիպուած (ջաղացպաններ, թնդանօթապեաններ), կարող է ձայնի ոյժը թուացնել լսելեաց արտաքին անցքին մէջ մի կառը բամբակ դնելով: Ականջի և զլսի վորայ եղած հարուածները, լսողական ջղերի ցուելու

ու անդամալուծուելու պատճառաւ՝ կարող են լսողութեան թոյլութիւն և խլութիւն պատճառուել:

գ.) Հոտութելիքը հարկաւոր է պարա ու պատշած կերպիւ մաքրել, իսկ երեխայրց, որոնք սիրում են մասներով քիթը խառնել կամ օտար մարմիններ կոխել այնտեղ, պէտք է յետ կանգնեցնել այդպիսի վատ սովորութիւններից: Անշուշտ հոտաւական ջիղն էլ՝ արտաքին զգայարանքների միւս ջղերի նման կարող է անդամալուծուի: արտաքոյ կարգի զրգուամբ (խիստ սաստիկ հօտերով, զրգուիչ գազերով):

դ) Շօշափելիքը մանաւանդ մատերի ծայրերի կաշին, պէտք է պաշտպանել կտրելուց, խիստ սաստիկ տաքից, կամ ցրախից: Եղանգաները պէտք է խիստ ցածր չկտրել (ոչ կրծուել) և պաշաճաւոր կերպիւ մաքուր պահել:

գ. Զայնի ու խօսաւու գործարանի մէջ, որի զլսաւոր գործին էռկոբոն է, առանձին հոգատարութեան արժանի է կոկորդը ծածկութիւններով լսողական այն պատճառաւ որ նաև հեշտ կարող է դառնալ բորբոքման տեղի իւր բոլոր հետեւանքներով: Նոյնպէս հարկաւոր է խնայել մշանականերին էլ, որոնք անհրաժեշտ են ձայն և խօսակցութիւն արտադրելու համար: Կոկորդի մկանունքների հոգատարութիւնը առանձին կարեւորութիւն ունի այն անձանց համար, որք շատ են երգում և բարձ-

րածայն խօսում: Այնպիսի անձինք պէտք է նայեն որ կոկորդի արած աշխատութիւնը աստիճանաբար լինի, որովհետեւ չափազանց լարուելուց ձայնը հեշտութեամբ նստում և նոյն խսկ կորչում է: Կործիւնութեազանը հարկաւոր է պահպանել սուր, աղտոտ օղեց (փոշի, ծուխ և վնասակար գաղեր պարունակող): Բայց մանաւանդ պէտք է խորշել ցուրտ օդ ծծելուց և ցուրտ ջուր խմելուց՝ կոկորդը երգով կամ երկարատեւ խօսակցութեամբ լարելուց յետոյ: Բեռովնադրով ամենալաւ պաշտպանութիւն է ինչպէս կոկորդի, նմանապէս և թռքերի համար: Յրտահարութիւնը (մանաւանդ ոտների և մէջքի) շատ մարդկանց համար հեշտութեամբ խոպտութիւն—կոկորդային հօսում) կը պատճմոի:

Խառնութեան ժամանակ պէտք է հետեւել հետեւեալ կանոններին. որքան հնարաւոր է քիչ խօսալ, շարունակ ծծել միայն տաք մաքուր օդ (ինչպէս ցերեկով, նոյնպէս և գլաւերով), ոչինչ ցուրտ բան չխմել, չուտել ոչ մի գըրգուիչ և սաստկահոտ նիւթեր, մանաւանդ պղպեղ և մանանեխ:

Ը. ԶԲԱՂՄՈՒՆԻՑՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԳԱՑՈ-  
ՂՈՒԹԻՒՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

**ԶԵՐԱՀՆԱԿԻՒԹԵՐԸ**(արուեստ, մասնագիտութիւն) մեծ աղբեցութիւն ունին մարմնի վերայ, որովհետեւ նրանց ժամանակ զիսաւորապէս աշխատումն այս կամայն գործարանները, իսկ մնացեալները մնում են առանց գործունէութեան, և որովհետեւ այս կամ այն ըզբաղմունքների ժամանակ դանազան տեսակ վնասակար աղբեցութիւններ են ներգործում մարդու վերայ:

Եթէ այդ վնասակար աղբեցութեանց գէմը չառնուի, առողջութիւնը շատ թէ քիչ կը վնասուի Ընդհանրապէս այլ և այլ զբաղմունքների ժամանակ մարմնի վերաբերութեամբ կարելի է պահել հետեւեալ կանոնները.

**Վարժմի առաւել գործունեայ մասերը չպէտք** է արտաքոյ կարգի լարուած լինին, բաւականաչափ երկարատեւ հանգստութեամբ և գեղեցիկ սննդառութեամբ նոքա պէտք է կազդուրուին, ինչպէս հարկն է. գրգուիչ միջոցներից սուրճը և թէյլ արժանի են նախապատիւ համարուելու. քան ոգելից խմիչք ները. վնասակար նիւթերի և ընդհանրապէս ախտափիթ պատճառների աղբեցութիւնը ըստ հնարաւորութեան պէտք է հեռացրած լինի:

**Գործունէութիւնը կարող է կամ զիսաւորապէս մտաւոր՝ կամ զիսաւորապէս մարմնաւոր լինել,** թէ ոյս և թէ այն ժամանակ հարկաւոր է ի նկատի առնել. թէ ո՞րքան ժամանակ, մարմնի ինչպիսի գրութեամբ, ինչպիսի շարժմանքներով և ո՞ւր է կատարվում աշխատութիւնը, ինչպէս են օղը ու բարեխառնութիւնը, ինչպիսի նիւթերի հետ պէտք է գործ ունենալ, աշխատողները ի՞նչ սեռի են, ի՞նչ հասակ և ի՞նչ կազմաւածք ունին: Իւրաքանչեար գործաւոր պէտք է լուս ծառօլ լինի այս ներկերին ու նոյն վառարկար յարկութեանցը, որոց հետ ի՞սկը գործ ունի:

ա) Մ տաւոր աշխատութեան ժամանակ ամէնից առաջ պէտք է կարգին վարուել աշխատող գործարանի հետ, այս բանէն հետ: Հարկաւոր է հոգալ բա-

Հականաշափի հուն լինելու մասին, նթէ այդ աշխատութիւնը նստած է կատարվում, այն ժամանակ հարկաւոր է պարտուալատշած շարժմունքներով (մարմնամարզութիւն, զբուանք, մղրախ), երկարատև նստելու վնասի գէմն առնել, Յայտնի է ինքն ըստ ինքեան, որ սննդարար կերակուրը և լաւ օղը անհրաժեշտ են. Գործունեայ մարդը, որ յանդուգն ձեռնարկութիւններ է կատարում, որպէս զի ջղոտութեան վիճակի մէջ չընկնի, աւելի ևս պէտք է խնալէ իւր ուղեղը՝ քանթէ մի սոսկ ուսումնական անձն. Նորան անհրաժեշտ է որ ժամանակ առ ժամանակ դործերից հեռանայ և հանգստանայ առանձնացեալ, անտառացին տեղերում:

Բ Այն շեշտանենէրը, ո. ոյ հոյաց պէտք է լորեւ զգայա - րանքն երը, գործող զգայարանքի համար լաւ իրանամատարութիւն են պահանջում, այսինքն պէտք է զգուշանալ զգայարանքը չափից դուրս լարելուց և նորան բաւականաշափի հանգստութիւն տալ:

Աչէր լորեն ժամանակ, այսինքն մանրիկ առարկաների վերայ (ժամագործներ, քանդակագործներ, գրաչարներ, գրադիրներ), կամ պայծառ լոյսի և գոյնի վերայ երկար նայելու ժամանակ, պէտք է խստիւ հետեւ աչքի առողջապահութեան վերև բացատրած կանոններին. Արտաքոյ կարգի կարեոր է հոգալ հաւասար, ոչ սուր և բաւականաշափ պարզ լուսաւորութեան համար. Այն զործաւորներին, որոնք յաճախ պարտաւորուած են կրակի վրայ նայել, օգտակար է մեծ կապոյտ ապակիներով ակնոցներ ունենալ, նմանապէս և այն մշակներին, որոնք շատ մութ տարածութիւններից յանկարծ կատարեալ ցերեկուայ լուսի մէջ են դուրս զալիս (լուսային մշակներ, գետնափորներ). Լսելիքը նոյնապէս կարող է տկարանալ և անդամալութիւն ձայնի խիստ տպաւորութիւններից (թնդանօթապետներ, ջաղացաններ, դարբիններ և

այն), Խլացուցիչ ձայնների ժամանակ (հարկաւոր է լայն բանալ քերանը, որպէս զի ձայնի ալիքները միայն լսելուաց արտաքին անցքի միջով չբաղսէին թմրկաթաղանթը, այլ նմանապէս եւստախեան փողի միջով էլ)

զ) Կոկորդի լորուած պահանջուղի շեշտանենէրը, զորօր. երգիչների, ճառախօսների, ուսուցիչների, հրամանատարների զբաղմունքները և այլն, ձայնի գործարանի հատկագին վարուել են պահանջում. Կոկորդը լարող անձինք պարտաւոր են յատկապէս ուշաղըրութիւն դարձնել շունչ քաշած օդի վրայ և յանկարծակի ցրտի ներգործութեան չենթարկուին (ցուրտ օդ ծծել ցուրտ ըմպելիք). Արտաքոյ կարգի լարումը, նմանապէս և չնչառական ճանապարհների թեթև տկարութիւնների թոյլ տալը, կարող են կատարելապէս ձայնը խանգարել:

դ) Փոշելից, ծխալից, կամ գաղեր պարունակող անմաքուր օդի հետքորդութեան էնթերուուղ չշունչը պէտք է աշխատեն պաշտպանել այնպիսի օդից իւրեանց չնչառական գործարանը, մանաւանդ թոքերը, դրա համար մշակների բնակարանները որքան կարելի է պէտք է ընդարձակ և մաքուր լինին. Սթէ օդի մաքրութեան չի կարելի հասնել պատուհանները բանալով. հովահարելով, օդածիդ վառարաններով և այլն, այն ժամանակ մշակները պէտք է բերանը եքիթը փակեն սպոնզով, կտաւով կամ րեսպիրատորով. Բացի այդ, նորանց համար անհրաժեշտ է որքան հնարաւոր է մաքրութիւն պահպանել և ամենայն յաջող հանգամանքում ուժով թարմ օդ շնչառնել:

ե) Կենդանային թոյները, որք հիւանդ ընտանի կենդանիներից են պատճառվում և կարող են վերին աստիճանի վտանգաւոր լինել սոքա են. Զբաղվեան լուսն որ լինումէ կատարած շների թուքի (փրփուրի) մէջ, «իբրեւն վշտի լոյն» — խոտակերների վերայ (առաւել ձիւրի, կովերի,

ոչխարների, խոզերի), չկահուբեռեն լոյն՝ ձիերիքթի հոսումի մէջ և բէնդին լոյն (հոտած մաից). Ով որ այդ պեսակ հիւանդուա անասնոց հետ գործ ունի (կենդանաբոյժներ, մսավաճառներ, պայտառներ) և պատրաստում է նրանց արտադրած բերքերը (կաշեգործներ, խաղախորդներ և այլն), պէտք է իւրեան պաշտպանի այդ թոյնով թիւնաւորուելուց, իւր ձեռքերը բեզինի ձեռնոցներով ծածկելով, մանաւանդ եթէ նորանց վրայ վիրաւորուած տեղեր կան, կամ յաճախ անուշատրի ջրով ողողելով.

զ) Մ ե ծ տ ա ք ո ւ թ ե ա ն մէջ աշխատելին, ուր ջերմութիւնից օդի տարածուելուն պատճառաւ աշխատողները սակաւ են թթուածին ընդունում թոքերի մէջ, ոստիկ քրտնում են և շատ ջուր են կորսնցնում արիւնից, անհրաժեշտ է այդ կորուստը լցուցանել առատ ջուր, թոյլ գարեջուր, թթուաշ, բայց ոչ ողելից խմիչքներ խմելով, և յաճախ զով (ոչ խիստ ցարտ) օդ ծծելով: Յաճախ քրտնքից կոշտացող ձեռները պէտք է ժամանակ առ ժամանակ օծել իւղով: Հազուստը պէտք է արձակ և թեթև լինի (բամբակեայ հագուստը լաւագոյն է քաթանից) և աշխատութիւնից յետոյ զգուշաբար պէտք է փոխարինել աւելի տաք հազուստով: Աշխատելու սենեակը պէտք է լաւ հովանարութիւն ունենայ (առանց ընդմիջանց քամու):

է) Ցրտի և խոնաւութեան մէջ աշխատելին անհրաժեշտ է ունենալ տաք, անթափանցող հագուստ, սընընդարար պարարտ կերակուր, ողելից ըմպելիքների չափաւոր գործածութիւն և սաստիկ չարժողութիւն:

ը) Նստակ ան զբանահերից ծագելիք վնասի դէմք առնելու համար, հարկաւոր է աշխատել յաճախ նստական զիրքը կանգնածի փոխել, զգուշանալ հանդերձի ճնշելուց, այդպէս էլ սաստիկ կորանալուց, որքան կարելի է յաճախ ոտի կանգնել, շրջիւ, առաւել,

եթէ կարելի է թարմ օդում: Աշխատութիւնից յետոյ անհրաժեշտ է սաստիկ շարժողութիւններ անել (մարմնամարզութիւն, մղրախ, բիլեարդ, երկար զմօսանք):

թ) Ոյն անձինք, որոնք աշխատում են չափանած կորացած բարձրացնելու, պարտաւոր են յաճախ ուղղուել, ձգուել, մի և նոյն ժամանակ խոր շունչ առնելով և արձակելով:

ժ) Ծունկ կերի վրայ աշխատութեան ժամանակ գործաւորը որքան հնար է պէտք է պաշտպանի իւր ծնկները (փոքրիկ բարձերով):

ժա) Շարունակ կանգնելիս, երբ չկարելի միջոց առ միջոց նստել կամ սարկել, անհրաժեշտ է որ գործաւորը յաճախ շրջիւ, կամ գոնէ շարժի ուները (սաստիկ թեզելով և պարզելով բոլոր յօդերը): Վիւպանների թելով կապելը, կամ սրունքների չափաւոր կապելը, նոյնպէս մի փոքր հեռացնում են մշտապէս կանգնելու վնասակար հետեանքները (արիւնադարձ երակների ընդլայնիլը):

թ. Բնակութեան ՏԵՂԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՌՈՂ-  
ԶՈՒԹԵԱՆ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆ:

Բնակարանը, տեղը և կիման, այսինքն օդը (քոմիներ) և լոյսը, ջերմութիւնը և ցուրտը, չորութիւնը և խօնաւութիւնը, բոյսերը և կենդանիքը՝ այս բոլոր պայմանները, կարող են այնպէս բարդուել, որ վնասակար կերպով կներդործեն մարդուս առողջութեան վերայ:

ա. Բնակարանը անպատճառ պահանջում

է հագում օդ, կարգին լուսաւորութեան, շտփութ ջերմութեան և պարզութ յահագութեան: Այս պահանջաները կարևոր են ոչ միայն նոյն իսկ բնակարանների, այլ և նորանց մօտիկ գանվողների վերաբերութեամբ: Աննպատակայարմար բնակարանի վնասակար հետևանքները, որ երբեմն արտաշյատվում են առողջութեան վերը առ փոքր խանգարմամբ, այնքան առաւել սասափիկ են, որքան աւելի է մնում մարդ այնպիսի բնակարանի մէջ: Վաս կացարանները առաւել վնասակար աղցցութիւն են գործում մանուկների, ծերերի, հիւանդների և առողջացողների վերայ:

Առողջ հնձուանք (տես եր. 94) պէտք է ընդարձակ լինի, նորա միջի օղը ցերեկը պէտք է հովանարուի, նորա մէջ չպէտք է չորացնել մանկական ճերմակեղէնը, ոչ էլ կեղտոտ ճերմակեղէն թողնել և այլն: Մի սենեակի մէջ չպէտք է խիստ շատ թուով մարդիկ քնեն, իւրաքանչիւր չափահաս ննջողի համար առ նուազն հարկաւոր է: 24 քառակուսի ստնաչափ տարածութիւն, իւրաքանչիւր մանուկի—16 ստնաչափ, այնպէս որ 10 ստնաչափ երկայնութիւն և 10 ու. լայնութիւն ունեցող սենեակում չը պէտք է 4 չափահաս մարդուց կամ 6 երեխաններից աւել հոգիք բնեն, բայց այդքառակուսի մակերեսոյթի հետ պէտք է որ բնակարանի բարձրութիւնն էլ 10 ստնաչափից պակաս չլինի:

0 գը հոտո՞ւ է մնում, եթէ բնակութեան սենեակները (մանաւանդ գործաւորների կեցարանները և ննջարանները) բաւականաչափ բարձր և ընդարձակ են, և նորանց մէջ շատ թուով մարդիկ չեն կենում, եթէ ուշադրութիւն է դարձնվում օղի յաճախ նորոգման վերայ (լաւ օգա-

մաքրութիւն) առանց ընդմիջանց քամի գոյանալու, վերջապէս եթէ սենեակների մէջ վնասակար գազեր, արտաշնչութիւններ, փոշի և ծովի չեն մտնում, Այդ մասին բնակարանի մէջ ու նորա մօտերքը աղբ և աղտեղութիւնք գիզուելու առաջը պէտք է առնել և որքան կարելի է շուտով հեռացնել այրուելուց զոյազած գազերը: Լոյսը կենդանաբար ողղեցութիւն է գործում կենսական գործողութեանց վերայ, ուստի լուսաւոր, դէպի հարաւ նալող բնակարանը միշտ պէտք է նախադասել մոռայլ բնակարանից: Ի հարկ է չպէտք է թօզնեն աշգերի վերաբերեալ նախազգուշութիւնները: Առուեստութեան լուսաւոր բաւելուն ժամանակ միշտ գոյանում են շնչալ ու ական գործիքների համար վնասակար գազեր, և այդ մասին սասափիկ և երկար ժամանակ լուսաւորուած բնակարանների օղը յաճախ պէտք է նորոգուի: Մոմի և բնածարակէ մոմիրը երբեմն մկնդեղ են պարունակում, և այն ժամանակ հանգնելուց սխտորի հօտ են արձակում, այդպիսի մոմիրը վնասակար կարող են լինել: Առուեստութեան գուշ պիտանի չէ մանկական սենեակների և ննջարանների համար, այն պատճառաւ, որ նա խիստ շատ թթուածին է մսխում և զիւրութեամբ կարող է, զաղատար խողովակից զուրս գալով, օղը թիւնաւորել, այլ և բռնկում պատճառելու ֆիքսէնը ու հերախը նորանով են վտանգաւոր, որ կտրող են նոյնպէս բռնկում պատճառել, և նոյն իսկ նորանց արտաշնչութիւններն էլ վնասակար են, եթէ ամօւր փակած անօթների մէջ չպահեն նորանց:

Բնակութեան սենեակների, մանաւանդ ննջարանների, ջերմութիւնը միշտ պէտք է չափաւոր լինի (+ 12 մինչ 16° ըստ Բ.) Առեւտինչը արուեստութեան հերոս դաշտական չպէտք է մաքուր օղը ապականուի պրկուի հարկաւոր աստիճանի խոնաւութիւնից: Վա-

ռելիք այրելուց (մանաւանդ ոչ կատարեալ) գոյացած վնասակար գաղերը (ածխածին ու ածխաթթու) պէտք է որքան կարելի է արագ հեռացնուին վառարանների հարկաւոր ձգականութեամբ, Արուեստական տաքացնելը մի և նոյն ժամանակ լաւ միջոց էլ է օդի նորոգման համար, որովհետեւ նա ողը քարշել է տալիս:

Չորութիւնը առողջ բնակարանի զլսաւոր պայմանն է, Երբէք չպէտք է վարձել այնպիսի բնակարան, որը մի քանի ժամ փակած մնալով, աւելի խոնաւութիւն կպարունակի, քան արտաքին օղը, և երբ նորա մէջ ամենայն առարկաներ շարունակ խոնաւանում և բորբոսով ծածկվաւմ են. Սենեակների օդի արդարութեանը, որ մանաւանդ պատահում է օղով տաքացնելու ժամանակ, վնասակար է նոյնպէս, նորա զէմն կարելի է առնել վառարանների վերայ ջրով լիք անօթներ զնելով և թացթաշկինակներ կախելով, Բացի այդ հարկաւոր է յաճախ բանալ պատոհանները:

Սենեանէրի, մանաւանդ նոր և գեռ գէջ բնակարաններում, պարունակած կարող է վնասակար լինել բնակարանում կացողների համար, վնասակար ներկերի (մկնդեղ և պղինձ, չվեճն փուրտեան և շելեւեան կանաչաներկ, որպան կարմիրի կարմին պարունակող) արտաշնչուելովը փոքր առ փոքր թիւնաւորում կարող է պատճառուիւ. Պայծառ գոյները վնասակար են աչքի համար.

բ. Տեղը, ուր բնակփում է մարդ, մարմնի վերայ զնազան աղղեցութիւն է գործում, նայելով թէ զէպի որ կողմէն նա բացուած, լեռան վերայ թէ ձորի մէջ է բնկած, մօտիկ է ջրի թէ ձահիճի, խոնաւ թէ չոր հող ունի; Այսակա պատահում են փոքր կերպերով միեւնոյն տարբերութիւնները, որոնք մեծ չափերով լինում են կիմաների մէջ:

Այնտեղ, ուր օտէ բարեխանութեան և իրաւութեան յաճախ և սաստիկ դոփութեաններ են լինում (առակել երեկոյեան զէմ), ցուրտ առնելուց պէտք է պաշտպանուի համապատասխան հագուստովի Ճահայէն դեւէր, ուր ջրային գոլորշների հետ գոլորշիանում են բուսականն և կենդանային նիւթերի փտութեան արդինքը (ճահճային օդ) սաստիկ անառողջարար են և ընդհապուող ու ճահճային տենդեր են պատճառում: Հարկաւոր չէ բնակուիլ և չործարներէ և, ուր վնասակար գաղեր, գոլորշներ կամ վաշի են գոյանում, թանձը անուան միջի բնակարանը, կամ ծառերի մանձը շարբերի միջի տունը վնասակար են այն տեղերբում տիրապետող խոնաւութեան պատճառաւ, բայց անտառը մի փոքր հեռաւորութեամբ, օգտակար է, որովհետեւ ծառերը արտադրում են թթուածին և պաշտպանում են հաղմերից ու սաստիկ տաքից:

գ. Ալի ման մարդուս վերայ ալ, և ալ աղղեցութիւն է զործում, մանաւանդ նորա մէջ տիրապետող ջերմութեան և ցրտի աստիճանի տարբերութեան պատճառաւ: Կիմաները բաժանվում են այրեցեալ, ցուրտ և բարիխառն կիմաների: Ամենատաք, կամ արեալարձական կիման (26° մինչ 30° ըստ թ.) արեալարձային շրջանակների մէջ ընկած կողմերում է գանվում: Այդ տեղից, երկրի երկու բևեռների ուղղութեամբ, կիմաները հետզետէ չափաւորվում են, այնույնու ցրտում են և ցրտութեան բարձրագոյն աստիճանին (-20° մինչ 30° ըստ թ.) են հանում բևեռների մօտ: Քանի որ բարիխառն գոտուց բնակիչների համար հարկաւոր է միայն պահել առողջապահական ընդհանուր կանոնները, այ-

բեցեալ և ցուրտ կլիմաներում չէ կարելի աչքից  
տալ և մի քանի առանձին նախազգուշութիւն-  
ներ:

Ա. Ե բեցեալ կլիմայում, ջերմ. օդի անօրացած  
լինելուն պատճառաւ, մարդու թթուածին սակաւ է շը-  
շանուում, և այդ պատճառաւ արեան մէջ պէտք է սակաւ  
մտի այնպիսի նիւթեր, որոց փոխակերպութեանը հա-  
մար չառ թթուածին է մսխուում: Այստեղ պէտք է զգու-  
շնալ ոգելից ընպելքների, մսի և իւղի առաւ զործա-  
ծութիւնից: Աատկացեալ արտաշնչութեան պատճառաւ  
միծ քանակութեամբ չուր արտադրուելուն համար,  
արեան մէջ չուր պէտք է չառ մտնի, թէ ոչ հեշտ կարելի է  
ջղաձգութիւն, ստամոքսի և աղիքների բորբոքում պատ-  
ճառուի: Օդի բարեխառնութեան արագ փոփոխութեան  
ժամանակ ցուրտ առնելուց աղատ լինելու համար, հար-  
կաւոր է բամբակէ և բրդէ ճերմակեղին ունենալ և ցըր-  
տից ու խոնաւութիւնից պաշտպանել, մանաւանդ գիշե-  
րով: Այրեցեալ կլիմաներում ճահճային տեղերը ամենա-  
անառողջարարն են:

Բ. Ե ու ային կլիմայում, ուր օդի առաւել խը-  
տաւթեան պատճառաւ արեան մէջ աւելի թթուածին է  
մտնում, պէտք է արեան բաւականաչափ էլ նիւթ մա-  
տակարարել այրման համար: մարմինը այստեղ մնծ քա-  
նակութեամբ սննդարար նիւթերի կարել ունի, ևս առա-  
ւել իւղալի և ոգելից նիւթերի: Բացի այդ սաստիկ ցըր-  
տից և ցուրտ քամիներից պէտք է պաշտպանուած լինին  
մորթը, աչքերը և շնչառական զործարանը:

Բ. Ա Ր Ե Խ Ա Ռ Ո Ն Կ Լ Ի Մ Ա Յ Ո Ւ Մ, սաստիկ տաք ամա-  
ռուայ և սաստիկ ցուրտ ձմեռուայ ժամանակ, մարդ  
պէտք է ուշադրութիւն դարձնէ: Բացի հագուստից, հերու-  
թե վերայ, նոյն իսկ հրմամբ և նոյն իսկ մտքով, ինչ-  
պէս և արևադային ու բևեռային կլիմաներում: Հա-

Քուսութիւններ վերաբերութեամբ, նշանակութիւն ունին օդի բա-  
րեխառնութեան փոփոխութիւնքը, գլխաւորապէս գար-  
նան և աշնան, մանաւանդ երեկոյները: Զպէտք է խիստ  
վաղ հանել ձմեռային հանդերձը և ամառայինը հագնել,  
այլ հետզհետէ մարմինը վարժեցնել առաւել թեթև հա-  
գուստի: Անմիջապէս մարմնի վրայից հագած առաւելնը  
(Փուֆայկա), որ սառելուց պաշտպանում է գլխաւորա-  
պէս մէջքը ու թեատակերը, չափազանց օգտակար է և  
ցրտահարութեան շատ հիւանդութիւններից կարող է  
պաշտպանել: Առողջութեան համար նմանապէս և կարենոր  
է ռուներ ռուն ռուն, թրջած հագուստը անմիջապէս հար-  
կաւոր է վրայից հանել և չորացնել:

Բարեխառն կլիմա ունին: Գրեթէ ամբողջ Եւրոպան՝ իրաց  
առեալ հիւսիսային և հարաւային կողմերի ամենավերջին  
մասերը, Ասիայում՝ ամբողջ արևմտեան մասը, այսինքն  
է Փոքր Ասիա, Պարսկաստանի, Թուրքեստանի, Մօնքով-  
այի նշանաւոր մասերը, հիւսիսային Ջինաստանը և Ճաբո-  
նիան, Ամերիկայում՝ Հիւսիսային—Ամերիկայի նահանդնե-  
րի մեծ մասը, հարաւային կանադան, Մեկսիկանեան սա-  
րահարթակը, նոր Գրենադան, Զիլի, Բոլիվիան և Լա-  
Պլատա նահանդների մեծ մասը:

## Համառօտ խորհուրդներ հիւ- տանդ մարդու համար.

Ա. Բ Տ Ա Բ Ի Ն աշխարհի կողմից մեր մարմին շատ  
վտանգներ են սպառնում: Բայց ճանաչելով մեր  
մարմինը և նորա վերայ ունեցած վկասակար ազդե-  
ցութիւնները՝ կարելի է մեղանից հեռացնել պատահող  
հիւանդութեանց մեծ մասը: Բացի այդ մարդկային

մարմինը այնպէս է կազմուած, որ ցաւաբեր փոփոխութեանց մեծ մասը բռորովին կամ մասնաւորապէս հեռացնվում է՝ կազմուածքի սեպհական ոյժերով, այսինքն կազմուածքը բնական դործունէութեան է վերադառնում առանց բժշկի օգնութեան և բոլորին առանց դեղորայից: Այդ մաքով են ասում բնաւթեան բռնձիչ ոյժերի և գործողաթեանց հասնեն: Ալրանից յետոյ հասկանալի է, որ շատ հեւանդութիւնը առողջանում են առանց ոչ մի բժշկութեան, կամ որ բաղի հիւանդութիւն կարող է բժշկուիլ ամենասուրօրինակ միջոցներով, և որ ամենակոպիտ խարերաները ևս մի քանի հիւանդութիւններ բժշկում են այնպիսի յաջողութեամբ, ինչպէս և ամենահըմուտ բժիշկները:

Օրինակ թէ ինչպէս է բժշկում բնութիւնը նթէ մարմին մէջ փուշ է մտնում և չինանվում այնպից, այն ժամանակ նախ և առաջ նորա շուրջը զումարում է արինը նրբագոյն անօթների մէջ, և այնույեա արեան միջից զուրս է հոսում հիւթ (արտաշնչութիւն), որ երեմն ծրարվում, կարծրանում է, երբեմն փոխվումէ թարախի: Առաջն զիպուածում փուշի շուրջը գոյանումէ մի կարծր, կոշտ զանգուած, որ համարեա քսակի պէս իւր մէջ է փակում փուշը, այն ժամանակ փուշը անվեսա է դառնում և կարող է այնպէս մնալ մարմին մէջ ամբողջ կեանքում: Երկրորդ զիպուածում թարախը կակղեցնում է շրջապատող ոստայնները և զուրս գալու ճանապարհ է բանում իւր համար, զրա հետ միասին և փուշի համար փուշի հեռանալուց յետոյ վերքը փակվում է սպիտվ: Այս բոլորն կատարվում է առանց բժշկական օգնութեան, և ոչ միայն փուշերի հետ, այլ և մարմին մէջ մտած ուրիշ

պինդ մարմինների հետ (գնդակների, ասեղների և այլն): Թոռների բուբոններն ժամանակ թոքային փամփաչտիկները շրջապատող և արեան սաստիկ մեծ քանակութեամբ լքցրած նուրբ անօթիկներից մի թանձր հեղանիւթ է դուրս վաղում նոյն փամփաչտիկների խորշերի մէջ: Այդ հեղանիւթը ծրարվում կարծրանում է, և թոքի մեծ մասից արտաքսում է ամբողջ օղը, այնպէս որ ամբողջ բորբոքեալ տարածութեան վերայ թոքը չէ չնչում: Բայց բնութեան բուժիչ ձգտումների չնորհիւ այդ չնչառութեան անընդունակ թոքը կրկին սկսում է իւր գործունէութիւնը նրանով, որ ծրարուած կարծր զանգուածը կակղելով թարախի նման հեղանիւթի է փոխվում, որը մասամբ զուրս է ձգվում հաղալով, մասամբ ներս է ծըծվում, և այդպիսով թոքը առողջանում է:

Թոռների բուբոնների ժամանակ էլ բնութիւնը շատ անգամ զարմանալի կրալով օգնութիւն է ցոյց տալիս: Զիօնալով արդէն այն մասին, որ թոքի մէջ երբեմն յանկարծ զաղարում է նորան աւերող խաճոյանման զանգուածի գոյանալը, որ հալուելով նեխած խուփի է փոխվում, այլ և զեռ առողջ թոքն էլ երբեմն պաշտպանվում է աւերուելոց: Խնչպէս որ փուշի շուրջը, այնպէս էլ թոքի թարակացաւով բռնած մասի շուրջը, բորբոքման պատճառաւ, կարծր սպիանման զանգուած է գոյանում, որը մասամբ ծառայում է ինչպէս անթափանցիկ սահման թոքի առողջ և հիւանդ բամինների մէջ, մասամբ փակում է արինատար անօթներին, այնպէս որ արդէն հեշտ չէ կարող մահացու արինահոսութիւն պատահել, մասամբ վերջապէս, թոքը միաւորում է կըրծքի պատի հետ, որով անհնար է դառնում թոքերից լանջախորշի մէջ օղի մահառիթ մտնելը: Այս բոլոր գործողութիւնները գեղորացքից կատարեալ անկախ են կատարվում: Կամաւութեան ժամանակ, որի հետ հիւանդի մարմինը մի

մասը անդամալուծվում է, պայթում են ուղեղի միջի արինատար անօթները և նրանցից հոսող արինը արգելում է ուղեղի այն մասի գործունէութիւնը, որից մարմինի անդամալուծեալ կիսամասի մէջ ջղեր են դնում, Երբ հոսած արինը հեռանայ, այն ժամանակ կանյայտանայ անդամալուծութիւնն էլ, որով և կաթուածահարը կատարեալ կառողջանայ: Արինի այդ հեռանալը բացառապէս ընութեամբ է լինում, առանց ոչ մի օգնութեան բժշկի կողմանէ:

Թե՛թե արինանկառաւթիւնները եթէ դադարում են ինքն ըստ ինքեան՝ այդ նրանից է, որ վնասուած՝ արին թափող անօթները ծրաբուղ արինով սեղմիում և փակվում են. Ով հաւատում է արին բեկելուա, նա զուրկ է մարդկային խելքից:

Հիւանդին խոհեմ պահեցողական կանոններով պահպանելով՝ նշանաւոր կերպով կարելի է օգնել բնութեան բուժիչ գործողութեանց: Պահեցողական կանոններն էլ խոհեմարդար են միայն այն ժամանակ, երբ նոքա խսկապէս համապատասխան են հիւանդութեան իրաքանչիւր առանձին դիսուածին: Բոլո՞ հիւանդութեանները միեւույն միջնորդ, միեւույն եղանակութշնելուց (զորոր. ցոր. ջրով) ոչինչ ուելի տնօնանութեան չկայ. Եթէ շատ հիւանդներ դեռ այնպէս հաւատում են գորդոնի միջնորդների զօրութեան և անգէտ կատելուների արած օգնութեան, այդ ամենից լաւ ապացոյց է թէ հասարաւութեան մեջ զեռ որբան մեծ է աղիտութիւնը՝ մարդկային մարմին մէջ կատարուով գործողութեանց վերաբերութեամբ:

Պահեցողական հանդիններով բնութեան բուժիչ գործութեանները պահպաններու, ընդհանրապէս հիւանդու-

թիւնք բժշկելու համար, գլխաւոր օրէնքը այսպէսէ.

Հիւանդ մասը որք ան կարելի է զգուշաբար պէտք է խնամել:

Այսպէս զորօր. հիւանդ ոտքերով չպէտք է պար գալ կամ ոստնուլ, հիւանդ յօդերով պէտք չէ ոչ մի լարեալ շարժում անել, հիւանդ կոկորդով (խոպոտ եղած) հարկաւոր չէ երգել և բղաւել խանգարեալ ստամբը պէտք է պահպանել առատ, ամուր, դժուարամարս կերակրից, հիւանդ աչքը պէտք է պաշտպանել փայլուն լոյսից, հիւանդ թոքերը փոշելից, ծխալից օդ չպիտի ծծեն, մարմնաւոր լարեալ շարժմանըներով չպէտք է սաստկացած լինի շնչառութիւնը և այն և այն: Ամենայն ներքին հիւանդութեանց ժամանակ, հենց որ հիւանդը իրեն վատ և տենդացին վիճակի մէջ զգայ (արագ դարկերակի, միսացնել, տաքութիւն, յաճախեալ շընչառութիւն), խիստ կարևոր է որբան կարելի է շուտ պարկել անկողնի մէջ, ծծել բարեխառն ջերմ և բոլորովին մաքուր օդ, հեռանալ ամենայն տեսակ զրդումներից (նոյնպէս փայլուն լոյսից և աղաղակից), ընդունել քնքոյշ կերակուր և զգալի պահանջողութեան նայած շատ թէ քիչ ցուրտ կամ տաք ընկերք (առաւել լաւ է ջուր): Ամենայն վնասանութենքի ժամանակ (վերքեր, ջարդուածներ, դուրս ընկածներ, ոսկրի խորտակումներ, այրում, ցըրտատարութիւն) լաւագոյն միջնորդը որ բոլորից առաջ պէտք է գործածածած ցուրտն է՝ ցուրտ պրիմուկաների, սասայցի, ձիւնի կամ, պարզապէս ցուրտ ջրի

կերպերով։ Թաղթակ հապուլ վերտերը ու խոցերը մեծ իստակութիւն են պահանջում, ուստի ամենից առաջ պէտք է նորանց յաճախ լուանալ տաք ջրով։ Բամբակով կամ կարբօլեան ջրով թրջած քաթանով (կօմպրէս) վերքերի ծածկելը խիստ օգտաւէտ է, որովհետեւ բամբակը թոյլ չէ տալիս օդից օտարաբոյսերի (ալարազիս) սերմեր անցնի, իսկ կարբօլեան ջուրը սպանում է այդ սերմերին։ Անոտյն աեսով ցաւերի ժամանակ շատ լաւ է օդնում ջերմութեանը՝ ջրալի կամ չոր պրիպարկաների ձևով (ջրից, կաշից, աւազից և այլն)։ Աչքերի և ականջների ցաւելուն պէս, առանց յիտաձգութեան հարկաւոր է դիմել յասկապէս այդ տեսակցաւերով պարապող բժշկի օդնութեան։



ԳՐԲՈՅԿԻՍ ՄԵԶ ՀԱՆԴԻՊՈՂ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

**Ալկօլ**, աես զինույ ոգի։  
Ածխածին, углеродъ.

Ածխային թթու, уголь-  
ная кислота.

Ածխաջրածին, углево-  
дородъ.

Աղեթափութիւն, աես.  
փոշտանկութիւն։

Անդամալութութիւն, па-  
раличъ.

Ալիչ, лимфа.

Բորոտութիւն, քոսո-  
տութիւն, чесотка.

Բջիջաւոր, клютчатый.

Բևեկինի իւղ, մաքրած

սկիսիդար, терпентин-

ное масло.

Գիհոյ պառող, ալղի-

ջիթափ պառող, моз-  
жеволовая ягода.

Գինոյ ոգի, սպիրտ։

Գոնջութիւն, քոս, пар-

ша.

Գոնդող, желе.

Գոներակ, воротная ве-

на.

Եղերակ, шалфей.

Երշիկ, կալբաս։

Թաղանթ, բարակ կա-  
շի, փառ, оболочка.

Թթուածին, кислородъ.

Թմբկաթաղանթ, бара-  
банная перепонка,

Իւղարտադրիչ, жирооб-  
разователь.

Լորձինոտ թաղանթ,  
слизистая оболочка.

Խաճոյ, творогъ.

Խարանադեղ, шпан-  
ская мушка

Խեցգետին, չարչանդ կամ  
քարժանդ, ракъ.

Ծծմբախառ - ջրածին,  
сърнисто-водородъ.

Կլան, глотка.

Հարոցք, пахтанье.

Մազային անօթ, вое-  
лосный сосудъ.

Մանրաթելանիւթ, вое-  
локнина.

Մեկան, խաշխաշ։

Ցորժուբային գեղձ, те-  
лячий молоки.

Ցօդացաւութիւն, քամի,  
ռեվմատիզմ։

Նիւթերի փոխանակու-  
թիւն, обмънъ вещес-  
твъ.

Նշագեղձ, миндалевид-  
ная железа.

Ոստայներ, ткани.

Սոսորդ, зъвъ.

Սպիտակուցանիւթ, бел-  
ковина.

Սոսինձ, клей.

Սօնձանիւթ, клейко-

вина.  
**Փոշտանկութիւն,** **ա-**  
**զլքների տեղից լինելը,**  
 грыжа

---

Фռագեղձ, подъезлу-  
 дочная железа.  
**Օպա, նիշաստա,** **կրախ-**  
 мա:

ՏՊԱ. Դ. Բ ՈՒ ԹԵԱ. Ս ԽԱ. Լ Ն Ե Բ.			
Երևա	առղ	սիմալ	ուղիղ
13	18	պի-	պիտանի
15	11	(կաթեց)	(կաթնային)
»	14	սպիտակուցային	սպիտակուցային
»	28	Ծրարի	Ծրարու ածի
17	21	որականութիւնն	որակութիւնն
21	4	գոլորշիութիւն	բուռշիութիւն
22	15	կապէս	կապէս
25	25	թղին	թղինը
30	9	աղերով	աղելով
33	6	հացահատիկների	հացահատիկները
»	7	նիւթերը միւնոյն նիւթերի միւնոյնքա- յատկութիւնը	նակութիւնը
37	28	ալեւրէ	ալեւրային
39	8	միջակ	միջուկ
45	12	արժան	աժան
46	4	այլ	այդ
54	5	անչափ	անչափ
65	18	թղի-	թղյլ
70	19	օղը	օդ
79	13	քրի	քրսի
96	23	ուսնի	լուսնի
109	12	շնչալ	շնչա-

9 1/2 35 1/2

925

2

2013

«Ազգային գրադարան



NL0071875

